

**ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ
ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ
6-10 տարիքային խումբ**





Սույն ուղեցույցը ստեղծվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Ներկայացված տեսակետները պատկանում են հեղինակներին, և պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը: ՅՈՒՆԻՍԵՖ-ն աշխատում է, որպեսզի Հայաստանում յուրաքանչյուր երեխա լինի սիրված, սնված և խնամված: Հիմնվելով ավելի քան 75 տարվա միջազգային փորձի և Հայաստանի երեխաների համար 30 տարվա հաջողությունների վրա՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ը պարտավորություն է ստանձնում բարելավելու ամենախոցելի՝ աղքատության և մեկուսացման մեջ ապրող երեխաների կյանքը:

Ստեղծման պահից ի վեր ՅՈՒՆԻՍԵՖ-ն ամբողջությամբ ֆինանսավորվում է անհատների, մասնավոր հատվածի, հիմնադրամների և կառավարությունների կամավոր նվիրատվություններով:

Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործունեությանը ծանոթանալու համար այցելեք www.unicef.am և www.babycef.am կայքերը:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ

ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԵՎ

ԳՈՐԾԻՔԱԿԱՂՄ

6-10 տարիքային խումբ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2024

ՀՏԴ

ԳՄԴ

Սվաջյան Ա. Հ. Ադամյան Հ. Ա., Մարգարյան Լ. Հ., Գարեգինյան Ա. Ա., Մուրադյան Ռ. Մ, Գրիգորյան Օ. Կ. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթաց և գործիքակազմ, 6-10 տարիքային խումբ» մեթոդական ուղեցույց. - Երևան: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2024. - 215 էջ:

Սույն ուղեցույցը մշակվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ՝ Օքսֆորդ Փոլիսի Մենեջմենթ ինստիտուտի միջազգային փորձագետներ Անդրեաս Կարիստինոսի, Սոֆիա Կուկովինուի և Ստատիշ Տրիանտաֆիլուի փորձագիտական խմբի կողմից իրականացվող «Հատուկ կրթության և զարգացման կարիքների գնահատման վերանայում» ծրագրի շրջանակներում՝ Ռուսաստանի Դաշնության ֆինանսական աջակցությամբ:

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 09.02.2024 թվականի 196-Ա/2 հրամանով՝ որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Հեղինակներ՝

Արաքսիա Հովհաննեսի Սվաջյան

Հայկուիի Արտաշեսի Ադամյան

Լիանա Հովհաննեսի Մարգարյան

Անի Արմենի Գարեգինյան

Ռուզաննա Մովսեսի Մուրադյան

Օֆելյա Կարենի Գրիգորյան

Մասնագիտական խմբագիր՝ մ.գ.թ., դոցենտ Արաքսիա Հովհաննեսի Սվաջյան

Գրախոսներ՝

Մարիաննա Ռուբենի Հարությունյան

Սիրանուշ Գևորգի Կարապետյան

Խմբագիր՝ Հայկանուշ Անատոլի Սարգսյան

Համակարգչային ձևավորում՝ Դավիթ Գեղամի Խուդավերդյան

Հեղինե Լյովայի Դավթյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երախտիքի խոսք	5
Հասկացությունների բառարան	6
Նախաբան	8
Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում	9
Գնահատման նպատակն ու խնդիրները	9
Գնահատման գործընթացի մասնակիցները	9
Գնահատման գործիքակազմ	10
Գնահատման գործընթաց	11
Հավելվածներ	20
Տեղեկագրեր	21
Առաջադրանքներ	29
Աշխատանքային տետր	163
Խթանիչ նյութեր	171
Նկար - քարտեր	171
Խաղեր և պարագաներ	188
Գնահատման չափանիշներ	190
Գրականություն	214

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթաց և գործիքակազմ» մեթոդական ուղեցույցը մշակվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի համագործակցությամբ իրականացվող «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության համակարգի կատարելագործում» ծրագրի շրջանակներում:

Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետներին կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործիքակազմի մշակման և դրա տեղայնացման աշխատանքներում ունեցած նշանակալի ներդրման համար:

Կրթության առանձնահատուկ պայմաններ՝ անձի հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպաստակառուղիված առարկայական ծրագրերի և ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական և այլ ծառայությունների ամբողջություն:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ՝ խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության և այլ խնդիրներով պայմանավորված՝ ուսուցման հետ կապված դժվարություններ ունեցող, ինչպես նաև բացառիկ ընդունակություններ ունեցող անձ, որին հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումներ:

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում՝ անձի կրթական ծրագրերին մասնակցության դիտարկում, երեխայի զարգացման հնարավորությունների բացահայտում և կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանում:

Ներառական կրթություն՝ յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովում:

Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն՝ երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատող, կրթությանն աջակցող մանկավարժահոգեբանական և այլ օժանդակող ծառայություններ մատուցող կազմակերպություն:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ՝ ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցություն, որը ցուցաբերվում է սովորող երեխային, նրա ծնողին և մանկավարժական աշխատողին:

Անհատական ուսուցման պլան՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (ներառյալ՝ աջակցող ծառայությունները):

Աջակցող միջոցներ՝ ցանկացած ապրանք, գործիք, սարք կամ տեխնոլոգիա, որը հարմարեցված կամ հատուկ կերպով նախագծված է հաշմանդամություն ունեցող անձի ֆունկցիոնալությունը բարելավելու համար: «Աջակցող միջոցներ» եզրույթը չի ներառում բժշկական սարքավորումները, որոնք բժշկական միջամտությամբ փոխապատվաստված են կամ փոխարինողն են որևէ սարքի:

Խելամիտ հարմարեցում՝ անհրաժեշտ և համապատասխան փոփոխությունների և հարմարեցումների (շտկումների) կատարում, որոնք չեն առաջացնում անհամաչափ կամ անհարկի բեռ և ուղղված են հաշմանդամություն ունեցող անձի՝ մարդու իրավունքներից և հիմնական ազատություններից մյուսների հետ հավասար հիմունքներով օգտվելուն:

Գնահատող խումբ՝ սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում իրականացնող մանկավարժական աշխատողների խումբ:

Հասարակության կայուն և շարունակական զարգացման կարևոր նախապայմաններից մեկը հումանիստական սկզբունքների, համամարդկային արժեքների և մատչելիության չափանիշների հիման վրա իրականացվող որակյալ կրթության ապահովումն է յուրաքանչյուրի համար: Անհերքելի է, որ հասարակությունը բազմազան է, և որ յուրաքանչյուր անհատ առանձնահատուկ է: Կրթության գործընթացի արդյունավետ կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ է բավարարել սովորողների բազմազան կարիքները՝ դրանով իսկ նպաստելով կրթության գործընթացում նրանց ակտիվ մասնակցությանն ու ներգրավվածության ընդլայնմանը:

Այս համատեքստում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը (այսուհետ՝ գնահատում) կարևոր գործընթաց է, որի ժամանակ դիտարկվում է երեխայի մասնակցությունը կրթական ծրագրերին, բացահայտվում են նրա զարգացման հնարավորությունները, սահմանվում են կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմաններն ու խելամիտ հարմարեցումները:

Սույն ուղեցույցը ստեղծվել է գնահատման գործընթացի սահուն և արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով: Այն նախատեսված է բոլոր նրանց համար, ովքեր աշխատում են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում: Ձեռնարկը հատկապես մեծ կիրառում կունենա սովորողի գնահատման գործընթացում ներգրավված մասնագետների շրջանում՝ հատուկ մանկավարժներ, սոցիալական մանկավարժ, հոգեբան:

«Նախադպրոցական կրթության մասին» և «Հանրակրթության մասին» օրենքների համաձայն առանձնացվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման 8 տեսակի գործիքներ (խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության) ըստ 5 տարիքային խմբերի, ընդհանուր առմամբ՝ 40 փաթեթ: Գնահատման գործիքները ներառում են առաջադրանքներ, աշխատանքային տեսրեր, խթանիչ նյութեր 3-5, 6-10, 11-14, 15-18, 19 և բարձր տարիքային խմբերի համար:

Սույն ուղեցույցը հնարավորություն է տալիս առավել մանրամասն ծանոթանալ 6-10 տարիքային խմբի երեխաների գնահատման ընթացակարգին, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործիքակազմին և դրա կիրառման մեթոդաբանությանը:

Ուղեցույցի «Հավելվածներ» բաժնում ներկայացված է 6-10 տարիքային խմբի երեխաների գնահատման ընթացքում կիրառվող գործիքակազմն իր բոլոր բաղադրիչներով՝ գնահատման տեղեկագրեր, գործիքներ (առաջադրանքներ, աշխատանքային տեսրեր, խթանիչ նյութեր), չափանիշներ:

Գնահատման նպատակն ու խնդիրները

Սովորողի գնահատումն իրականացվում է հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ կրթության առանձնահատուկ պայմանները, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումները սահմանելու նպատակով:

Գնահատման հիմնական խնդիրն է խթանել կրթության մատչելիության, ներառականության, որակի ու արդյունավետության ապահովումը, սահմանել սովորողի համար անհրաժեշտ խելամիտ հարմարեցումները, աջակցության ծառայությունները, ինչպես նաև առաջարկել հարմարավետ և մատչելի միջավայրային պայմաններ:

Գնահատման գործընթացի մասնակիցները

- Սովորող
- Ծնող
- Ուսուցիչ
- Գնահատող խումբ (հատուկ մանկավարժներ, սոցիալական մանկավարժ, հոգեբան)
- Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրենի տեղակալ
- Ուսումնական հաստատության տնօրենի տեղակալ

Գնահատումը համագործակցային գործընթաց է, որին ներգրավվում են ինչպես տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մասնագետները և մանկավարժները, այնպես էլ սովորողը, նրա ծնողը, նրան դասավանդող ուսուցիչները և մանկավարժական այլ աշխատողներ սովորողի կրթության վայր հանդիսացող ուսումնական հաստատությունից:

Սովորողի և նրա ծնողի մասնակցությունը գնահատման գործընթացին կարևորվում է նրանով, որ վերջիններս կարող են արժեքավոր տեղեկատվություն տրամադրել դպրոցից դուրս սովորողի հետաքրքրությունների, նախասիրությունների, ուժեղ կողմերի կամ դժվարությունների մասին:

Ուսուցիչների ներգրավվածությունը նշված գործընթացում կարևորվում է, քանի որ նրանք կարող են հստակ նշել սովորողի ուսումնառության ընթացքում արձանագրված կայուն դժվարությունների, նրա կարողությունների, հմտությունների, ուսումնական գործընթացին խոչընդոտող և խթանող պայմանների մասին: Այս ամենը հնարավորություն է տալիս լինել առավել օբյեկտիվ և հստակ սահմանել կրթության առանձնահատուկ այն պայմանները, որոնք անհրաժեշտ են տվյալ սովորողին:

Տվյալ սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատող մանկավարժական աշխատողների խմբում ընդգրկվում են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի առնվազն երկու մանկավարժ (հատուկ մանկավարժ և սոցիալական մանկավարժ) և մեկ հոգեբան: Ըստ անհրաժեշտության՝ գնահատող խմբում կարող են ներգրավվել նաև այլ մանկավարժներ և մասնագետներ: Գնահատող խումբը ձևավորվում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրենի հրամանով¹:

Գնահատման գործընթացին ներգրավված է նաև տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրենի տեղակալը, ով ղեկավարում է և պատասխանատու է ողջ գործընթացի սահուն և օբյեկտիվ իրականացման համար: Ուսումնական հաստատության տնօրենի տեղակալը պատասխանատու է սովորողի գնահատման գործընթացի կազմակերպման և համակարգման համար:

Գնահատման գործիքակազմ

- Գնահատման տեղեկագիր
- Գնահատման գործիքներ՝
 - առաջադրանքներ
 - աշխատանքային տետրեր
 - խթանիչ նյութեր
- Գնահատման չափանիշներ

Գնահատման տեղեկագիր

Գնահատման տեղեկագրերը (Հավելված 1) գործիքակազմի բաղկացուցիչ մաս են, որտեղ ներառված են սովորողների տվյալ տարիքային խմբի համար վճռորոշ և նրանց զարգացման առանձնահատկություններին համապատասխան ընտրված գործունեության 25 տեսակ, որոնք արտահայտված են նաև Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման ծածկագրերով:

Գնահատման գործիքներ

«Հանրակրթության մասին» օրենքի համաձայն առանձնացվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման 8 տեսակի **գործիքներ** (խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության): Գնահատման գործիքները ներառում են առաջադրանքներ, աշխատանքային տետրեր, խթանիչ նյութեր 6-10 տարիքային խմբի համար:

- **Առաջադրանքների** յուրաքանչյուր փաթեթ կազմվել է՝ հաշվի առնելով երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունները, ինչը

¹ «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ», ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N 370-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 88-Ն հրաման

հնարավորություն է տալիս օբյեկտիվորեն գնահատել նրանց կարողություններն ու հմտությունները (Հավելված 2): Հարցաշարի կիրառման արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը, ինչպես նաև տվյալ կարողության և հմտության ոլորտի համար սահմանված ընդհանրական միավորը նշվում է համապատասխան տեղեկագրում:

- Գործիքակազմում ներառված **աշխատանքային տեսորերը** կազմված են հարցաշարերում ընդգրկված հարցերի և առաջադրանքների հիման վրա (Հավելված 3): Յուրաքանչյուր տարիքային խմբի աշխատանքային տեսորում ներառված են տվյալ տարիքային խմբի բոլոր 8 տեսակի հարցաշարերի առաջադրանքները: Աշխատանքային տեսորում բոլոր առաջադրանքները համարակալված և խմբավորված են ըստ ծածկագրերի: Տեսողության խնդիրներ ունեցող սովորողների համար աշխատանքային տեսորերն, ըստ անհրաժեշտության, կարելի է տպագրել ավելի մեծ տառաչափով՝ ապահովելով նյութի հասանելիությունն ու մատչելիությունը:
- Գործիքակազմի բաղկացուցիչ մաս են կազմում **խթանիչ նյութերը** (դիդակտիկ նյութեր, խաղեր, նկարներ և այլն), որոնք անհրաժեշտ են որոշ առաջադրանքների կատարման համար (Հավելված 4): Հարցաշարերում կոնկրետ առաջադրանքների համար անհրաժեշտ խթանիչ նյութերի վերաբերյալ նշումն արված է համապատասխան սյունակում:

Գնահատման չափանիշներ

Սովորողների 6-10 տարիքային խմբի համար վճռորոշ հանդիսացող և տեղեկագրում ներառված գործունեության տեսակները գնահատելու, դրանց համար հստակ միավոր սահմանելու և արդյունքում սովորողին անհրաժեշտ կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման աստիճանը սահմանելու համար կիրառվում են գնահատման չափանիշներ (Հավելված 5), որոնք տրված են 0-4 միավորային սանդղակով²:

Գնահատման գործընթաց

- սովորողի կրթական ծրագրերին մասնակցության դիտարկում
- սովորողի զարգացման հնարավորությունների բացահայտում և գնահատում
- կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանում

Սովորողը կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ներկայացվում է այն ժամանակ, երբ նրա մոտ նկատվում են ուսումնառության հետ կապված կայուն դժվարություններ, որոնք խանգարում են իր կարողությունների չափով մասնակցություն ունենալ ուսումնական գործընթացում: Նման դժվարությունները

² Գնահատման չափանիշների միավորային սանդղակի նկարագրությունը առավել մանրամասն ներկայացված է ուղեցույցի «Գործիքի կիրառում և առաջադրանքների գնահատում» ենթավերնագրում:

բացահայտվում են ուսումնական հաստատության մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից, որի կազմում կարող են ընդգրկված լինել սովորողին դասավանդող ուսուցիչները, դասղեկը, ուսուցչի օգնականը, երկարօրյա խմբերի մանկավարժական աշխատողները, հոգեբանը և մանկավարժական այլ աշխատողներ: Նշված մասնագետների կողմից ուսումնական գործընթացում իրականացվող շարունակական դիտարկումների և գնահատումների արդյունքում հավաքագրված տեղեկատվության վերլուծության արդյունքում որոշում է կայացվում, սովորողին ներկայացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման: Հարկ է նշել, որ ուսումնական հաստատության մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից սովորողի ուսումնառության արդյունքների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունն արձանագրվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված ձևաթղթի³:

Սովորողի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն իրականացվում է երեք փուլով:

Փուլ 1. Սովորողի՝ կրթական ծրագրերին մասնակցության դիտարկում

Սովորողի մասին օբյեկտիվ տեղեկատվություն հնարավոր է հավաքագրել տարբեր միջավայրերում դիտարկումների, ուսուցիչների, ծնողների և սովորողին քաջատեղյակ այլ անձանց հետ զրույցների, ինչպես նաև սովորողի աշխատանքային տեսրերի ուսումնասիրության արդյունքում:

Գնահատման գործընթացի շրջանակում կրթական ծրագրերին սովորողի մասնակցության դիտարկումն ու նրա զարգացման հնարավորությունների բացահայտումն իրականացվում է գնահատող խմբի կողմից: Դիտարկման գործընթացն իրականացվում է սովորողի ուսումնական հաստատությունում՝ դասերի, դասամիջոցների, տարատեսակ միջոցառումների և խաղերի ընթացքում: Դիտարկման փուլի համար հստակ ժամանակահատված սահմանված չէ: Հաշվի առնելով սովորողի կարողությունները, դժվարությունները և զարգացման առանձնահատկությունները՝ գնահատող խումբն ինքն է որոշում, թե որքան ժամանակ է տևելու դիտարկման փուլը:

Գնահատման գործընթացի այս փուլն առավել քան կարևոր է, քանի որ այս ընթացքում հավաքագրված տեղեկատվության հիման վրա գնահատող խումբը գործիքակազմից ընտրում է այն հարցաշարերը, որոնցով շարունակելու է աշխատանքը: Այդ իսկ պատճառով դիտարկման ընթացքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել սովորողի ակադեմիական գիտելիքներին, տեսողության և լսողության զգայարանների նպատակային կիրառմանը, հաղորդակցման հմտություններին, հուզականային և վարքային դրսևորումներին, սոցիալական ներառմանը, շարժունակությանը և առողջական վիճակին:

Ինչպես արդեն նշվել էր նախորդիվ, սովորողի գնահատման արդյունքում առավել օբյեկտիվ միավորներ ստանալու և նրա կրթության առանձնահատուկ պայմանների կարիքն ու անհրաժեշտ մանկավարժահոգեբանական ծառայությունները հստակ

³ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N 370-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 88-Ն հրաման՝ Ձև 9:

սահմանելու նպատակով գնահատող խումբը տեղեկատվություն է հավաքագրում նաև սովորողի ծնողներից և ուսուցիչներից: Վերջիններիս հետ զրույցի ընթացքում կարևոր է, որ հարցերը ձևակերպվեն հստակ, ինչը կօգնի ստանալ երեխային բնութագրող առավել ճշգրիտ տեղեկատվություն:

Սովորողի ուսումնառության արդյունքների վերաբերյալ ամփոփ նկարագիրը, որը ուսումնական հաստատության դիմումի, ծնողի ստորագրած համաձայնագրի⁴ և մի շարք այլ փաստաթղթերի հետ միասին ներկայացվում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն, պետք է մանրամասն ուսումնասիրվի գնահատող խմբի կողմից: Ուսուցիչներն այս ձևաթղթում ամփոփ ներկայացնում են սովորողի ուսումնառության ընթացքում արձանագրված կայուն դժվարությունների կամ դրսևորած բացառիկ ընդունակությունների, ինչպես նաև սովորողի գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների ստուգման նպատակով իրականացված հայտորոշիչ և ձևավորող գնահատման ընթացքում հավաքագրած տեղեկատվությունը: Հարկ է նշել, որ այս նկարագրության մեջ առկա տեղեկատվությունը ևս կարող է կարևոր և վճռորոշ դեր ունենալ կրթության առանձնահատուկ պայմանների և խելամիտ հարմարեցումների սահմանման ժամանակ:

ԿԱՐԵՎՈՐ

Կրթական ծրագրերին սովորողի մասնակցության դիտարկման, ծնողների, դասավանդող ուսուցիչների և սովորողին քաջատեղյակ այլ անձանց հետ զրույցների, ինչպես նաև նրա աշխատանքային տեսրերի ուսումնասիրության արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը պետք է լինի բազմակողմանի և օբյեկտիվ, որպեսզի հաջորդիվ ընտրվեն տեղեկագրեր, որոնք առավելագույնս կբխեն սովորողի կարիքներից:

Փուլ 2. Սովորողի զարգացման հնարավորությունների բացահայտում և գնահատում

▪ **Գործիքակազմի ընտրություն**

Գնահատման գործընթացի երկրորդ փուլը սկսվում է տեղեկագրերի և համապատասխան գործիքների ընտրությամբ, որի համար հիմք է հանդիսանում գնահատման առաջին փուլում իրականացված դիտարկման արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը: Գնահատման գործընթացում կիրառվող տեղեկագրերի ընտրությունն իրականացվում է՝ հաշվի առնելով սովորողի տարիքը և զարգացման առանձնահատկությունները: Օրինակ՝ եթե երեխան միաժամանակ ունի շարժունակության, ինտելեկտի (մտավոր) և լսողության հետ կապված խնդիրներ, ապա նրա գնահատումն իրականացվում է ըստ 3 տեղեկագրերի և դրանց համապատասխան գործիքների:

⁴ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N 370-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 88-Ն հրաման՝ Ձև 5, Ձև 6, Ձև 7

▪ **Գործիքի կիրառում և առաջադրանքների գնահատում**

Տեղեկագրերի ընտրությունից հետո սկսվում է համապատասխան գործիքների կիրառումը: Հարկ է նշել, որ հարցերը և առաջադրանքները երեխային կարող է ուղղել գնահատող խմբի անդամներից որևէ մեկը՝ այն մասնագետը, ով պատասխանատու է տվյալ ոլորտի գնահատման համար, կամ նա, ով ավելի արդյունավետ առաջնային կոնտակտ է հաստատել երեխայի հետ և վստահության է արժանացել վերջինիս կողմից: Գործիքներում առկա հարցերը գնահատող մասնագետներն ըստ անհրաժեշտության կարող են ուղղվել ոչ միայն երեխային, այլ նաև ծնողին կամ երեխային քաջատեղյակ այլ անձի:

Հարկ է նշել, որ գործիքներում ներառված առաջադրանքներն ունեն կիրառման որոշակի առանձնահատկություններ.

- Գործիքներում ներառված առաջադրանքները կիրառելի են տվյալ տարիքային խմբի բոլոր երեխաների համար, սակայն որոշ առաջադրանքներ տրված են ըստ կոնկրետ տարիքի և ունեն համապատասխան նշում, օրինակ՝ 3-5 տարիքային խմբի համար նախատեսված գործիքում նույն ծածկագրի համար կան առաջադրանքներ՝ նախատեսված միայն 3 տարեկան երեխաների և առաջադրանքներ՝ միայն 4-5 տարեկան երեխաների համար:
- Գործիքներում որոշ առաջադրանքներ տրված են այլընտրանքային «ա» և «բ» տարբերակներով, որոնք գնահատում են միևնույն կարողությունն ու հմտությունը: Նման դեպքերում կիրառվում է առաջադրանքի կա՛մ «ա», կա՛մ «բ» տարբերակը՝ հաշվի առնելով երեխայի զարգացման առանձնահատկությունները:
- Արձանագրություններում կան առաջադրանքներ, որոնք աստղանշված են մեկ (*) կամ երկու աստղանիշով (**): Մեկ աստղանիշով առաջադրանքները պահանջում են այլընտրանքային լուծումներ և մոտեցումներ, որոնք տրված են տվյալ առաջադրանքների հետ: Բոլոր այն դեպքերում, երբ հարցաշարում ներկայացված այլընտրանքային լուծումները բավարար չեն լինի կամ չեն բխի երեխայի կարողություններից ու հնարավորություններից, ապա անհրաժեշտություն կառաջանա, որպեսզի գնահատող խումբը գտնի բոլորովին այլ այլընտրանքային լուծումներ, որոնք կօգնեն երեխային առաջադրանքի կատարման ընթացքում և կբացահայտեն նրա կարողություններն ու դժվարությունները տվյալ ոլորտում: Հարկ է նշել, որ վերը նշված մոտեցումը կիրառելի է նաև այն դեպքերում, երբ այլընտրանքային լուծումների և մոտեցումների կարիք առաջացել է աստղանիշ չունեցող հարցերի և առաջադրանքների կիրառման ժամանակ: Այն առաջադրանքները, որոնք նշված են երկու աստղանիշով, կարելի է բաց թողնել, եթե երեխայի զարգացման առանձնահատկություններով պայմանավորված՝ անհնար է դրանց կատարումը:

Գործիքներում ներառված յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 0-4 միավորով (աղյուսակ 1): Կան առաջադրանքներ, որոնք բաղկացած են մի քանի մասից, որոնցից յուրաքանչյուրը ևս գնահատվում է 0-4 միավորով, և դրանց դուրս բերված թվաբանական միջինն էլ համարվում է տվյալ առաջադրանքի վերջնական միավորը:





Յուրաքանչյուր առաջադրանքի կամ հարցի պատասխան պետք է գնահատել օբյեկտիվորեն, քանի որ դրա հիման վրա սահմանվում է սովորողի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքը և նրան տրամադրվող կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական ծառայությունների աստիճանը:

Գործիքի կիրառման և սովորողի դիտարկման արդյունքում հավաքագրված տեղեկատվությունն ամփոփվում է համապատասխան ծածկագրերում՝ բնութագրելով երեխայի կարողությունները, դժվարությունները, ինչպես նաև աջակցության արդյունավետ տարբերակներն ու երեխայի զարգացման հնարավորությունները: Յուրաքանչյուր ծածկագրի հարցերի և առաջադրանքների համար սահմանված միավորների թվաքանակն միջինը դիտվում է որպես որակիչ տվյալ ծածկագրի համար:


ԿԱՐԵՎՈՐ

Սովորողի կարողությունները կամ հմտությունները հստակ նկարագրելու և տեղեկագրերում դրանց համար օբյեկտիվ միավորներ և որակիչներ սահմանելու համար կարևոր է ոչ միայն հարցաշարերի կիրառման, այլև սովորողի դիտարկման, ծնողների և ուսուցիչների հետ զրույցի արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը:

Աղյուսակ 1. Առաջադրանքների համար սահմանված միավորների բնութագրիչներ⁵

Միավոր	Նկարագիր	Հանդիպման հաճախականությունը՝ %-ով	Նկար
0	Խնդիր չկա (չկա, բացակայում է, աննշան է) Գործողությունը կատարում է առանց դժվարության:	0-4 %	
1	Թեթև աստիճանի խնդիր Գործողությունը կատարում է ինքնուրույն, բայց՝ դժվարությամբ:	5-24 %	
2	Միջին աստիճանի խնդիր Գործողությունը կատարում է որոշակի աջակցությամբ՝ հարմարեցված սարքեր, տեխնոլոգիաներ, այլ անձի մասնակի աջակցությամբ:	25-49 %	
3	Ծանր աստիճանի խնդիր Գործողությունը կատարում է միայն աջակցությամբ՝ հարմարեցված	50-95 %	

⁵ Աղյուսակում նկարների օրինակը տրված է «Տեղաշարժման» ծածկագրի համար:

	սարքեր, տեխնոլոգիաներ, այլ անձի մշտական աջակցությամբ:		
4	Խորը խնդիր Գործողությունը կատարել ընդհանրապես չի կարողանում կամ ընդհանրապես չի մասնակցում գործողության կատարմանը անգամ օգնության պարագայում:	96-100 %	

Կատարողականության և կարողունակության որակիչներ

Գնահատման գործիքակազմում ընդգրկված են գործունեության և մասնակցության 9 ոլորտ՝

1. սովորել և գիտելիքը կիրառել,
2. ընդհանուր առաջադրանքներ և պահանջներ,
3. հաղորդակցություն,
4. շարժունակություն,
5. ինքնասպասարկում,
6. կենցաղ,
7. միջանձնային շփում և հարաբերություններ,
8. կյանքի հիմնական բնագավառներ,
9. համայնքային, սոցիալական և քաղաքացիական կյանք:

Յուրաքանչյուր ոլորտ ընդգրկում է ենթաոլորտներ, որոնք հնարավորություն են տալիս ավելի մանրամասն գնահատում իրականացնել տվյալ ոլորտում: Գործունեության և մասնակցության ծածկագրերը պահանջում են կատարողականության և կարողունակության որակիչների սահմանում, որտեղ.

- **Կատարողականության որակիչը** ցույց է տալիս, թե ինչպես է երեխան կատարում առաջադրանքները, գործողությունները և որքան մասնակցային է կոնկրետ միջավայրում:
- **Կարողունակության որակիչը** նկարագրում է որևէ առաջադրանք կամ գործողություն կատարելու երեխայի ունակությունը հարմարեցված միջավայրում⁶: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ժամանակ այս որակիչը ցույց է տալիս սովորողի ֆունկցիոնալության հավանական ամենաբարձր մակարդակը, որին նա կարող է հասնել տվյալ գործունեության մեջ տվյալ կրթական աստիճանի ավարտին (4-րդ, 9-րդ, 12-րդ դասարաններ):

Գնահատող խումբը միջավայրային գործոններ սահմանելիս պետք է հստակ տեղեկություն ունենա այն մասին, թե որքանով են տվյալ միջավայրային հարմարեցում-

⁶ Հարմարեցված միջավայրը կարող է լինել. ա) փաստացի միջավայր, որն ընդհանուր առմամբ օգտագործվում է թեստային պայմաններում կարողությունը գնահատելու համար. բ) եթե դա հնարավոր չէ, ապա պայմանական միջավայր, որը կարող է ընկալվել որպես նույնատիպ ազդեցություն ունեցող: Հարմարեցված միջավայրի մեջ կարող են ներառվել հարմարեցված ֆիզիկական և ուսումնական միջավայրերը, աջակցող ծառայությունները, սարքերը, տեխնոլոգիաները:

ները առկա և հասանելի գնահատվողի համար: Պետք է նաև հաշվի առնել, որ միջավայրային գործոնի առկայությունը կամ բացակայությունը ևս կարող է որպես խոչընդոտ դիտարկվել (օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ բացասական վերաբերմունքը, ծնողի գերխնամքը կամ անհրաժեշտ ծառայության բացակայությունը):

Փուլ 3. Կրթության առանձնահատուկ պայմանների սահմանում

ԿԱՐԵՎՈՐ

Գնահատման պատասխանատուն համարվում է Գնահատող խումբը, հետևաբար խմբի անդամները համատեղ են իրականացնում գնահատման ողջ գործընթացը՝ կազմելով երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ եզրակացությունը⁷ և արձանագրությունը⁸, որտեղ սահմանվում են երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, նրա կրթության արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ հարմարեցումները և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների աստիճանը:

Սովորողի գործունեության, մասնակցության, նրա կրթության գործընթացին նպաստող կամ խոչընդոտող գործոնների բացահայտումից և գնահատումից հետո ստացված տվյալները մուտքագրվում են Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների տվյալների միասնական բազայում տեղակայված համապատասխան տեղեկագրում: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների տվյալների միասնական բազան ինքնաշխատ եղանակով՝ հիմնվելով տեղեկագրում մուտքագրված որակիչների վրա, նախապես սահմանված և հաստատված բանաձևի հիման վրա սահմանում է սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների աստիճանը:

Բանաձև՝ միավորների ընդհանուր գումար առավելագույն միավոր

Յուրաքանչյուր տեղեկագիր ունի առավելագույնը 25 ծածկագիր, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 4 միավորով: Ըստ վերը նշված բանաձևի՝ տեղեկագրում ներառված 25 ծածկագրերի գնահատման արդյունքում ստացված միավորների ընդհանուր գումարը բաժանվում է առավելագույն միավորին, որը հավասար է 100-ի (Աղյուսակ 2):

⁷ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N 370-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 88-Ն հրաման՝ Ձև 2

⁸ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N 370-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 88-Ն հրաման՝ Ձև 3

Աղյուսակ 2. Առավելագույն միավորները՝ ըստ տեղեկագրերի

Տեղեկագիր	Ծածկագրերի թիվը	Առավելագույն որակիչ	Առավելագույն միավոր
Ինտելեկտի (մտավոր)	25	×4	100
Շարժունակության	25	×4	100
Լսողության	25	×4	100
Տեսողության	25	×4	100
Խոսքի և լեզվի	25	×4	100
Հաղորդակցման	25	×4	100
Հույզի	25	×4	100
Վարքի	25	×4	100

Արդյունքում ստացված միավորը, որը տեղակայվում է 0-1 միջակայքում, ցույց է տալիս կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքը և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների անհրաժեշտ աստիճանը:

Բոլոր այն դեպքերում, երբ համակարգի կողմից դուրս բերվող միավորը 0-0,04-ի միջակայքում է, կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կարիք չի սահմանվում:

Գնահատման արդյունքում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կարիքի 1-ին աստիճանը սահմանվում է միավորների 0,05-0,24, 2-րդ աստիճանը՝ 0,25-0,49, 3-րդ աստիճանը՝ 0,5-0,74, 4-րդ աստիճանը՝ 0,75 միավորային միջակայքում (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների աստիճանի սահմանման միջակայք

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության աստիճանը	Միավորային միջակայքը
Աջակցության կարիք չունի	0-0,04
1-ին աստիճանի աջակցություն	0,05-0,24
2-րդ աստիճանի աջակցություն	0,25-0,49
3-րդ աստիճանի աջակցություն	0,5-0,74
4-րդ աստիճանի աջակցություն	0,75-1

Հաշվի առնելով, որ գնահատման ժամանակ հավաքագրված տեղեկատվությունը և գնահատման եզրակացությունը հիմք են հանդիսանում սովորողի կրթության կազմակերպման, հարմարեցումների ապահովման և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման համար, անհրաժեշտ է խիստ պատասխանատու կերպով մոտենալ գնահատման գործընթացին և դրա արդյունքում կայացված որոշումներին, ներկայացված եզրակացությանն ու առաջարկություններին:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

Խոսքի և լեզվի արձանագրություն

Գործունեության և մասնակցության ծածկագրեր		Կատարողականության որակիչ	Կարողունականության որակիչ
d1.	Սովորելը և գիտելիքներ կիրառելը		
d110	Դիտելը (նայելը)		
d115	Լսելը		
d130	Ընդօրինակելը		
d132	Տեղեկություններ հավաքելը		
d135	Կրկնելու միջոցով սովորելը		
d161	Ուշադրությունը պահպանելը		
d163	Մտածելը		
d166	Կարդալը		
d170	Գրելը		
d172	Հաշվելը		
d2.	Ընդհանուր առաջադրանքները և պահանջները		
d240	Սթրեսը և այլ տեսակի հոգեբանական լարվածությունը կառավարելը		
d3.	Հաղորդակցությունը		
d310	Հաղորդակցվելիս բանավոր հաղորդագրություններ ընկալելը		
d315	Հաղորդակցվելիս ոչ բանավոր հաղորդագրություններ ընկալելը		
d325	Հաղորդակցվելիս գրավոր հաղորդագրություններ ընկալելը		
d330	Խոսելը		
d335	Ոչ վերբալ հաղորդագրություններ կազմելը		
d350	Զրույցը		
d4.	Շարժունակությունը		
d440	Դաստակի նուրբ շարժումներ կատարելը		
d460	Տարբեր վայրերում տեղաշարժվելը		
d5.	Ինքնասպասարկումը		
d530	Բնական կարիքները հոգալը		
d540	Հագնվելը		
d550	Ուտելը		
d6	Կենցաղը		
d7.	Միջանձնային շփումը և հարաբերությունները		
d710	Հիմնական միջանձնային փոխհարաբերությունները		
d8.	Կյանքի հիմնական բնագավառները		
d820	Դպրոցական կրթությունը		
d880	Խաղերի մեջ ներգրավվելը		
d9.	Համայնքային, սոցիալական և քաղաքացիական կյանքը		

Հաղորդակցման արձանագրություն

Գործունեության և մասնակցության ծածկագրեր		Կատարողականության որակիչ	Կարողունակության որակիչ
d1.	Սովորելը և գիտելիքներ կիրառելը		
d110	Դիտելը (նայելը)		
d115	Լսելը		
d120	Այլ զգայարանների նպատակային օգտագործումը		
d135	Կրկնելու միջոցով սովորելը		
d161	Ուշադրությունը պահպանելը		
d163	Մտածելը		
d166	Կարդալը		
d170	Գրելը		
d172	Հաշվելը		
d175	Խնդիրներ լուծելը		
d2.	Ընդհանուր առաջադրանքները և պահանջները		
d230	Առօրյա կյանքը կազմակերպելը		
d240	Սթրեսը և այլ տեսակի հոգեբանական լարվածությունը կառավարելը		
d2500	Նորություն ընդունելը		
d2501	Պահանջներին արձագանքելը		
d2502	Անձանց դիմելը կամ իրավիճակներում մոտեցում դրսևորելը		
d2503	Կանխատեսելի կերպով գործելը		
d3.	Հաղորդակցությունը		
d315	Հաղորդակցվելիս ոչ բանավոր հաղորդագրություններ ընկալելը		
d330	Խոսելը		
d350	Զրույցը		
d4.	Շարժունակությունը		
d460	Տարբեր վայրերում տեղաշարժվելը		
d5.	Ինքնասպասարկումը		
d540	Հագնվելը		
d550	Ուտելը		
d6.	Կենցաղը		
d7.	Միջանձնային շփումը և հարաբերությունները		
d720	Բարդ միջանձնային փոխհարաբերությունները		
d8.	Կյանքի հիմնական բնագավառները		
d820	Դպրոցական կրթությունը		
d9.	Համայնքային, սոցիալական և քաղաքացիական կյանքը		
d9200	Խաղերը		

Լսողության արձանագրություն

Գործունեության և մասնակցության ծածկագրեր		Կատարողականության որակիչ	Կարողունակության որակիչ
d1.	Սովորելը և գիտելիքներ կիրառելը		
d110	Դիտելը (նայելը)		
d115	Լսելը		
d132	Տեղեկություններ հավաքելը		
d133	Լեզու սովորելը		
d161	Ուշադրությունը պահպանելը		
d163	Մտածելը		
d166	Կարդալը		
d170	Գրելը		
d172	Հաշվելը		
d175	Խնդիրներ լուծելը		
d177	Որոշումներ կայացնելը		
d2.	Ընդհանուր առաջադրանքները և պահանջները		
d250	Սեփական վարքագիծը կառավարելը		
d230	Առօրյա կյանքը կազմակերպելը		
d3.	Հաղորդակցությունը		
d310	Հաղորդակցվելիս բանավոր հաղորդագրություններ ընկալելը		
d325	Հաղորդակցվելիս գրավոր հաղորդագրություններ ընկալելը		
d330	Խոսելը		
d350	Զրույցը		
d355	Քննարկումը		
d360	Հաղորդակցության սարքեր և մեթոդներ օգտագործելը		
d4.	Շարժունակությունը		
d440	Դաստակի նուրբ շարժումներ կատարելը		
d450	Քայլելը		
d5.	Ինքնասպասարկումը		
d6.	Կենցաղը		
d7.	Միջանձնային շփումը և հարաբերությունները		
d720	Բարդ միջանձնային փոխհարաբերությունները		
d8.	Կյանքի հիմնական բնագավառները		
d820	Դպրոցական կրթությունը		
d880	Խաղերի մեջ ներգրավվելը		
d9.	Համայնքային, սոցիալական և քաղաքացիական կյանքը		
d920	Հանգիստը և ժամանցը		

Տեսողության արձանագրություն

Գործունեության և մասնակցության ծածկագրեր		Կատարողականության որակիչ	Կարողունականության որակիչ
d1.	Սովորելը և գիտելիքներ կիրառելը		
d110	Դիտելը (նայելը)		
d115	Լսելը		
d132	Տեղեկություններ հավաքելը		
d135	Կրկնելու միջոցով սովորելը		
d155	Հմտություններ ձեռք բերելը		
d161	Ուշադրությունը պահպանելը		
d163	Մտածելը		
d166	Կարդալը		
d170	Գրելը		
d172	Հաշվելը		
d175	Խնդիրներ լուծելը		
d2.	Ընդհանուր առաջադրանքները և պահանջները		
d230	Առօրյա կյանքը կազմակերպելը		
d240	Սթրեսը և այլ տեսակի հոգեբանական լարվածությունը կառավարելը		
d250	Սեփական վարքագիծը կառավարելը		
d3.	Հաղորդակցությունը		
d330	Խոսելը		
d350	Զրույցը		
d4.	Շարժունակությունը		
d440	Դաստակի նուրբ շարժումներ կատարելը		
d460	Տարբեր վայրերում տեղաշարժվելը		
d5.	Ինքնասպասարկումը		
d540	Հագնվել		
d550	Ուտելը		
d570	Սեփական առողջությանը հետևելը		
d6.	Կենցաղը		
d640	Տնային գործեր անելը		
d7.	Միջանձնային շփումը և հարաբերությունները		
d720	Բարդ միջանձնային փոխհարաբերությունները		
d8.	Կյանքի հիմնական բնագավառները		
d820	Դպրոցական կրթությունը		
d9.	Համայնքային, սոցիալական և քաղաքացիական կյանքը		
d920	Հանգիստը և ժամանցը		

Ինտելեկտի (մտավոր) արձանագրություն

Գործունեության և մասնակցության ծածկագրեր		Կատարողականության որակիչ	Կարողունակության որակիչ
d1.	Սովորելը և գիտելիքներ կիրառելը		
d110	Դիտելը (նայելը)		
d115	Լսելը		
d132	Տեղեկություններ հավաքելը		
d133	Լեզու սովորելը		
d135	Կրկնելու միջոցով սովորելը		
d137	Հասկացություններ սովորելը		
d155	Հմտություններ ձեռք բերելը		
d161	Ուշադրությունը պահպանելը		
d163	Մտածելը		
d166	Կարդալը		
d170	Գրելը		
d172	Հաշվելը		
d175	Խնդիրներ լուծելը		
d177	Որոշումներ կայացնելը		
d2.	Ընդհանուր առաջադրանքները և պահանջները		
d230	Անօրյա կյանքը կազմակերպելը		
d240	Սթրեսը և այլ տեսակի հոգեբանական լարվածությունը կառավարելը		
d250	Սեփական վարքագիծը կառավարելը		
d3.	Հաղորդակցությունը		
d330	Խոսելը		
d350	Զրույցը		
d4.	Շարժունակությունը		
d440	Դաստակի նուրբ շարժումներ կատարելը		
d460	Տարբեր վայրերում տեղաշարժվելը		
d5.	Ինքնասպասարկումը		
d6.	Կենցաղը		
d530	Բնական կարիքները հոգալը		
d540	Հագնվելը		
d7.	Միջանձնային շփումը և հարաբերությունները		
d720	Բարդ միջանձնային փոխհարաբերությունները		
d8.	Կյանքի հիմնական բնագավառները		
d820	Դպրոցական կրթությունը		
d9.	Համայնքային, սոցիալական և քաղաքացիական կյանքը		

Հուզական արձանագրություն

Գործունեության և մասնակցության ծածկագրեր		Կատարողականության որակիչ	Կարողունականության որակիչ
d1.	Սովորելը և գիտելիքներ կիրառելը		
d110	Դիտելը (նայելը)		
d115	Լսելը		
d132	Տեղեկություններ հավաքելը		
d161	Ուշադրությունը պահպանելը		
d163	Մտածելը		
d166	Կարդալը		
d170	Գրելը		
d172	Հաշվելը		
d175	Խնդիրներ լուծելը		
d177	Որոշումներ կայացնելը		
d2.	Ընդհանուր առաջադրանքները և պահանջները		
d230	Առօրյա կյանքը կազմակերպելը		
d240	Սթրեսը և այլ տեսակի հոգեբանական լարվածությունը կառավարելը		
d250	Սեփական վարքագիծը կառավարելը		
d3.	Հաղորդակցությունը		
d350	Զրույցը		
d4.	Շարժունակությունը		
d5.	Ինքնասպասարկումը		
d530	Բնական կարիքները հոգալը		
d570	Սեփական առողջությանը հետևելը		
d6.	Կենցաղը		
d650	Կենցաղային իրերի մասին հոգ տանելը		
d660	Այլ անձանց օգնելը		
d7.	Միջանձնային շփումը և հարաբերությունները		
d720	Բարդ միջանձնային փոխհարաբերությունները		
d730	Անձանոթների հետ հարաբերությունները		
d760	Ընտանեկան հարաբերությունները		
d8.	Կյանքի հիմնական բնագավառները		
d820	Դպրոցական կրթությունը		
d880	Խաղերի մեջ ներգրավվելը		
d9.	Համայնքային, սոցիալական և քաղաքացիական կյանքը		
d910	Համայնքային կյանքը		
d9205	Սոցիալական շփումը		

Վարքի արձանագրություն

Գործունեության և մասնակցության ծածկագրեր		Կատարողականության որակիչ	Կարողունակության որակիչ
d1.	Սովորելը և գիտելիքներ կիրառելը		
d110	Դիտելը (նայելը)		
d115	Լսելը		
d132	Տեղեկություններ հավաքելը		
d161	Ուշադրությունը պահպանելը		
d163	Մտածելը		
d166	Կարդալը		
d170	Գրելը		
d172	Հաշվելը		
d175	Խնդիրներ լուծելը		
d177	Որոշումներ կայացնելը		
d2.	Ընդհանուր առաջադրանքները և պահանջները		
d230	Առօրյա կյանքը կազմակերպելը		
d240	Սթրեսը և այլ տեսակի հոգեբանական լարվածությունը կառավարելը		
d250	Սեփական վարքագիծը կառավարելը		
d3.	Հաղորդակցությունը		
d350	Զրույցը		
d4.	Շարժունակությունը		
d5.	Ինքնասպասարկումը		
d530	Բնական կարիքները հոգալը		
d570	Սեփական առողջությանը հետևելը		
d6.	Կենցաղը		
d650	Կենցաղային իրերի մասին հոգ տանելը		
d660	Այլ անձանց օգնելը		
d7.	Միջանձնային շփումը և հարաբերությունները		
d720	Բարդ միջանձնային փոխհարաբերությունները		
d730	Անձանոթների հետ հարաբերությունները		
d760	Ընտանեկան հարաբերությունները		
d8.	Կյանքի հիմնական բնագավառները		
d820	Դպրոցական կրթությունը		
d880	Խաղերի մեջ ներգրավվելը		
d9.	Համայնքային, սոցիալական և քաղաքացիական կյանքը		
d910	Համայնքային կյանքը		
d9205	Սոցիալական շփումը		

Շարժունակության արձանագրություն

Գործունեության և մասնակցության ծածկագրեր		Կատարողականության որակիչ	Կարողունակության որակիչ
d1.	Սովորելը և գիտելիքներ կիրառելը		
d110	Դիտելը (նայելը)		
d115	Լսելը		
d161	Ուշադրությունը պահպանելը		
d163	Մտածելը		
d166	Կարդալը		
d170	Գրելը		
d172	Հաշվելը		
d2.	Ընդհանուր առաջադրանքները և պահանջները		
d230	Առօրյա կյանքը կազմակերպելը		
d240	Սթրեսը և այլ տեսակի հոգեբանական լարվածությունը կառավարելը		
d3.	Հաղորդակցությունը		
d330	Խոսելը		
d350	Զրույցը		
d360	Հաղորդակցության սարքեր և մեթոդներ օգտագործելը		
d4.	Շարժունակությունը		
d440	Դաստակի նուրբ շարժումներ կատարելը		
d445	Դաստակը և բազուկն օգտագործելը		
d450	Քայլելը		
d455	Տեղաշարժվելը		
d460	Տարբեր վայրերում տեղաշարժվելը		
d470	Փոխադրամիջոցից օգտվելը		
d5.	Ինքնասպասարկումը		
d530	Բնական կարիքները հոգալը		
d540	Հագնվելը		
d550	Ուտելը		
d560	Խմելը		
d6	Կենցաղը		
d7.	Միջանձնային շփումը և հարաբերությունները		
d720	Բարդ միջանձնային փոխհարաբերությունները		
d8.	Կյանքի հիմնական բնագավառները		
d820	Դպրոցական կրթությունը		
d9.	Համայնքային, սոցիալական և քաղաքացիական կյանքը		
d920	Հանգիստը և ժամանցը		

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Խոսքի և լեզվի արձանագրություն

Հարցեր, որոնց դիմաց դրված է մեկ աստղանիշ (*)՝ խոսքով չհաղորդակցվող երեխաների դեպքում հնարավորություն տալ կարդալու, ճիշտ փարբերակը մատնանշելու կամ գրավոր փարբերակով պատասխանելու:

Հարցեր, որոնց դիմաց դրված է երկու աստղանիշ (**)*՝ կիրառելի չեն խոսքով չհաղորդակցվող երեխայի համար:

Խոսքով չհաղորդակցվող երեխաների համար որպես այլընտրանք առկայության դեպքում, կիրառելի հարցի (բ) փարբերակը:

Հարցեր, որոնց դիմաց չկա նշված որևէ փարիքային խումբ՝ կիրառելի են 6-10 տարեկան բոլոր երեխաների համար:

Գործունեության և մասնակցության ծածկագրեր		Հարցեր	Անհրաժեշտ նյութ
d1. Սովորելը և գիտելիքներ կիրառելը			
d110	Դիտելը (նայելը) <i>(Տեսողական ազդակներ ընկալելու նպատակով տեսողության զգայարանը մտադրված կերպով օգտագործելը, ինչպես, օրինակ՝ առարկային հեղուկ, մարդկանց դիտելը, սպորտային իրադարձություն, որևէ անձի կամ խաղացող երեխաներին նայելը):</i>	1. Խմբավորի՛ր հիմնական գույներն ըստ երանգների (երեխայի առջև դնել կարմիր, կանաչ, կապույտ, դեղին գույնի մատիտներ):	Խթանիչ նյութ՝ գունավոր մատիտներ
		2. 6-7 տարեկաններ Գտի՛ր բացակայող հատվածը և տեղադրի՛ր: 8-10 տարեկաններ (* Ի՞նչ պատկեր և ի՞նչ թիվ ես տեսնում նկարներում (խոսքով չհաղորդակցվող երեխան մատնանշում է պահանջված թիվը և պատկերը):	Խթանիչ նյութ՝ նկար 26.1, նկար 26.2
		3. 6-7 տարեկաններ Գտի՛ր ստվերի համապատասխան պատկերը: 8-10 տարեկաններ Յո՛ւյց տուր նկարում պատկերված բոլոր քառանկյուններն ու եռանկյունները:	Խթանիչ նյութ՝ խաղ «Գտիր ստվերը» Աշխատանքային տետր՝ առաջադրանք 1
		4. Երեխային առաջարկել նկար և հետևել, թե աչքերից ինչ հեռավորության վրա է պահում (արդյունքը կլինի բարձր, եթե երեխան նկարը պահում է	Խթանիչ նյութ՝ նկար 27

		25-30 սմ հեռավորության վրա և չի անտեսում պատկերված մանր առարկաները):	
d115	Լսելը <i>(Լսողական ազդակներ ընկալելու նպատակով խողրոջ զգայարանը մտադրված կերպով օգտագործելը, ինչպես, օրինակ՝ ուղիղ, մարդու ծայն, երաժշտություն, դասախոսություն կամ պատմվածք ունկնդրելը):</i>	1. (*) Լսի՛ր և կրկնի՛ր հնչեցված բառերը՝ կատու, սեղան, շուն, տուն, մեքենա, մատիտ, աղջիկ, խոզ, կով, նապաստակ (բառերն արտասանել 6 մետր հեռավորությունից, երեխայի մեջքի կողմից, խոսքով չհաղորդակցվող երեխաները միայն մատնանշում են համապատասխան նկարները):	Խթանիչ նյութ՝ նկար 2, 3
		2. (*) Լսի՛ր և կրկնի՛ր հնչեցված բառերը՝ կատու, շուն, տուն, մեքենա, կով, նապաստակ (բառերն արտասանել 22ուկով, 6 մետր հեռավորությունից, երեխայի մեջքի կողմից, խոսքով չհաղորդակցվող երեխաները միայն մատնանշում են համապատասխան նկարները):	Խթանիչ նյութ՝ նկար 2, 3
		3. (*) Կրկնի՛ր նախադասությունները (նախադասությունները կարդալ առանձին, խոսքով չհաղորդակցվող երեխան մատնանշում է պահանջված նկարները): Լուսինը լույս է տալիս: Գարնան առաջին ծաղիկը ձնծաղիկն է: Սեղանին դրված էր դանակ, պատառաքաղ, գդալ:	Խթանիչ նյութ՝ նկար 28
		4. (*) Լսի՛ր և նշի՛ր, թե որ հնչյունով է սկսվում և ավարտվում տվյալ բառը. Նուռ, կատու, անձրև, քարտեզ, ծաղիկ, նապաստակ (խոսքով չհաղորդակցվող երեխային առաջարկել ցույց տալ բառի առաջին և վերջին տառերը: Կիրառելի չէ այն երեխաների համար, ովքեր տառաճանաչ չեն):	Խթանիչ նյութ՝ փայտե գրատախտակ հայերեն տառերով
d130	Ընդօրինակելը <i>(Նմանակելը կամ դիմախաղը որպես սովորելու հիմնական բաղադրիչ, ինչպես, օրինակ՝ ընդօրինակելը, դեմքի արտահայտությունը, ժեստը, ծայնը կամ այբուբենի տառերը կրկնօրինակելը՝ ներառյալ գործողությունը կամ վարքագիծն անմիջապես նմանակելը):</i>	1. Վերարտադրի՛ր իմ ծափերն այն ռիթմով, ինչպես լսեցիր (● - ● - ● ● ●՝ 6-7 տարեկանների համար, ● - ● ● - ● - ● ●՝ 8-10 տարեկանների համար):	
		2. Կրկնի՛ր շարժումները:	
		3. Նայի՛ր նկարին և ընդօրինակիր տրված հույզերը:	Խթանիչ նյութ՝ նկար 29
		4. Կրկնի՛ր ինչպես լսեցիր (մուլտֆիլմերից մեջբերված տարբեր հնչերանգով նախադասություններ):	Խթանիչ նյութ՝ ձայնագրիչ
d132	Տեղեկություններ հավաքելը	1. Կարողանո՞ւմ է երեխան տեղեկատվություն հավաքել հանձնարարված թեմայի շուրջ (տեղեկություններ ստանալու համար տալ «ե՞րբ», «ինչպե՞ս» և «ինչո՞ւ» հարցերը):	

	<p>(Անձանց, իրերի և իրադարձությունների մասին փաստեր հավաքելը, ինչպես օրինակ՝ «ինչու», «ինչ», «որտեղ» և «ինչպես» հարցերը փալը, անուններ հարցնելը՝ բացառությամբ հասկացություններ սովորելու (d137), հմտություններ ձեռք բերելու (d155)):</p>	<p>2. Պատկերացրու՝ հրավիրված ես ծննդյան տոնի, ինչ հարցեր կհետաքրքրեն քեզ մինչև գնալը:</p> <p>3. Նայիր նկարին և ասա՝ ո՞վ է (ի՞նչ հարցեր կուղղես տեղեկատվություն ստանալու համար):</p> <p>4. ա) Հիմա խաղում ենք խաղ «Ո՞վ եմ ես»:</p> <p>բ) Ցո՛ւյց տուր ճիշտ քարտը (խոսքով չհաղորդակցվող երեխաների համար կիրառել այս տարբերակը, նույնիսկ մեկ ճիշտ պատասխանի համար սահմանել 0 միավոր).</p> <ul style="list-style-type: none"> • Ի՞նչպես են օգտվում համացանցից (երեխային տրամադրել նկար 31-ում պատկերված համակարգչի, հեռախոսի նկարները և նկար 81 դ-ի հեռուստացույցի նկարը): • Ի՞նչ տեսք ունի Երկիր մոլորակը (խթանիչ նյութ՝ նկար 16): • Ինչո՞վ ենք մարսում սնունդը: 	<p>Խթանիչ նյութ՝ նկար 30</p> <p>Խթանիչ նյութ՝ խաղ «Ո՞վ եմ ես»</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 16, 31, 81</p>
<p>d135</p>	<p>Կրկնելու միջոցով սովորելը</p> <p>(Իրադարձությունների կամ խորհրդանիշների հաջորդականությունը կրկնելը՝ որպես սովորելու հիմնական բաղադրիչ, ինչպես, օրինակ՝ ժեստերի միջոցով կամ առանց ժեստերի փասնյակներով հաշվելու կամ բանաստեղծություն արտասանելու մեջ վարժվելը՝ ներառյալ գործողության կամ վարքագծի հետագա նմանակումը):</p>	<p>1. (*) Արտասանի՛ր որևէ բանաստեղծություն կամ հաշվի՛ր (6-7 տարեկաններ՝ 1-10 մեխանիկական հաշիվ, 8-10՝ տասնյակներով կամ հարյուրյակներով, խոսքով չհաղորդակցվող երեխան կարող է գրել կամ ցույց տալ ժեստերով):</p> <p>2. 6-7 տարեկաններ</p> <p>(*) Ցո՛ւյց տուր, թե լուսակրի որ գույնն ինչ է նշանակում (խոսքով չհաղորդակցվող երեխան մատնանշում է լուսակրի գույները):</p> <p>8-10 տարեկաններ</p> <p>(*) Ցոյց տուր, թե որ նշանն ինչ է նշանակում (խոսքով չհաղորդակցվող երեխան մատնանշում է համապատասխան նշանը՝</p> <ul style="list-style-type: none"> • վերգետնյա հետիոտնային անցում • ստորգետնյա հետիոտնային անցում • հետիոտնային անցում <p>3. Պատրաստի՛ր թղթից նավակ կամ բաժակ՝ հետևելով և հաջորդաբար կրկնելով իմ քայլերը:</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 33</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 34</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 35</p>
<p>d161</p>	<p>Ուշադրությունը պահպանելը</p> <p>(Համապատասխան ժամանակահատվածում կոնկրետ գործողություններին կամ</p>	<p>1. Կարդալու՞ն զուգահեռ երեխային ցույց տալ, որ աստղի մեջ պատկերված է շրջան, քառակուսու մեջ՝ խաչ, սրտիկի մեջ՝ երկու գծիկ, իսկ շրջանի մեջ՝ մեկ գծիկ: Ներքևում դասավորված պատկերների մեջ անհրաժեշտ է</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 5</p>

<p>առաջադրանքներին ուղղված ուշադրությունը մտադրված կերպով պահպանելը):</p>	<p>տեղադրել համապատասխան նշանները: Կատարի՛ր այդ աշխատանքը յուրաքանչյուր տողի համար:</p>	
	<p>2. Նկարում խճճված գծերից յուրաքանչյուրը վերջանում է ինչ-որ թվի վրա, օրինակ՝ 1-ը վերջանում է 5 թվի վրա: Յո՛ւյց տուր, թե որ թվերի վրա են վերջանում մնացած գծերը:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 6</p>
	<p>3. ա) Ուշադիր լսի՛ր արտահայտությունները, որոնք կկարդամ: Մտապահիր, որպեսզի կրկնես: Ամռանը շոգ է: Երեխաները խաղում են: Ծառերի վրա մրգեր են աճում: Տղան օգնում է տատիկին: Լճակում նավակ է լողում:</p> <p>բ) Դասավորի՛ր պատկերներն այնպես, ինչպես դրված են (5 երկրաչափական պատկերները ցուցադրել հերթականությամբ, ապա խառնել):</p>	<p>Խթանիչ նյութ՝ փայտե փազլ</p>
	<p>4. 6-7 տարեկաններ (*) Նայի՛ր նկարին, փորձի՛ր մտապահել պատկերները, որպեսզի հետո դրանք թվարկես (պահել նկարը 20 վայրկյան, ապա՝ շրջել, խոսքով չհաղորդակցվող երեխաներին առաջարկել նկար 38-ի առանձին բաղադրիչների և հարցաշարում առկա 4 այլ առարկայական նկարների խմբից ընտրել այն պատկերները, որոնք առկա են եղել ցուցադրված նկարում):</p> <p>8-10 տարեկաններ Ուշադիր նայիր թվերին 20 վայրկյան, այնուհետև նույնությամբ տեղադրի՛ր աղյուսակի դատարկ վանդակներում (փակել թվերով տարբերակը):</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 38</p>
	<p>5. (**) Կկարդամ 10 բառ, որից հետո ցանկացած հաջորդականությամբ կկրկնես այնքանը, որքանը հիշեցիր. անտառ, մուրճ, հաց, դուռ, ձի, սունկ, բեռ, ջուր, աթոռ, մեղր (կիրառելի չէ խոսքով չհաղորդակցվող երեխաների համար):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 7</p>

<p>d163</p> <p>Մտածելը</p> <p><i>(Մտքեր, գաղափարներ և պատկերներ ձևակերպելը՝ նպատակաուղղված կամ ոչ նպատակաուղղված կերպով, ինքնուրույն կամ այլոց հետ միասին, մտածելուն առնչվող գործողությունների հետ կապված՝ ինչպես օրինակ՝ միտք արտահայտելը, ձևանալը, բառախաղը, մտացածին բան ստեղծելը, թերեմ ապացուցելը, մտքերով խաղալը, մտազրոհը, մտասուզվելը (մեղիտացիա), մտորելը, խորհրդածելը կամ խորհելը):</i></p>	<p>1. (*) Ո՞ր բառն է ավելորդ՝ բազմոց, պահարան, բաժակ, աթոռ (6 տարեկան և խոսքով չհաղորդակցվող երեխաների համար կարող եք կիրառել նկար-քարտեր):</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 39</p>
	<p>2. Գտի՛ր համապատասխան հատվածը. (6-7 տարեկանների համար կիրառել Ռ-ավենի պրոգրեսիվ մատրիցաների B12, B8 տարբերակները, իսկ 8-10 տարեկանների համար՝ C3, C1, C9, D4 տարբերակները):</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 40</p>
	<p>3. 6-7 տարեկաններ Դասավորի՛ր նկարները ճիշտ հաջորդականությամբ:</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 41</p>
	<p>4. (*) Ո՞ր տարբերակը կընտրես շնիկին բույն պատրաստելու համար (6 տարեկան և խոսքով չհաղորդակցվող երեխաների համար կարող եք կիրառել նկար-քարտեր). ա) մեխ, պարան, մուրճ, փայտ բ) սղոց, մեխ, մուրճ, փայտ գ) փայտ, բահ, մեխ, մուրճ:</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 42</p>
<p>d166</p> <p>Կարդալը</p> <p><i>(Գրավոր խոսքը (օրինակ, գրքեր, ցուցումներ, թերթեր՝ սովորական տեքստի կամ Բրայլի այբուբենով գրված) ընկալելուն և վերծանելուն առնչվող գործողություններ կատարելը՝ ընդհանուր գիտելիք կամ հատուկ տեղեկություն ստանալու համար՝ ներառյալ ստանդարտ տառերով կամ նիշերով կազմված գրավոր խոսքը, ինչպես նաև յուրահատուկ խորհրդանշաններով, օրինակ՝ պատկերանշաններով կազմված տեքստի ընկալելը և մեկնաբանելը):</i></p>	<p>1. 6-7 տարեկաններ (*) Թվարկի՛ր «Ն» հնչյունով սկսվող մի քանի բառ (6 տարեկան և խոսքով չհաղորդակցվող երեխաներին առաջարկել նապաստակի, նոան, նարնջի և հարցաշարում առկա ցանկացած 3 այլ առարկայական նկարների խմբից ընտրել այն առարկաների պատկերները, որոնք սկսվում են «Ն» հնչյունով):</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 2, 8, 32</p>
	<p>2. 6-7 տարեկաններ Հեգի՛ր հետևյալ բառերը՝ տուն, ներկ, գազար, բազմոց, պահարան, եղանակ:</p>	
	<p>3. 6-7 տարեկաններ (*) Ամբողջացրո՛ւ հետևյալ տառերը՝ ձ-ու-կ, կ-ա-տ-ու, ն-ա-պ-ա-ս-տ-ա-կ, լ-ու-ս-ա-ց-ու-յ-ց (խոսքով չհաղորդակցվող երեխան քարտերից ցույց է տալիս համապատասխան բառիմաստը պարունակող նկարը):</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 3, 2, 33, 36,</p>
	<p>4. 6-7 տարեկաններ (*) Կարդա՛ հանձնարարված նյութը (կիրառելի չէ առաջին դասարանի նախաայբբենական շրջանում սովորող երեխաների համար, այբբենական շրջանում երեխային առաջարկել բառեր իր անցած տառերով, խոսքով չհաղորդակցվող երեխաների դեպքում առաջարկել</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 8, Խթանիչ նյութ՝ 41, 49, 28</p>

		<p>տեքստի բովանդակությանը համապատասխանող և դրան հակասող նկարներ, որտեղից երեխան պետք է ընտրություն կատարի):</p>	
		<p>5. 6-7 տարեկաններ (*) Պատասխանի՛ր տեքստի կամ բառակապակցությունների, պարզ համառոտ նախադասությունների վերաբերյալ 2 հարցի՝ հարցադրումներն ուղղելով նույն ծածկագրի 4-րդ առաջադրանքին համապատասխան (կիրառելի չէ առաջին դասարանի նախաայբբենական շրջանում սովորող երեխաների համար, խոսքով չհաղորդակցվող երեխայի դեպքում միավորը սահմանել՝ հաշվի առնելով տվյալ ծածկագրի առաջադրանք 4-ի արդյունքները):</p>	
		<p>6. 8-10 տարեկաններ Տրված բառերից ստացիր 3 նոր բառ՝ մեկական տառ փոխելով, օրինակ՝ պատ-պար):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 9</p>
		<p>7. 8-10 տարեկաններ (*) Կարդա՛ հանձնարարված նյութը (խոսքով չհաղորդակցվող երեխաների դեպքում առաջարկել կարդացածը ներկայացնել տեքստի բովանդակությանը համապատասխանող և դրան հակասող նկարների միջոցով, որտեղից երեխան պետք է ընտրություն կատարի կամ գրելու տարբերակով):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 10, խթանիչ նյութ՝ նկար 43</p>
		<p>8. 8-10 տարեկաններ (*) Պատասխանի՛ր տեքստի վերաբերյալ հարցերին (երեխային ուղղել 3-4 հարց, խոսքով չհաղորդակցվող երեխաների դեպքում միավորը սահմանել՝ հաշվի առնելով տվյալ ծածկագրի առաջադրանք 7-ի արդյունքները):</p>	
		<p>9. 8-10 տարեկաններ Տեղադրի՛ր տրված ածականները համապատասխան նախադասություններում:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 11</p>
<p>d170</p>	<p>Գրելը <i>(Նիշեր կամ փառեր գրելը, պատկերելը կամ վերարտադրելը տեղեկատվություն հաղորդելու համար, ինչպես օրինակ՝ իրադարձություններ կամ մտքեր գրի առնելը</i></p>	<p>1. 6-7 տարեկաններ Միացրո՛ւ տրված կետերը մեկ գծով առանց ընդհատելու:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 12</p>
		<p>2. 6-7 տարեկաններ Արտագրի՛ր տրված նյութը (6 տարեկան երեխաները կարող են գրել մասնիկներ ըստ օրինակի):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 13</p>

	<p>կամ նամակ կազմելը, գրառումներ, նշումներ և գրավոր հանձնարարություն կատարելը, տպելը):</p>	<p>3. 6-7 տարեկաններ Գրի՛ր բառեր, բառակապակցություններ, պարզ համառոտ նախադասություններ (թելադրել բառեր, բառակապակցություններ, պարզ համառոտ նախադասություններ, որոնք կազմված են երեխային արդեն ծանոթ տառերով):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 14</p>
		<p>4. 8-10 տարեկաններ Կազմի՛ր բառեր և գրի՛ր դրանք առանձին տեղում:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 15</p>
		<p>5. 8-10 տարեկաններ Կազմի՛ր նախադասություն քո կազմած բառերով:</p>	
		<p>6. 8-10 տարեկաններ Գրի՛ր թելադրություն: Պապս ամեն օր աշխատում էր իր այգում: Տարիներ առաջ նա ընտրեց քարքարոտ այդ հողակտորը: Մաքրեց այն, ծառեր տնկեց ու մշակեց: Աշնանն այգու բազմագույն պտուղները պսպղում էին արևի ճառագայթների տակ:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 16</p>
		<p>7. 8-10 տարեկաններ Գրի՛ր նամակ ում կցանկանաս:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 17</p>
<p>d172</p>	<p>Հաշվելը (Հաշվարկներ կատարելը՝ բառերով արտահայտված խնդիրները լուծելու նպատակով մաթեմատիկական սկզբունքներ կիրառելու միջոցով կամ պատասխանները ստանալով կամ ցուցադրելով, ինչպես օրինակ երեք թվերի գումարը հաշվարկելը կամ մեկ թիվը մյուսով բաժանելու պատասխանը գտնելը):</p>	<p>1. 6-7 տարեկաններ Թվերի շարքում լրացրո՛ւ այն թվերը, որոնք չկան (առաջադրանքը կատարել բանավոր կամ գրավոր):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 18</p>
		<p>2. 6-7 տարեկաններ (*) Ունենք շարքով դասավորված 9 մատիտ: Քանի՞ մատիտ կդառնա շարքում, եթե սկզբից և վերջից ավելացնենք մեկական մատիտ (խոսքով չհաղորդակցվող երեխան կարող է պատասխանել ժեստերի միջոցով):</p>	
		<p>3. 6-7 տարեկաններ Բաժանի՛ր 6 մատիտը երկու հոգու այնպես, որ յուրաքանչյուրը ստանա հավասար քանակով մատիտներ:</p>	
		<p>4. 6 տարեկաններ (*) Համեմատի՛ր միանիշ թվերը և բանավոր նշի՛ր՝ որն է մեծ, որը՝ փոքր (անհրաժեշտության դեպքում թվաքարտերի փոխարեն կիրառել հաշվեճողիկներ, խոսքով չհաղորդակցվող երեխան կարող է պատասխանել ժեստերի միջոցով):</p>	<p>Խթանիչ նյութ՝ փայտե գրատախտակ հայերեն տառերով</p>

	<p>5. 7 տարեկաններ Համեմատի՛ր միանիշ թվերը (քարտեր) և աստղանիշի փոխարեն դի՛ր համապատասխան նշանը՝ <, >, =:</p>	Աշխատանքային տետր՝ առաջադրանք 19
	<p>6. 6-7 տարեկաններ Կատարի՛ր տրված առաջադրանքները (անհրաժեշտության դեպքում կիրառել հաշվեճողիկներ):</p>	Աշխատանքային տետր՝ առաջադրանք 20
	<p>7. 8-10 տարեկաններ Լրացրո՛ւ աղյուսակը (երեխային մտածելու համար տալ 1 թույլ ժամանակ, եթե դժվարանում է, միջամտել):</p>	Աշխատանքային տետր՝ առաջադրանք 21
	<p>8. 8-10 տարեկաններ Քանի՞ անգամ պետք է ծալել 8 սմ կողմեր ունեցող քառակուսի կտրված թուղթը, որպեսզի ստանանք 2 սմ կողմերով քառակուսի (երեխային տրամադրվում է կտրված թուղթը և մտածելու համար տրվում է 1 թույլ):</p>	
	<p>9. 8-10 տարեկաններ Տեղադրի՛ր 8, 4, 0 թվերը յուրաքանչյուր տառի փոխարեն (երեխային մտածելու համար տրվում է մինչև 2 թույլ ժամանակ):</p>	Աշխատանքային տետր՝ առաջադրանք 22
	<p>10. 8-10 տարեկաններ Կատարի՛ր տրված առաջադրանքները:</p>	Աշխատանքային տետր՝ առաջադրանք 23

d2. Ընդհանուր առաջադրանքները և պահանջները

<p>d240 Սթրեսը և այլ տեսակի հոգեբանական լարվածությունը կառավարելը</p> <p><i>(Պարզ կամ բարդ և համակարգված գործողություններ կատարելն այնպիսի հոգեբանական լարվածություն կառավարելու և վերահսկելու համար, որը պահանջվում է զգալի պարտականությունների, սթրեսային ու ճգնաժամային իրավիճակների և ուշադրությունը շեղելու հետ կապված առաջադրանքներ կատարելիս, ինչպես օրինակ՝ քննություններ հանձնելը, ծանրաբեռնված երթևեկության մեջ փոխադրամիջոց վարելը, հագնվելը, երբ</i></p>	<p>1. Արդյո՞ք կարողանում ես կառավարել հույզերի արտահայտումը, երբ (զնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4)՝</p> <ul style="list-style-type: none"> • չեն կատարվում քո ցանկությունները • չես հասցնում ժամանակին կատարել կարևոր առաջադրանքը • հայտնվում ես նոր միջավայրում • նախապատրաստվում ես քննություններին • չես հասցնում ավարտին հասցնել գրավոր աշխատանքը • ստանում ես նկատողություն • ենթարկվում ես քննադատության: 	
	<p>2. Լարված իրավիճակներում չես դրսևորում նյարդային շարժումներ (զնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4).</p>	

	<p>ծնողները շտապեցնում են, առաջադրանքը որոշակի ժամկետում ավարտելը կամ երեխաների մեծ խմբի մասին հոգ տանելը՝ ներառյալ պարտականություններ կատարելը, սթրեսը և ճգնաժամը կառավարելը):</p>	<ul style="list-style-type: none"> • ծանոթ միջավայրում • անծանոթ միջավայրում: 	
		<p>3. Նկարի՛ր 100 շրջան 30 վայրկյանի ընթացքում (միավորը սահմանել դիտարկման արդյունքում):</p>	
<p>d3. Հաղորդակցությունը</p>			
<p>d310</p>	<p>Հաղորդակցվելիս բանավոր հաղորդագրություններ ընկալելը</p> <p><i>(Բանավոր հաղորդագրությունների բառացի և ենթադրվող իմաստները ընկալելը, ինչպես օրինակ՝ հասկանալը, որ հայտարարությունը փաստ է հաստատում կամ այն պարկերավոր արտահայտություն է, ինչպես օրինակ՝ բանավոր հաղորդագրություններին արձագանքելը և դրանք ընկալելը):</i></p>	<p>1. Հետևել հրահանգների և բանավոր առաջադրանքների ընկալմանը գնահատման ողջ ընթացքում:</p> <p>2. 6-7 տարեկաններ Տրված նախադասության մեջ նշի՛ր բառն ըստ իմաստի: Բաղիկները ... են լճակում: (լողալ, թռչել) Երեխաները ... թռչկոտում և վազվզում էին լողափին: (ուրախ, տխուր) Ոգնին սուր ... ունի: (փշեր, ականջներ)</p> <p>3. 8-10 տարեկաններ ա) Ասա՛, թե ինչ ես հասկանում այս դարձվածքները լսելիս: Եփած հավի ծիծաղն էլ կգա: Գյուղ կանգնի՝ գերան կկտորի: Բերանը ջուր առնել: Աշխարհով մեկ լինել:</p> <p>բ) Լսի՛ր դարձվածքի բացատրությունը և մատնանշիր համապատասխան նկարը (խոսքով չհաղորդակցվող երեխաների համար).</p> <ul style="list-style-type: none"> • Կռահել • Երջանիկ լինել • Սովորող, ուսումնաստենչ • Լարված լինել <p>4. 8-10 տարեկաններ (*) Տրված նախադասության մեջ ավելացրու բառն ըստ իմաստի (խոսքով չհաղորդակցվող երեխային առաջարկել նկար-քարտեր):</p> <ul style="list-style-type: none"> • Պայծառ արևը շողում է ...: (նկուղ, երկնակամար) 	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 24</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 48</p>

		<ul style="list-style-type: none"> • Երեխաները ... թռչկոտում և վազվզում էին լողափին: (անհոգ, տխուր) 	
d315	Հաղորդակցվելիս ոչ բանավոր հաղորդագրություններ ընկալելը <i>(Ժեստերի, խորհրդանշանների և նկարների միջոցով փոխանցվող հաղորդագրությունների բառացի և ենթադրվող իմաստներն ըմբռնելը, ինչպես օրինակ՝ երեխան հոգնած է, երբ տրորում է աչքերը, կամ տազնապի զանգը նշանակում է, որ հրդեհ է բռնկվել՝ ներառյալ հաղորդակցվելիս ժեստերի լեզուն, ընդհանուր նշանները, խորհրդանշանները, նկարները և լուսանկարներն ընկալելը):</i>	1. 6-7 տարեկաններ (*) Ի՞նչ է պատկերված (խոսքով չհաղորդակցվող երեխան կարող է ներկայացնել ժեստերի միջոցով կամ մատնանշել պահանջված նկարը):	Խթանիչ նյութ՝ նկար 49
		2. 6-7 տարեկաններ Ո՞րն է ավելորդ:	
		3. 6-7 տարեկաններ Մեկնաբանի՞ր լուսակրի գույները (տե՛ս d135 ծածկագրի 2-րդ առաջադրանքի արդյունքները՝ 6-7):	Խթանիչ նյութ՝ նկար 33
		4. 8-10 տարեկաններ (*) Կազմի՞ր նախադասություն նկարների միջոցով (խոսքով չհաղորդակցվող երեխան կարող է ներկայացնել գրավոր խոսքի միջոցով):	Խթանիչ նյութ՝ նկար 50
		5. 8-10 տարեկաններ (*) Ին՞չ են խորհրդանշում նկարները՝ աղավնի, Հայաստանի դրոշ, Հայաստանի զինանշան (խոսքով չհաղորդակցվող երեխան կարող է ներկայացնել գրավոր խոսքի միջոցով):	Խթանիչ նյութ՝ նկար 32
		6. 8-10 տարեկաններ Մեկնաբանի՞ր նշանները (տե՛ս d135 ծածկագրի 2-րդ առաջադրանքի արդյունքները՝ 8-10):	Խթանիչ նյութ՝ նկար 34
d325	Հաղորդակցվելիս գրավոր հաղորդագրություններ ընկալելը <i>(Գրավոր խոսքի (այդ թվում՝ Բրայլի այբուբենի) միջոցով փոխանցվող հաղորդագրությունների բառացի և ենթադրվող իմաստներին ընկալելը, ինչպես օրինակ՝ օրաթերթում քաղաքական իրադարձություններին հեղուկելը կամ կրոնական բնույթի տեքստի էությունը հասկանալը):</i>	1. 6-7 տարեկաններ (*) Կարդա՞ թաքնված բառը՝ դեղատուն, արևածաղիկ, գետածի (խոսքով չհաղորդակցվող և 6 տարեկան երեխային առաջարկել նկար-քարտեր):	Խթանիչ նյութ՝ նկար 51
		8-10 տարեկաններ (*) Կարդա՞ թաքնված բառը՝ քամի, աշուն, ձեռագիր:	Խթանիչ նյութ՝ նկար 52
		2. Կարդա՞ հանելուկը և գուշակի արևը (կիրառելի չէ առաջին դասարանի առաջին կիսամյակի այն երեխաների համար, ովքեր դեռ տառաճանաչ չեն):	Խթանիչ նյութ՝ նկար 53
		3. Հետևե՛լ գրավոր հաղորդագրությունների, նկարների ընկալմանը գնահատման ողջ ընթացքում:	

<p>d330</p>	<p>Խոսուելը <i>(Բառացի և ենթադրվող իմաստ ունեցող՝ բանավոր հաղորդագրությունների մաս կազմող բառեր, բառակապակցություններ և առավել երկար պարբերություններ կազմելը և արտաբերելը, ինչպես օրինակ՝ բանավոր խոսքի միջոցով փաստ ներկայացնելը կամ պատմություն պատմելը):</i></p>	<p>1. Լսի՛ր և կրկնի՛ր հետևյալ բառերը՝ դաս, տաս, թաս, կար, գառ, քար, ծառ, սար, գառ, գայլ, ձուկ, ճառ, չար, ցուլ, ջուր, շուն, ժանգ, բադ, պատ, փիղ, խաղ:</p> <p>2. Հետևե՛լ երեխայի խոսքին գնահատման ողջ ընթացքում:</p>	
<p>d335</p>	<p>Ոչ վերբալ հաղորդագրություններ կազմելը <i>(Հաղորդագրություն փոխանցելու նպատակով ժեստեր, խորհրդանշաններ և նկարներ օգտագործելը, ինչպես օրինակ՝ գլուխը թափահարելն ի նշան անհամաձայնության կամ նկար կամ դիագրամ նկարելը՝ փաստ կամ բարդ միտք փոխանցելու համար՝ ներառյալ ժեստերի լեզու, նշաններ, խորհրդանշաններ, նկարներ և լուսանկարներ օգտագործելը):</i></p>	<p>1. Հարցերին պատասխանի՛ր առանց խոսքի: Ինչպե՛ս են ձեռքով ասում՝ ոչ: Ինչպե՛ս են ջուր խմում (բաժակով և ձեռքով): Ինչպե՛ս են փակում ականջները աղմուկից պաշտպանվելու համար: Ինչպե՛ս են ասում՝ չգիտեմ:</p> <p>2. Բաց թողնված բառերը ցո՛ւյց տուր ժեստերով. Երբ մարդիկ հանդիպում են, նախ և առաջ իրար ձեռք են սեղմում և ...: Երբ շոգում ենք, հովհարով անում ենք այսպես ...: Երբ մարդիկ ուրախ երաժշտություն են լսում, ձեռքերը բարձրացնում և ...:</p> <p>3. Դասավորի՛ր նկարներն ըստ հաջորդականության:</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 54.1, 54.2</p>
<p>d350</p>	<p>Ջրույցը <i>(Մտքերի և գաղափարների փոխանակումը սկսելը, շարունակելը և ավարտելը՝ բանավոր, գրավոր խոսքի, ժեստերի լեզվի կամ լեզվական այլ միջոցների օգնությամբ՝ ծանոթ կամ անծանոթ մեկ կամ մի քանի անձանց հետ՝ ֆորմալ կամ ոչ ֆորմալ իրավիճակներում՝ ներառյալ զրույցը սկսելը, շարունակելը և ավարտելը, մեկ կամ ավելի մարդկանց հետ զրույցելը):</i></p>	<p>1. Պատմի՛ր քո սիրելի տոնի մասին (ընթացքում երեխային տալ թեմայից բխող 3-4 հարց):</p> <p>2. Հետևե՛լ՝ ինչպես է երեխան սկսում, շարունակում և ավարտում զրույցը:</p>	
<p>d4. Շարժունակությունը</p>			
<p>d440</p>		<p>1. Բռնի՛ր առարկան երկու ձեռքով և դի՛ր սեղանին (հերթականությամբ առաջարկել փոքր, միջին և մեծ առարկաներ):</p>	

	<p>Դաստակի նուրբ շարժումներ կատարելը</p> <p><i>(Առարկաները բանեցնելուն առնչվող համակարգված գործողություններ կատարելը, առարկաները վերցնելը, բանեցնելը և բաց թողնելը ձեռքի, մատների կամ մեծ մատի օգնությամբ, ինչպես օրինակ՝ սեղանից մետաղադրամներ վերցնելը կամ բռնակը պտտեցնելը՝ ներառյալ վերցնելը, բռնելը, բանեցնելը և բաց թողնելը):</i></p>	<p>2. Սեղանից վերցրո՛ւ մետաղադրամները (10, 20, 50, 100, 200 դրամանոցներ):</p>	
		<p>3. Ուրվագծի՛ր տրված պատկերը մատիտով և կտրի՛ր մկրատով:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 25.1, 25.2 Խթանիչ նյութ՝ մկրատ</p>
		<p>4. 6-7 տարեկաններ Ներկի՛ր տրված պատկերը՝ փորձելով պահպանել եզրագծերը: 8-10 տարեկաններ Անցի՛ր ճանապարհով առանց թուղթը շարժելու, գծերի սահմանները խախտելու և գրիչը թղթից կտրելու:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 26</p>
<p>d460</p>	<p>Տարբեր վայրերում տեղաշարժվելը</p> <p><i>Տարբեր վայրերում կամ իրավիճակներում քայլելը և տեղաշարժվելը, ինչպես օրինակ՝ փան սենյակների միջև, շենքի ներսում կամ քաղաքի փողոցում քայլելը՝ ներառյալ փանը տեղաշարժվելը, փանը սողալը և բարձրանալը, փնից բացի այլ շինություններում, փնից և այլ շինություններից դուրս գտնվող փարածքում քայլելը կամ տեղաշարժվելը:</i></p>	<p>1. Կարողանո՞ւմ է երեխան տեղաշարժվել սեփական տանը՝ անցնելով սենյակից սենյակ, հարկից հարկ:</p>	
		<p>2. Կարողանո՞ւմ է երեխան տեղաշարժվել դպրոցում հարկից հարկ, դասասենյակից ճաշարան, միջանցք, մարզասրահ և այլ վայրեր:</p>	
		<p>3. Կարողանո՞ւմ է երեխան առանց տրանսպորտային միջոցից օգտվելու քայլել և տեղաշարժվել փոքր քաղաքի կամ գյուղի փողոցներում և ավելի երկար տարածություններում:</p>	
<p>d5. Ինքնասպասարկումը</p>			
<p>d530</p>	<p>Բնական կարիքները հոգալը</p> <p><i>(Արտաթորանքը (դաշտան, միզարձակում և կղազատում) հեռացնելու պահանջն զգալը, դրա հեռացումը պլանավորելն ու</i></p>	<p>1. Կարողանո՞ւմ ես ինքնուրույն օգտվել պետքարանից:</p>	

	<p>իրականացնելը և դրանից հետո մարմինը մաքրելը՝ ներառյալ միզարձակումը, կղազափրումը և դաշտանային պարբերաշրջանին առնչվող խնամքը կարգավորելը՝ բացառությամբ լվացվելու (d510), մարմնի մասերը խնամելու (d520)):</p>	<p>2. Կարողանո՞ւմ ես ինքնուրույն հետևել անձնական հիգիենային:</p>	
<p>d540</p>	<p>Հագնվելը (Հագուստը և կոշիկները հագնելուն և հանելուն ուղղված համակարգված գործողություններ և առաջադրանքներ հերթականությամբ կատարելը և կլիմայական ու սոցիալական պայմաններին հետևելը, ինչպես օրինակ՝ շապիկներ, կիսաշրջագեստներ, բլուզներ, վարդիքներ, ներքնագեստ, սարիներ, կիմոնոներ, զուգագուլպաներ, գլխարկներ, ձեռնոցներ, վերարկուներ, կոշիկներ և գուլպաներ, երկարաճիպք կոշիկներ, հողաթափեր և տնային մաշիկներ հագնելը, հարմարեցնելը և հանելը՝ ներառյալ հագուստ և կոշիկներ ու գուլպաներ հագնելը և հանելը, համապատասխան հագուստ ընտրելը):</p>	<p>1. Կարողանո՞ւմ ես ինքնուրույն հագնել և հանել հագուստի բոլոր տեսակները:</p> <p>2. Կարողանո՞ւմ ես կոճկել և արձակել բոլոր տեսակի շղթաները, կոճակները և ճարմանդները:</p> <p>3. Կարողանո՞ւմ ես ինքնուրույն հագնել և հանել հողաթափերը, կոշիկները:</p> <p>4. Կարողանո՞ւմ ես ընտրել եղանակին համապատասխան հագուստ:</p>	
<p>d550</p>	<p>Ուտելը (Սնունդ ստանալու կարիքն զգալը և մատուցված սննդամթերքը ուրելուն ուղղված համակարգված առաջադրանքներ և գործողություններ կատարելը, այն բերանին մոտեցնելը և այն տվյալ մշակույթում ընդունելի եղանակով ուտելը, սննդամթերքը մասերի բաժանելը կամ կտրելը, շեր և թիթեղամաններ բացելը, սեղանի սպասք օգտագործելը, արագ սնվելը, ճաշկերույթի կամ ճաշի մասնակցելը՝ բացառությամբ խմելու (d560)):</p>	<p>1. Կարողանո՞ւմ ես ինքնուրույն ուտել:</p> <p>2. Կարողանո՞ւմ ես ինքնուրույն կատարել կենցաղային աշխատանքներ՝ սեղան սպասարդել, ավսեններ լվանալ:</p> <p>3. Կարողանո՞ւմ ես սննդամթերքը մասերի բաժանել կամ կտրատել, սպասքից օգտվել:</p>	
<p>d6. Կենցաղը</p>			

d7. Միջանձնային շփումը և հարաբերությունները

<p>d710</p>	<p>Հիմնական միջանձնային փոխհարաբերություններ</p> <p><i>(Հիմնական միջանձնային փոխհարաբերություններ Մարդկանց հետ փոխազդելը փվյալ իրավիճակում և հասարակության համար ընդունելի եղանակով, ինչպես օրինակ՝ համապատասխան դեպքերում հոգաբարություն և հարգանք ցուցաբերելը կամ այլ անձանց զգացմունքներին արձագանքելը՝ ներառյալ հարաբերություններում հարգանք, ջերմություն, երախտագիտություն և հանդուրժողականություն ցույց տալը, հարաբերություններում քննադատությանը և սոցիալական ազդակներին արձագանքելը, և հարաբերություններում համապատասխան ֆիզիկական կոնտակտ ունենալը):</i></p>	<ol style="list-style-type: none"> 1. Կարողանո՞ւմ ես արդյոք (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4). <ul style="list-style-type: none"> • հեշտությամբ ընկերներիդ տալ քո սիրած խաղալիքը կամ իրը • հաշտվելու քայլ անել որևէ մեկին նեղացնելու դեպքում • ընդունել մեծահասակների խորհուրդները • քննարկման ժամանակ լսել ընկերներիդ կարծիքը • սպասել քո հերթին 2. Կարողանո՞ւմ ես արդյոք օգնել ընկերոջդ, երբ (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4, բոլոր հարցերի դեպքում օբյեկտիվ տվյալներ ստանալու համար երեխային հարցնել նաև, թե խնդիրների լուծման ինչ ուղիներ է առաջարկում). <ul style="list-style-type: none"> • հուզված է, լաց է լինում • խորհրդի կարիք ունի, չգիտի ինչպես վարվել • համարում է, որ իր մոտ ոչինչ չի ստացվում • բարկացած է, լարված է, պատրաստվում է ագրեսիվ վարք դրսևորել ինչ-որ մեկի նկատմամբ 3. Արդյո՞ք ցույց ես տալիս երախտագիտություն՝ ի պատասխան քեզ ցուցաբերած օգնության (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4, բոլոր հարցերի դեպքում օբյեկտիվ տվյալներ ստանալու համար երեխային լրացուցիչ հարցնել նաև, թե ինչպես է փորձում շնորհակալ լինել). <ul style="list-style-type: none"> • ծնողներիդ • հասակակիցներիդ • մեծահասակներին 4. Կարողանո՞ւմ ես արդյոք (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4). <ul style="list-style-type: none"> • դիմել մեծահասակին «Դուք»-ով • խոսելիս սպասել, մինչև դիմացինն ավարտի իր միտքը • շնորհակալություն հայտնել օգնություն ստանալու դեպքում • անհրաժեշտության դեպքում օգնել քեզանից փոքրերին
--------------------	--	---

		<p>5. Մասնագետը երեխայի երկու ձեռքերն ուրվագծում է սպիտակ թղթի վրա, այնուհետև կտրում ստացված պատկերները և ասում, որ ստացված երկու ձեռքերը ձեռնոցներ են՝ մեկն այժմ ձեռքի համար է, մյուսը՝ ձախ: Սակայն դրանք գունազարդված չեն, և պետք է գունազարդել այնպես, որ իրար նման լինեն: Այնուհետև մասնագետը վերցնում է ձեռնոցներից մեկը և սկսում տարբեր նախշեր նկարել նրա վրա, իսկ մյուս ձեռնոցը տալիս է երեխային՝ հետևելով նրա վարքին և ուշադրություն դարձնելով, թե արդյո՞ք երեխան առաջադրանքը կատարելիս փորձում է համաձայնության գալ մասնագետի հետ, արդյունավետ հաղորդակցվել, հաշվի առնել մասնագետի կատարածը և այլն (գնահատումն իրականացվում է Գ. Ա. Յուկերմանի «Ձեռնոցներ» մեթոդաբանության միջոցով):</p>	
Ճ8. Կյանքի հիմնական բնագավառները			
<p>Ճ820</p>	<p>Դպրոցական կրթությունը <i>(Դպրոց ընդունվելը, կրթություն ստանալը, ֆորմալ կրթությանը առնչվող բոլոր պարտականությունները կատարելը և ֆորմալ կրթության բոլոր առավելություններից օգտվելը, փարրական կամ միջնակարգ կրթական ծրագրի շրջանակներում ուսումնական նյութը, առարկաները և ուսումնական ծրագրի այլ պարտադիր բաղադրիչները սովորելը, այդ թվում՝ կանոնավոր կերպով դպրոց հաճախելը, այլ աշակերտների հետ համագործակցելը, ուսուցիչներից առաջադրանքներ ստանալը, հանձնարարված առաջադրանքների ու նախագծերի կատարումը կազմակերպելը, դրանք ուսումնասիրելը և կատարելը, և կրթության այլ փուլերին պատրաստվելը):</i></p>	<ol style="list-style-type: none"> 1. Կարողանո՞ւմ է երեխան համագործակցել համադասարանցիների, ուսուցիչների հետ: <ul style="list-style-type: none"> 0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք 2. Արդյո՞ք երեխայի կրթական (ակադեմիական) մակարդակը համապատասխանում է չափորոշչային պահանջներին: 3. Կարողանո՞ւմ է երեխան պատշաճ կերպով կատարել հանձնարարված առաջադրանքները: <ul style="list-style-type: none"> 0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք 4. Արդյո՞ք կանոնավոր կերպով հաճախում ես դասերին. ընտրի՛ր քեզ համապատասխանող տարբերակը. <ul style="list-style-type: none"> 0 միշտ հաճախում եմ 	

		<ol style="list-style-type: none"> 1 երբեմն բացակայում եմ 2 հաճախ բացակայում եմ 3 հազվադեպ եմ հաճախում 4 երբեք չեմ հաճախում: 	
		<ol style="list-style-type: none"> 5. Արդյո՞ք Ձեր երեխան մասնակցում է դպրոցում կազմակերպված միջոցառումներին մյուս աշակերտների հետ միասին: <ol style="list-style-type: none"> 0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք 	
d880	<p>Խաղերի մեջ ներգրավվելը</p> <p><i>(Առարկաներով, խաղալիքներով, նյութերով կամ խաղերով նպատակատուղված, հեղինակական կերպով զբաղվելը՝ ինքնուրույն կամ այլ անձանց հետ միասին):</i></p>	<ol style="list-style-type: none"> 1. (*) Խաղում ենք «Անուններ» (մարդկանց, ծաղիկների, կենդանիների, քաղաքների): Ուշադի՛ր լսիր, ես կասեմ ծաղկի անուն, դու պետք է շարունակես և ասես նոր անուն իմ ասած բառի վերջին տառով (խոսքով չհաղորդակցվող երեխաների հետ խաղալ այլ խաղեր, օրինակ՝ դոմինո): 2. Խաղում ենք խաղ «Մոծակ»: Ուշադի՛ր լսիր խաղի կանոնները և փորձի՛ր դրանք պահպանել: 3. Մասնակցո՞ւմ ես խմբային խաղերին՝ պահպանելով քայլերի հաջորդականությունը և կանոնները: 	Խթանիչ նյութ՝ խաղ «Մոծակ»
d9. Համայնքային, սոցիալական և քաղաքացիական կյանքը			

Հաղորդակցման արձանագրություն

Հարցեր, որոնց դիմաց դրված է մեկ աստղանիշ (*)՝ խոսքով չհաղորդակցվող երեխաների դեպքում հնարավորություն տալ կարդալու, ճիշտ տարբերակը մատնանշելու կամ գրավոր տարբերակով պատասխանելու:

Խոսքով չհաղորդակցվող երեխաների համար որպես այլընտրանք, առկայության դեպքում, կիրառել հարցի (բ) տարբերակը:

Հարցեր, որոնց դիմաց չկա նշված որևէ տարիքային խումբ՝ կիրառելի են 6-10 տարեկան բոլոր երեխաների համար:



Գործունեության և մասնակցության ծածկագրեր		Հարցեր	Անհրաժեշտ նյութեր
d1. Սովորելը և գիտելիքներ կիրառելը			
d110	<p>Դիտելը (նայելը)</p> <p><i>(Տեսողական ազդակներ ընկալելու նպատակով տեսողության զգայարանը մտադրված կերպով օգտագործելը, ինչպես, օրինակ՝ առարկային հեղուկները, մարդկանց դիտելը, սպորտային իրադարձություն, որևէ անձի կամ խաղացող երեխաներին նայելը):</i></p>	<ol style="list-style-type: none"> Խմբավորի՛ր հիմնական գույներն ըստ երանգների (երեխայի առջև դնել կարմիր, կանաչ, կապույտ, դեղին գույնի մատիտներ): <p>6-7 տարեկաններ Գտի՛ր բացակայող հատվածը և տեղադրի՛ր:</p> <p>8-10 տարեկաններ (* Ի՞նչ պատկեր և ի՞նչ թիվ ես տեսնում նկարներում (խոսքով չհաղորդակցվող երեխան մատնանշում է պահանջված թիվը և պատկերը):</p> <p>6-7 տարեկաններ Գտի՛ր ստվերի համապատասխան պատկերը:</p> <p>8-10 տարեկաններ Ցո՛ւյց տուր նկարում պատկերված բոլոր քառանկյուններն ու եռանկյունները:</p> Երեխային առաջարկել նկար և հետևել, թե աչքերից ինչ հեռավորության վրա է պահում (արդյունքը կլինի բարձր, եթե երեխան նկարը պահում է 25-30սմ հեռավորության վրա և չի անտեսում պատկերված մանր առարկաները): 	<p>Խթանիչ նյութ՝ գունավոր մատիտներ</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 26.1 նկար 26.2</p> <p>Խթանիչ նյութ՝ խաղ «Գտիր ստվերը» Աշխատանքային տետր՝ առաջադրանք 1</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 27</p>
d115	<p>Լսելը</p>	<ol style="list-style-type: none"> (* Լսի՛ր և կրկնի՛ր հնչեցված բառերը՝ կատու, սեղան, շուն, տուն, մեքենա, մատիտ, աղջիկ, խոզ, կով, նապաստակ (բառերն արտասանել 6 մետր հեռավորությունից, երեխայի մեջքի կողմից, խոսքով 	<p>Խթանիչ նյութ՝ նկար 2, 3</p>

	<p>(Լսողական ազդակները ընկալելու նպատակով խողովոջան զգայարանը մտադրված կերպով օգտագործելը, ինչպես, օրինակ՝ ռադիո, մարդու ծայն, երաժշտություն, դասախոսություն կամ պատմվածք ունկնդրելը):</p>	<p>չհաղորդակցվող երեխաները միայն մատնանշում են համապատասխան նկարները):</p> <p>2. (*) Լսի՛ր և կրկնի՛ր հնչեցված բառերը՝ կատու, շուն, տուն, մեքենա, կով, նապաստակ (բառերն արտասանել շշուկով, 6 մետր հեռավորությունից, երեխայի մեջքի կողմից, խոսքով չհաղորդակցվող երեխաները միայն մատնանշում են համապատասխան նկարները):</p> <p>3. (*) Կրկնի՛ր նախադասությունները (նախադասությունները կարդալ առանձին, խոսքով չհաղորդակցվող երեխան մատնանշում է պահանջված նկարները): Լուսինը լույս է տալիս: Գարնան առաջին ծաղիկը ձնծաղիկն է: Սեղանին դրված էր դանակ, պատառաքաղ, գդալ:</p> <p>4. (*) Լսի՛ր և նշի՛ր, թե որ հնչյունով է սկսվում և ավարտվում տվյալ բառը. Նուռ, կատու, անձրև, քարտեզ, ծաղիկ, նապաստակ (խոսքով չհաղորդակցվող երեխային առաջարկել ցույց տալ բառի առաջին և վերջին տառերը: Կիրառելի չէ այն երեխաների համար, ովքեր տառաճանաչ չեն):</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 2, 3</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 28</p> <p>Խթանիչ նյութ՝ փայտե գրատախտակ հայերեն տառերով</p>
<p>d120</p>	<p>Այլ զգայարանների նպատակային օգտագործումը</p> <p>(Ազդակներ ընկալելու նպատակով օրգանիզմի այլ հիմնական զգայարանները մտադրված կերպով օգտագործելը, ինչպես օրինակ՝ մակերևույթի կազմվածքը (տեքստուրան) շոշափելը և շոշափելով զգալը, քաղցրավենիքի համը փորձելը կամ ծաղիկների հոտն առնելը):</p>	<p>1. Կարողանո՞ւմ է երեխան իր տարիքին համապատասխան ուսումնասիրել նոր առարկաները՝ հիմնականում դրանց նայելով և շոշափելով: Համի և հոտառության զգայարանները կիրառո՞ւմ է հարկ եղած ժամանակ: Փոքր, աննշան ցավի դեպքում ցուցաբերո՞ւմ է համապատասխան՝ ոչ բուռն անհանգստություն:</p> <p>2. Արդյո՞ք երեխան.</p> <ul style="list-style-type: none"> • համառորեն շարունակում է առարկաները դնել բերանը: • ժամանակ առ ժամանակ հոտոտում կամ համտեսում է այն, ինչ ուտելի չէ: • անտեսում կամ չափից ավելի բուռն է արձագանքում կամ թոցին կամ մեկ այլ թեթև ցավի, որն իր տարիքի երեխայի մոտ կարող է արտահայտվել թեթև անհանգստությամբ: <p>3. Արդյո՞ք երեխան շատ բուռն է արձագանքում համին, հոտին և հպմանը: Չափից ավելի մտահոգվա՞ծ է որևէ մեկի հպումով, փորձո՞ւմ է հոտոտել և համտեսել ոչ ուտելի առարկաները և մարդկանց: Արդյո՞ք չափազանց ուժեղ կամ թույլ է արձագանքում ցավին:</p>	

		4. Արդյո՞ք երեխան ավելի շատ հետաքրքրված է առարկաները համտեսելու, շոշափելու և հոտոտելու զգացողությամբ, առարկաների յուրովի ուսումնասիրմամբ և օգտագործմամբ: Արդյո՞ք անտեսում է ցավը կամ ծայրահեղ բուռն է արձագանքում մի փոքր անհարմարություն պատճառող ցավին:	
d135	Կրկնելու միջոցով սովորելը <i>(Իրադարձությունների կամ խորհրդանիշների հաջորդականությունը կրկնելը՝ որպես սովորելու հիմնական բաղադրիչ, ինչպես, օրինակ՝ ժեստերի միջոցով կամ առանց ժեստերի տասնյակներով հաշվելու կամ բանաստեղծություն արտասանելու մեջ վարժվելը՝ ներառյալ գործողության կամ վարքագծի հետագա նմանակումը):</i>	1. (*) Արտասանի՞ր որևէ բանաստեղծություն կամ հաշվի՞ր (6-7 տարեկաններ՝ 1-10 մեխանիկական հաշիվ, 8-10՝ տասնյակներով կամ հարյուրյակներով, խոսքով չհաղորդակցվող երեխան կարող է գրել կամ ցույց տալ ժեստերով):	
		2. 6-7 տարեկաններ (*) Ցո՛ւյց տուր, թե լուսակրի որ գույնն ինչ է նշանակում (խոսքով չհաղորդակցվող երեխան մատնանշում է լուսակրի գույները): 8-10 տարեկաններ (*) Ցո՛ւյց տուր, թե որ նշանն ինչ է նշանակում (խոսքով չհաղորդակցվող երեխան մատնանշում է համապատասխան նշանը՝ <ul style="list-style-type: none"> • վերգետնյա հետիոտնային անցում • ստորգետնյա հետիոտնային անցում • հետիոտնային անցում 	Խթանիչ նյութ՝ նկար 33
		3. Պատրաստի՞ր թղթից նավակ կամ բաժակ՝ հետևելով և հաջորդաբար կրկնելով իմ քայլերը:	Խթանիչ նյութ՝ նկար 34
d161	Ուշադրությունը պահպանելը <i>(Համապատասխան ժամանակահատվածում կոնկրետ գործողություններին կամ առաջադրանքներին ուղղված ուշադրությունը մտադրված կերպով պահպանելը):</i>	1. Կարդալուն զուգահեռ երեխային ցույց տալ, որ աստղի մեջ պատկերված է շրջան, քառակուսու մեջ՝ խաչ, սրտիկի մեջ՝ երկու գծիկ, իսկ շրջանի մեջ՝ մեկ գծիկ: Ներքևում դասավորված պատկերների մեջ անհրաժեշտ է տեղադրել համապատասխան նշանները: Կատարի՞ր այդ աշխատանքը յուրաքանչյուր տողի համար:	Աշխատանքային տետր՝ առաջադրանք 5
		2. Նկարում խճճված գծերից յուրաքանչյուրը վերջանում է ինչ-որ թվի վրա, օրինակ՝ 1-ը վերջանում է 5 թվի վրա: Ցո՛ւյց տուր, թե որ թվերի վրա են վերջանում մնացած գծերը:	Աշխատանքային տետր՝ առաջադրանք 6
		3. ա) Ուշադիր լսի՞ր արտահայտությունները, որոնք կկարդամ, մտապահիր, որպեսզի կրկնես: Ամռանը շոգ է: Երեխաները խաղում են: Ծառերի վրա մրգեր են աճում:	Խթանիչ նյութ՝ փայտե փազլ

		<p>Տղան օգնում է տատիկին: Լճակում նավակ է լողում:</p> <p>բ) Դասավորի՛ր պատկերներն այնպես, ինչպես դրված են (5 երկրաչափական պատկերները ցուցադրել հերթականությամբ, ապա խառնել):</p>	
		<p>4. 6-7 տարեկաններ (*) Նայի՛ր նկարին, փորձի՛ր մտապահել պատկերները, որպեսզի հետո դրանք թվարկես (պահել նկարը 20 վայրկյան, ապա՝ շրջել: Խոսքով չհաղորդակցվող երեխաներին առաջարկել նկար 38-ի առանձին բաղադրիչների և հարցաշարում առկա 4 այլ առարկայական նկարների խմբից ընտրել այն պատկերները, որոնք առկա են եղել ցուցադրված նկարում):</p> <p>8-10 տարեկաններ Ուշադիր նայիր թվերին 20 վայրկյան, այնուհետև նույնությամբ տեղադրի՛ր աղյուսակի դատարկ վանդակներում (փակել թվերով տարբերակը):</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 38</p> <p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 7</p>
		<p>5. (**) Կկարդամ 10 բառ, որից հետո ցանկացած հաջորդականությամբ կկրկնես այնքանը, որքանը հիշեցիր. անտառ, մուրճ, հաց, դուռ, ձի, սունկ, բեռ, ջուր, աթոռ, մեղր (կիրառելի չէ խոսքով չհաղորդակցվող երեխաների համար):</p>	
<p>d163</p>	<p>Մտածելը</p> <p><i>(Մտքեր, գաղափարներ և պատկերներ ձևակերպելը՝ նպատակաուղղված կամ ոչ նպատակաուղղված կերպով, ինքնուրույն կամ այլոց հետ միասին, մտածելուն առնչվող գործողությունների հետ կապված՝ ինչպես օրինակ՝ միտք արտահայտելը, ձևանալը, բառախաղը, մտացածին բան ստեղծելը, թեորեն ասացուցելը, մտքերով խաղալը,</i></p>	<p>1. (*) Ո՞ր բառն է ավելորդ՝ բազմոց, պահարան, բաժակ, աթոռ (6 տարեկան և խոսքով չհաղորդակցվող երեխաների համար կարող եք կիրառել նկար-քարտեր):</p> <p>2. Գտի՛ր համապատասխան հատվածը. (6-7 տարեկանների համար կիրառել Ռավենի պրոգրեսիվ մատրիցաների B12, B8 տարբերակները, իսկ 8-10 տարեկանների համար՝ C3, C1, C9, D4 տարբերակները):</p> <p>3. 6-7 տարեկաններ Դասավորի՛ր նկարները ճիշտ հաջորդականությամբ:</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 39</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 40</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 41</p>

	<p>մտազրոհը, մտասուզվելը (մեղհիտացիա), մտորելը, խորհրդածելը կամ խորհելը):</p>	<p>4. (*) Ո՞ր տարբերակը կընտրես շնիկին բույն պատրաստելու համար (6 տարեկան և խոսքով չհաղորդակցվող երեխաների համար կարող եք կիրառել նկար-քարտեր). ա) մեխ, պարան, մուրճ, փայտ բ) սղոց, մեխ, մուրճ, փայտ գ) փայտ, բահ, մեխ, մուրճ:</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 42</p>
<p>d166</p>	<p>Կարդալը <i>(Գրավոր խոսքը (օրինակ, գրքեր, ցուցումներ, թերթեր՝ սովորական տեքստի կամ Բրայլի այբուբենով գրված) ընկալելուն և վերծանելուն առնչվող գործողություններ կատարելը՝ ընդհանուր գիտելիք կամ հատուկ տեղեկություն ստանալու համար՝ ներառյալ ստանդարտ տառերով կամ նիշերով կազմված գրավոր խոսքը, ինչպես նաև յուրահատուկ խորհրդանշաններով, օրինակ՝ պատկերանշաններով կազմված տեքստն ընկալելը և մեկնաբանելը):</i></p>	<p>1. 6-7 տարեկաններ (*) ԹՎարկի՞ր «Ն» հնչյունով սկսվող մի քանի բառ (6 տարեկան և խոսքով չհաղորդակցվող երեխաներին առաջարկել նապաստակի, նռան, նարնջի և հարցաշարում առկա ցանկացած 3 այլ առարկայական նկարների խմբից ընտրել այն առարկաների պատկերները, որոնք սկսվում են «Ն» հնչյունով):</p> <p>2. 6-7 տարեկաններ Հեզի՞ր հետևյալ բառերը՝ տուն, ներկ, գազար, բազմոց, պահարան, եղանակ:</p> <p>3. 6-7 տարեկաններ (*) Ամբողջացրո՞ւ հետևյալ տառերը՝ ձ-ու-կ, կ-ա-տ-ու, ն-ա-պ-ա-ս-տ-ա-կ, լ-ու-ս-ա-ց-ու-յ-ց (խոսքով չհաղորդակցվող երեխան քարտերից ցույց է տալիս համապատասխան բառիմաստը պարունակող նկարը):</p> <p>4. 6-7 տարեկաններ (*) Կարդա՞ հանձնարարված նյութը (կիրառելի չէ առաջին դասարանի նախաայբբենական շրջանում սովորող երեխաների համար, այբբենական շրջանում երեխային առաջարկել բառեր իր անցած տառերով, խոսքով չհաղորդակցվող երեխաների դեպքում առաջարկել տեքստի բովանդակությանը համապատասխանող և դրան հակասող նկարներ, որտեղից երեխան պետք է ընտրություն կատարի):</p> <p>5. 6-7 տարեկաններ (*) Պատասխանի՞ր տեքստի կամ բառակապակցությունների, պարզ համառոտ նախադասությունների վերաբերյալ 2 հարցի՝ հարցադրումներն ուղղելով նույն ծածկագրի 4-րդ առաջադրանքին համապատասխան (կիրառելի չէ առաջին դասարանի նախաայբբենական շրջանում սովորող երեխաների համար, խոսքով</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 2, 8, 32</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 3, 2, 33, 36,</p> <p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 8, Խթանիչ նյութ՝ 41, 49, 28</p>

		<p>չհաղորդակցվող երեխայի դեպքում միավորը սահմանել՝ հաշվի առնելով տվյալ ծածկագրի առաջադրանք 4-ի արդյունքները):</p>	
		<p>6. 8-10 տարեկաններ Տրված բառերից ստացիր 3 նոր բառ՝ մեկական տառ փոխելով, օրինակ՝ պատ-պար):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 9</p>
		<p>7. 8-10 տարեկաններ (*) Կարդա՛ հանձնարարված նյութը (խոսքով չհաղորդակցվող երեխաների դեպքում առաջարկել կարդացածը ներկայացնել տեքստի բովանդակությանը համապատասխանող և դրան հակասող նկարների միջոցով, որտեղից երեխան պետք է ընտրություն կատարի կամ գրելու տարբերակով):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 10, խթանիչ նյութ՝ նկար 43</p>
		<p>8. 8-10 տարեկաններ (*) Պատասխանի՛ր տեքստի վերաբերյալ հարցերին (երեխային ուղղել 3-4 հարց, խոսքով չհաղորդակցվող երեխաների դեպքում միավորը սահմանել՝ հաշվի առնելով տվյալ ծածկագրի առաջադրանք 7-ի արդյունքները):</p>	
		<p>9. 8-10 տարեկաններ Տեղադրի՛ր տրված ածականները համապատասխան նախադասություններում:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 11</p>
d170	<p>Գրելը</p> <p><i>(Նիշեր կամ տառեր գրելը, պատկերելը կամ վերարտադրելը տեղեկատվություն հաղորդելու համար, ինչպես օրինակ՝ իրադարձություններ կամ մտքեր գրի առնելը կամ նամակ կազմելը, գրառումներ, նշումներ և գրավոր հանձնարարություն կատարելը, տպելը):</i></p>	<p>6-7 տարեկաններ</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 12</p>
		<p>1. Միացրո՛ւ տրված կետերը մեկ գծով առանց ընդհատելու:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 13</p>
		<p>2. Արտագրի՛ր տրված նյութը (6 տարեկան երեխաները կարող են գրել մասնիկներ ըստ օրինակի):</p>	
		<p>3. Գրի՛ր բառեր, բառակապակցություններ, պարզ համառոտ նախադասություններ (թելադրել բառեր, բառակապակցություններ, պարզ համառոտ նախադասություններ, որոնք կազմված են երեխային արդեն ծանոթ տառերով):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 14</p>
		<p>4. 8-10 տարեկաններ Կազմի՛ր բառեր և գրի՛ր դրանք առանձին տեղում:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 15</p>
		<p>5. 8-10 տարեկաններ Կազմի՛ր նախադասություն քո կազմած բառերով:</p>	

		<p>6. 8-10 տարեկաններ Գրի՛ր թելադրություն: Պապս ամեն օր աշխատում էր իր այգում: Տարիներ առաջ նա ընտրեց քարքարոտ այդ հողակտորը: Մաքրեց այն, ծառեր տնկեց ու մշակեց: Աշնանն այգու բազմագույն պտուղները պսպղում էին արևի ճառագայթների տակ:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 16</p>
		<p>7. 8-10 տարեկաններ Գրի՛ր նամակ ում կցանկանաս:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 17</p>
<p>d172</p>	<p>Հաշվելը <i>(Հաշվարկներ կատարելը՝ բառերով արտահայտված խնդիրները լուծելու նպատակով մաթեմատիկական սկզբունքներ կիրառելու միջոցով կամ պատասխանները ստանալով կամ ցուցադրելով, ինչպես օրինակ երեք թվերի գումարը հաշվարկելը կամ մեկ թիվը մյուսով բաժանելու պատասխանը գտնելը):</i></p>	<p>1. 6-7 տարեկաններ Թվերի շարքում լրացրո՛ւ այն թվերը, որոնք չկան (առաջադրանքը կատարել բանավոր կամ գրավոր):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 18</p>
<p>2. 6-7 տարեկաններ (*) Ունենք շարքով դասավորված 9 մատիտ: Քանի՞ մատիտ կդառնա շարքում, եթե սկզբից և վերջից ավելացնենք մեկական մատիտ (խոսքով չհաղորդակցվող երեխան կարող է պատասխանել ժեստերի միջոցով):</p>	<p>Խթանիչ նյութ՝ գունավոր մատիտներ</p>		
<p>3. 6-7 տարեկաններ Բաժանի՛ր 6 մատիտները երկու հոգու այնպես, որ յուրաքանչյուրը ստանա հավասար քանակով մատիտներ:</p>			
<p>4. 6 տարեկաններ (*) Համեմատի՛ր միանիշ թվերը և բանավոր նշի՛ր՝ որն է մեծ, որը՝ փոքր (անհրաժեշտության դեպքում թվաքարտերի փոխարեն կիրառել հաշվեճողիկներ, խոսքով չհաղորդակցվող երեխան կարող է պատասխանել ժեստերի միջոցով):</p>	<p>Խթանիչ նյութ՝ փայտե գրատախտակ հայերեն տառերով</p>		
<p>5. 7 տարեկաններ Համեմատի՛ր միանիշ թվերը (քարտեր) և աստղանիշի փոխարեն դի՛ր համապատասխան նշանը՝ <, >, =:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 19</p>		
<p>6. 6-7 տարեկաններ Կատարի՛ր տրված առաջադրանքները (անհրաժեշտության դեպքում կիրառել հաշվեճողիկներ):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 20</p>		
<p>7. 8-10 տարեկաններ Լրացրո՛ւ աղյուսակը (երեխային մտածելու համար տալ 1 թույլ ժամանակ, եթե դժվարանում է՝ միջամտել):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 21</p>		

		<p>8. Քանի՞ անգամ պետք է ծախել 8 սմ կողմեր ունեցող քառակուսի կտրված թուղթը, որպեսզի ստանանք 2 սմ կողմերով քառակուսի (երեխային տրամադրվում է կտրված թուղթը և մտածելու համար տրվում է 1 րոպե):</p> <p>9. Տեղադրի՛ր 8, 4, 0 թվերը յուրաքանչյուր տառի փոխարեն (երեխային մտածելու համար տրվում է մինչև 2 րոպե ժամանակ):</p> <p>10. Կատարի՛ր տրված առաջադրանքները:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 22</p> <p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 23</p>
d175	<p>խնդիրներ լուծելը</p> <p><i>(Հարցադրումների կամ իրավիճակների համար լուծումներ գտնելը՝ հարցերի էությունը որոշելու և վերլուծելու, տարբերակներ և լուծումներ կազմելու, լուծումների հնարավոր արդյունքները գնահատելու և ընտրված լուծումը կատարելու միջոցով, ինչպես օրինակ՝ երկու մարդկանց միջև վեճ լուծելիս՝ ներառյալ պարզ և բարդ խնդիրներ լուծելու հմտությունները՝ բացառությամբ մտածելու (d163), որոշումներ կայացնելու (d177)):</i></p>	<p>1. (*) Ինչպե՞ս կվարվես, եթե բակում խաղալիս գնդակը ծակվի (խոսքով չհաղորդակցվող երեխային առաջարկել նկարել՝ տրամադրելով մատիտ, որը սրած չէ, և որով հնարավոր չէ նկարել, զուգահեռաբար սեղանին դնել առարկաներ, որոնց մեջ կա նաև սրիչ):</p> <p>2. 6-7 տարեկաններ (*) Նայի՛ր նկարին. ինչպե՞ս կվարվես տվյալ իրավիճակում (խոսքով չհաղորդակցվող երեխան կարող է պատասխանել ժեստերի միջոցով):</p> <p>8-10 տարեկաններ Ինչպե՞ս կարելի է ստանալ 1լ ջուր՝ օգտագործելով 2 և 3 լիտրանոց տարաներ:</p> <p>3. Արդյո՞ք երեխան կարողանում է լուծումներ գտնել կենցաղում կամ միջանձնային հարաբերություններում հանդիպող խնդիրների դեպքում. 0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 44</p>
d2. Ընդհանուր առաջադրանքները և պահանջները			
d230	<p>Անօրյա կյանքը կազմակերպելը</p> <p><i>(Պարզ կամ բարդ և համակարգված գործողություններ իրականացնելը՝ անօրյա կյանքը կամ պարպականությունները</i></p>	<p>1. Նշի՛ր գործողություններ, որոնք (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4)</p> <ul style="list-style-type: none"> • կատարում ես օրվա ընթացքում • առավել կարևոր են • կարող ես հետաձգել: 	

	<p><i>պլանավորելու, կառավարելու և կատարելու համար, ինչպես օրինակ՝ օրվա ընթացքում ժամանակը պլանավորելը և առանձին գործողությունների համար ծրագրեր կազմելը՝ ներառյալ առօրյա կյանքը կառավարելը և առօրյա գործունեություն իրականացնելը, սեփական կենսագործունեության մակարդակը կառավարելը՝ բացառությամբ համալիր առաջադրանքներ կատարելու (d220)):</i></p>	<p>2. Կարողանում ես արդյոք հետաքրքիր պլանավորել և անցկացնել քո հանգստյան օրը (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4)՝</p> <ul style="list-style-type: none"> • որոշելով կատարվելիք գործողությունների հերթականությունը, • անհրաժեշտության դեպքում կատարելով փոփոխություններ: 	
		<p>3. Կարողանում ես արդյոք (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4).</p> <ul style="list-style-type: none"> • տրված առաջադրանքը ժամանակին ավարտել • չուշանալ ընկերների հետ հանդիպումից • դպրոց հասնել մինչև դասերի սկսվելը: 	
<p>d240</p>	<p>Սթրեսը և այլ տեսակի հոգեբանական լարվածությունը կառավարելը</p> <p><i>(Պարզ կամ բարդ և համակարգված գործողություններ կատարելն այնպիսի հոգեբանական լարվածություն կառավարելու և վերահսկելու համար, որը պահանջվում է զգալի պարտականությունների, սթրեսային ու ճգնաժամային իրավիճակների և ուշադրությունը շեղելու հետ կապված առաջադրանքներ կատարելիս, ինչպես օրինակ՝ քննություններ հանձնելը, ծանրաբեռնված երթևեկության մեջ փոխադրամիջոց վարելը, հագնվելը, երբ ծնողները շտապեցնում են, առաջադրանքը որոշակի ժամկետում ավարտելը կամ երեխաների մեծ խմբի մասին հոգ տանելը՝ ներառյալ պարտականություններ կատարելը, սթրեսը և ճգնաժամը կառավարելը):</i></p>	<p>1. Արդյո՞ք կարողանում ես կառավարել հոյզերի արտահայտումը, երբ (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4)՝</p> <ul style="list-style-type: none"> • չեն կատարվում քո ցանկությունները • չես հասցնում ժամանակին կատարել կարևոր առաջադրանքը • հայտնվում ես նոր միջավայրում • նախապատրաստվում ես քննություններին • չես հասցնում ավարտին հասցնել գրավոր աշխատանքը • ստանում ես նկատողություն • ենթարկվում ես քննադատության: 	
		<p>2. Լարված իրավիճակներում չեմ կատարում նյարդային շարժումներ (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4).</p> <ul style="list-style-type: none"> • ծանոթ միջավայրում • անծանոթ միջավայրում: 	
		<p>3. Նկարի՛ր 100 շրջան 30 վայրկյանի ընթացքում (միավորը սահմանել դիտարկման արդյունքում):</p>	
<p>d2500</p>	<p>Նորություն ընդունելը</p> <p><i>(Վարքագիծը և հույզերի արտահայտումը կառավարելը՝ նոր առարկաների</i></p>	<p>1. Կարողանո՞ւմ է արդյոք երեխան (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4).</p> <ul style="list-style-type: none"> • իրեն ծանոթ միջավայրում տեղի ունեցող փոփոխությունների դեպքում դրսևորել համարժեք հուզական և վարքային արձագանք՝ 	

	<p><i>հայրնվելուն կամ իրավիճակների առաջանալուն համապատասխան դրական արձագանք դրսևորելիս):</i></p>	<p>զարմանալ, ուրախանալ, հետաքրքրվել (օրինակ՝ իրերի տեղափոխություն տանը, ամենօրյա ճանապարհի փոփոխություն)</p> <ul style="list-style-type: none"> • նոր և անձանոթ առարկայի կամ նյութի հանդիպելիս կառավարել սեփական վարքագիծը կամ հույզերը (օրինակ՝ նոր հագուստ, կերակրատեսակ) • հարմարվել նոր միջավայրին առիթների ժամանակ (ծնունդ կամ այլ միջոցառում): 	
		<p>2. Հետևել երեխայի արձագանքին (երեխային անակնկալ ներկայանալ կենդանու կերպարով դիմակով կամ ծաղրածուի քթով).</p> <p>0 երեխան դրսևորում է դրական հուզական և վարքային արձագանք</p> <p>1 երեխայի մոտ որոշակի լարվածություն է նկատվում, որն արագ անցնում է</p> <p>2 երեխայի մոտ հուզական լարվածություն կա, սակայն նկատելի է, որ փորձում է կառավարել այն</p> <p>3 երեխան հուզվում է, փակում է աչքերը, որ չնայի</p> <p>4 երեխան բացասական հուզական և վարքային արձագանք է դրսևորում կամ որևէ կերպ չի արձագանքում (բղավում է, փորձում է քաշել-հանել դիմակը):</p>	
<p>d2501</p>	<p>Պահանջներին արձագանքելը</p> <p><i>(Վարքագիծը և հույզերի արտահայտումը համապատասխանաբար կառավարելը իրական կամ ընկալվող սպասելիքներին կամ պահանջներին արձագանքելիս):</i></p>	<p>1. Կարողանո՞ւմ է արդյոք երեխան (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4).</p> <ul style="list-style-type: none"> • հարմարվել դպրոցական միջավայրին՝ հետևելով սահմանված կանոններին • դադարեցնել գործողությունն անմիջապես, երբ ստանում է նման հրահանգ: <p>2. Պատկերացրու իրավիճակ. դու ցանկանում ես ընկերոջդ (ընկերուհուդ) հետ բակում խաղալ, բայց թույլ չեն տալիս, քանի որ տնային հանձնարարություններդ դեռ չես ավարտել: Կարողանո՞ւմ ես արդյոք կառավարել վարքագիծդ.</p> <p>0 միշտ</p> <p>1 հաճախ</p> <p>2 երբեմն</p> <p>3 հազվադեպ</p> <p>4 երբեք</p>	

		<p>3. Կանգնի՛ր աթոռի մոտ և մի՛ շարժվիր, որպեսզի ստանաս մրցանակ (30 վայրկյան, հետևե՛լ ինչպես է երեխան ենթարկվում պահանջին):</p>	
		<p>4. Կարողանո՞ւմ ես արդյոք պահպանել ինքնակառավարումդ և հետևել տվյալ վայրին հատուկ կարգուկանոնին մարդաշատ վայրերում (ճաշարան, հավաքույթներ, էքսկուրսիաներ, միջոցառումներ). 0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p>	
<p>d2502</p>	<p>Անձանց դիմելը կամ իրավիճակներում մոտեցում դրսևորելը <i>(Վարքագիծը և հույզերի արտահայտումը կառավարելը՝ անձանց հետ համապատասխան շփումը սկսելու կամ որևէ իրավիճակներում մոտեցում դրսևորելու ժամանակ):</i></p>	<p>1. Նկարի՛ր շրջան (երեխային տալ չգրող գրիչ և հետևել նրա հետագա գործողություններին. արդյո՞ք դիմում է օգնության կամ ընդունում օգնության առաջարկը):</p>	
		<p>2. Պատկերացրու իրավիճակ. դասընկերներիցդ մեկը քո նկատմամբ ցուցաբերում է բացասական վերաբերմունք, սակայն դուք միասին ունեք խմբային աշխատանք: Կարողանո՞ւմ ես արդյոք կառավարել վարքագիծդ, դիմել նրան ու կատարել առաջադրանքը. 0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p>	

		<p>3. Կարողանո՞ւմ ես արդյոք կառավարել վարքագիծդ և հույզերիդ դրսևորումները խաղահրապարակում կամ այլ միջավայրում այլ երեխաների հետ ծանոթանալու կամ որևէ հարցով նրանց դիմելու նպատակով, եթե նրանք քեզ չեն զիջում կամ թելադրում են իրենց կանոնները և այլն.</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p>	
d2503	<p>Կանխատեսելի կերպով գործելը</p> <p><i>(Վարքագիծը և հույզերի արտահայտումը կառավարելը՝ պահանջներին կամ սպասելիքներին արձագանքող հեղուղական ջանքերի տեսքով):</i></p>	<p>1. Կարողանո՞ւմ ես արդյոք դրսևորել իրավիճակի պահանջներին համապատասխան կանխամտածված վարքագիծ և հույզեր, օրինակ՝ հավաքել իրերդ մինչև մայրիկի բարկանալը.</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p>	
		<p>2. Ինչպե՞ս կվարվես դու նման իրավիճակում:</p>	Խթանիչ նյութ՝ նկար 47
		<p>3. Կարողանո՞ւմ ես արդյոք կառավարել սեփական վարքագիծդ և չանել գործողություններ, որոնք կարող են դուր չգալ դասընկերներիդ, օրինակ՝ առանց հարցնելու վերցնել նրանց իրերը և այլն.</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p>	
d3. Հաղորդակցությունը			
d315	<p>Հաղորդակցվելիս ոչ բանավոր հաղորդագրություններ ընկալելը</p>	<p>1. 6-7 տարեկաններ</p> <p>(*) Ի՞նչ է պատկերված (խոսքով չհաղորդակցվող երեխան կարող է ներկայացնել ժեստերի միջոցով կամ մատնանշել պահանջված նկարը):</p>	Խթանիչ նյութ՝ նկար 49

	<p><i>(Ժեսպերի, խորհրդանշանների և նկարների միջոցով փոխանցվող հաղորդագրությունների բառացի և ենթադրվող իմաստներն ըմբռնելը, ինչպես օրինակ՝ երեխան հոգնած է, երբ փրորում է աչքերը, կամ փազնապի զանգը նշանակում է, որ հրդեհ է բռնկվել՝ ներառյալ հաղորդակցվելիս ժեսպերի լեզուն, ընդհանուր նշանները, խորհրդանշանները, նկարները և լուսանկարներն ընկալելը):</i></p>	<p>2. 6-7 տարեկաններ Ո՞րն է ավելորդ:</p> <p>3. 6-7 տարեկաններ Մեկնաբանի՞ր լուսակրի գույները (տե՛ս d135 ծածկագրի 2-րդ առաջադրանքի արդյունքները՝ 6-7):</p> <p>4. 8-10 տարեկաններ (* Կազմի՞ր նախադասություն նկարների միջոցով (խոսքով չհաղորդակցվող երեխան կարող է ներկայացնել գրավոր խոսքի միջոցով):</p> <p>5. 8-10 տարեկաններ (* Ին՞չ են խորհրդանշում նկարները՝ աղավնի, հայկական դրոշ, Հայաստանի զինանշան (խոսքով չհաղորդակցվող երեխան կարող է ներկայացնել գրավոր խոսքի միջոցով):</p> <p>6. 8-10 տարեկաններ (* Մեկնաբանի՞ր նշանները (տե՛ս d135 ծածկագրի 2-րդ առաջադրանքի արդյունքները՝ 8-10):</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 33</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 50</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 32</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 34</p>
<p>d330</p>	<p>Խոսելը</p> <p><i>(Բառացի և ենթադրվող իմաստ ունեցող՝ բանավոր հաղորդագրությունների մաս կազմող բառեր, բառակապակցություններ և առավել երկար պարբերություններ կազմելը և արտաբերելը, ինչպես օրինակ՝ բանավոր խոսքի միջոցով փաստ ներկայացնելը կամ պարմություն պարմելը):</i></p>	<p>1. Լսի՞ր և կրկնի՞ր հետևյալ բառերը՝ դաս, տաս, թաս, կար, գառ, քար, ծառ, սար, գառ, գայլ, ձուկ, ճառ, չար, ցուլ, ջուր, շուն, ժանգ, բադ, պատ, փիղ, խաղ:</p> <p>2. Հետևե՛լ երեխայի խոսքին գնահատման ողջ ընթացքում:</p>	
<p>d350</p>	<p>Ջրույցը</p> <p><i>(Մտքերի և գաղափարների փոխանակումը սկսելը, շարունակելը և ավարտելը՝ բանավոր, գրավոր խոսքի, ժեսպերի լեզվի կամ լեզվական այլ միջոցների օգնությամբ՝ ծանոթ կամ անծանոթ մեկ կամ մի քանի անձանց հետ՝ ֆորմալ կամ ոչ ֆորմալ իրավիճակներում՝ ներառյալ զրույցը սկսելը, շարունակելը և ավարտելը, մեկ կամ ավելի մարդկանց հետ զրույցելը):</i></p>	<p>1. Պատմի՞ր քո սիրելի տոնի մասին (ընթացքում երեխային տալ թեմայից բխող 3-4 հարց):</p> <p>2. Հետևե՛լ ինչպես է երեխան սկսում, շարունակում և ավարտում զրույցը:</p>	

d4. Շարժունակությունը		
d460	Տարբեր վայրերում տեղաշարժվելը <i>Տարբեր վայրերում կամ իրավիճակներում քայլելը և տեղաշարժվելը, ինչպես օրինակ՝ տան սենյակների միջև, շենքի ներսում կամ քաղաքի փողոցում քայլելը՝ ներառյալ տանը տեղաշարժվելը, տանը սողալը և բարձրանալը, տնից բացի այլ շինություններում, տնից և այլ շինություններից դուրս գտնվող տարածքում քայլելը կամ տեղաշարժվելը:</i>	1. Կարողանո՞ւմ է երեխան տեղաշարժվել սեփական տանը՝ անցնելով սենյակից սենյակ, հարկից հարկ:
		2. Կարողանո՞ւմ է երեխան տեղաշարժվել դպրոցում հարկից հարկ, դասասենյակից ճաշարան, միջանցք, մարզասրահ և այլ վայրեր:
		3. Կարողանո՞ւմ է երեխան առանց տրանսպորտային միջոցից օգտվելու քայլել և տեղաշարժվել փոքր քաղաքի կամ գյուղի փողոցներում և ավելի երկար տարածություններում:
d5. Ինքնասպասարկումը		
d540	Հագնվելը <i>(Հագուստը և կոշիկները հագնելուն և հանելուն ուղղված համակարգված գործողություններ և առաջադրանքներ հերթականությամբ կատարելը և կլիմայական ու սոցիալական պայմաններին հետևելը, ինչպես օրինակ՝ շապիկներ, կիսաշրջագգեստներ, բլուզներ, վարտիքներ, ներքնագգեստ, սարիներ, կիմոնոներ, զուգագուլպաներ, գլխարկներ, ձեռնոցներ, վերարկուներ, կոշիկներ և գուլպաներ, երկարաճիպք կոշիկներ, հողաթափեր և տնային մաշիկներ հագնելը, հարմարեցնելը և հանելը՝ ներառյալ հագուստ և կոշիկներ ու գուլպաներ հագնելը և հանելը, համապատասխան հագուստ ընտրելը):</i>	1. Կարողանո՞ւմ ես ինքնուրույն հագնել և հանել հագուստի բոլոր տեսակները:
		2. Կարողանո՞ւմ ես կոճկել և արձակել բոլոր տեսակի շղթաները, կոճակները և ճարմանդները:
		3. Կարողանո՞ւմ ես ինքնուրույն հագնել և հանել հողաթափերը, կոշիկները:
		4. Կարողանո՞ւմ ես ընտրել եղանակին համապատասխան հագուստ:
d550	Ուտելը <i>(Մնունդ ստանալու կարիքն զգալը և մատուցված սննդամթերքը ուրելուն ուղղված</i>	1. Կարողանո՞ւմ ես ինքնուրույն կերակուր պատրաստել:
		2. Կարողանո՞ւմ ես ինքնուրույն ուտել:

	<p><i>համակարգված առաջադրանքներ և գործողություններ կատարելը, այն բերանին մոտեցնելը և այն տվյալ մշակույթում ընդունելի եղանակով ուտելը, սննդամթերքը մասերի բաժանելը կամ կտրելը, շեր և թիթեղամաններ բացելը, սեղանի սպասք օգտագործելը, արագ սնվելը, ճաշկերույթի կամ ճաշի մասնակցելը՝ բացառությամբ խմելու (d560)):</i></p>	<p>3. Կարողանում ես ինքնուրույն կատարել կենցաղային աշխատանքներ՝ սեղան սպասադրել, ափսեներ լվանալ:</p> <p>4. Կարողանում ես սննդամթերքը մասերի բաժանել կամ կտրատել, սպասքից օգտվել:</p> <p>5. Կարողանում ես ինքնուրույն ջուր խմել ցայտադրյուրից:</p> <p>6. Կարողանում ես ինքնուրույն բացել ջրով լի տարան, ջուրը լցնել բաժակի մեջ և խմել:</p>	
d6. Կենցաղը			
d7. Միջանձնային շփումը և հարաբերությունները			
<p>d720</p>	<p>Բարդ միջանձնային փոխհարաբերություններ</p> <p><i>(Այլ մարդկանց հետ շփումը պահպանելը և կառավարելը՝ տվյալ իրավիճակում և հասարակության համար ընդունելի եղանակով, ինչպես օրինակ՝ հույզերը և մղումները զսպելու, լեզվական և ֆիզիկական ագրեսիան կառավարելու, սոցիալական շփման մեջ ինքնուրույն գործելու, ինչպես նաև հասարակական կանոններին և պայմանականություններին համապատասխան գործելու միջոցով՝ ներառյալ այլ անձանց հետ խաղալը, հարաբերություններ ձևավորելը և դադարեցնելը, շփման շրջանակում հարաբերությունները կարգավորելը, սոցիալական կանոններին համապատասխան շփվելը և սոցիալական տարածություն պահպանելը):</i></p>	<p>1. Երբ ինչ-որ հարցում դժվարանում ես, դիմում ես որևէ մեկի օգնությանը, օրինակ՝ փողոց անցնելիս, գնումներ կատարելիս և այլն.</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p> <p>2. Կարողանում ես մերժել ընկերոջդ, ով դիմել է քեզ այնպիսի խնդրանքով, որը չես ցանկանում իրականացնել.</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p> <p>3. Կարողանում ես արդյոք հեշտությամբ նոր հարաբերություններ ձևավորել անձանոթներ հետ, երբ (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4).</p> <ul style="list-style-type: none"> • հյուր եք գնացել • նոր երեխա է տեղափոխվել ձեր դասարան • մեկնել եք անձանոթ վայր 	

		<p>4. Պատկերացրու մի իրավիճակ, երբ ընկերներիցդ մեկի հետ այլևս չես ցանկանում շփվել. կկարողանա՞ս հեշտությամբ դադարեցնել հարաբերություններն այնպես, որ դիմացինը չվիրավորվի:</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p> <p>5. Կարողանո՞ւմ ես կարգավորել վարքագիծդ, երբ այլ անձանց ներկայությամբ քեզ վիրավորում են.</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p> <p>6. Կարողանո՞ւմ ես արդյոք առանց կաշկանդվելու շփվել հասակակիցներիդ հետ (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4)՝</p> <ul style="list-style-type: none"> • գնալ զբոսանքի • մասնակցել միջոցառումներին • արտահայտել սեփական կարծիքը • ներգրավվել խմբային խաղերում: 	
d8. Կյանքի հիմնական բնագավառները			
d820	<p>Դպրոցական կրթությունը</p> <p><i>(Դպրոց ընդունվելը, կրթություն ստանալը, ֆորմալ կրթությանը առնչվող բոլոր պարտականությունները կատարելը և ֆորմալ կրթության բոլոր առավելություններից օգտվելը, փարրական կամ միջնակարգ կրթական ծրագրի շրջանակներում ուսումնական նյութը, առարկաները և ուսումնական ծրագրի այլ</i></p>	<p>1. Կարողանո՞ւմ է երեխան համագործակցել համադասարանցիների, ուսուցիչների հետ:</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p> <p>2. Արդյո՞ք երեխայի կրթական (ակադեմիական) մակարդակը համապատասխանում է չափորոշչային պահանջներին:</p>	

	<p>պարտադիր բաղադրիչները սովորելը, այդ թվում՝ կանոնավոր կերպով դպրոց հաճախելը, այլ աշակերտների հետ համագործակցելը, ուսուցիչներից առաջադրանքներ ստանալը, հանձնարարված առաջադրանքների ու նախագծերի կատարումը կազմակերպելը, դրանք ուսումնասիրելը և կատարելը, և կրթության այլ փուլերին պատրաստվելը):</p>	<p>3. Կարողանո՞ւմ է երեխան պատշաճ կերպով կատարել հանձնարարված առաջադրանքները: 0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p> <p>4. Արդյո՞ք կանոնավոր կերպով հաճախում ես դասերին. ընտրի՛ր քեզ համապատասխանող տարբերակը. 0 հաճախում եմ միշտ 1 բացակայում եմ երբեմն 2 բացակայում եմ հաճախ 3 հաճախում եմ հազվադեպ 4 երբեք չեմ հաճախում:</p> <p>5. Արդյո՞ք Ձեր երեխան մասնակցում է դպրոցում կազմակերպված միջոցառումներին մյուս աշակերտների հետ միասին: 0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p>	
d9. Համայնքային, սոցիալական և քաղաքացիական կյանքը			
<p>d9200</p>	<p>Խաղերը <i>Ըստ կանոնների կամ անկանոն կամ չկազմակերպված խաղերում և չպլանավորված ժամանցային միջոցառումներում ներգրավվելը, ինչպես օրինակ՝ շախմատ կամ խաղաքարտային խաղեր, սեղանի խաղեր կամ կանոններով խաղեր (օրինակ՝ պահմպոցի) խաղալը՝ բացառությամբ խաղերի մեջ ներգրավվելու (d880):</i></p>	<p>1. Մասնակցո՞ւմ ես բակում, խաղահրապարակում կամ այլ տեղում կազմակերպվող տարբեր խաղերին:</p> <p>2. Խաղի ընթացքում հետևո՞ւմ ես կանոններին. հիմա խաղում ենք խաղ «Գուշակիր՝ ո՞վ էմ/ի՞նչ եմ» (խոսքով չհաղորդակցվող երեխաների հետ խաղալ այլ խաղեր, օրինակ՝ դոմինո կամ խաղ «Մոծակ»):</p>	

Լսողական արձանագրություն

Խուլ, թույլ լսող և ժեստերի լեզվով հաղորդակցվող երեխաների հետ արձանագրությունը կիրառելիս սուրդոթարգմանչի ներկայությունը պարտադիր է:

Խոսքով չհաղորդակցվող երեխաների համար որպես այլընտրանք, առկայության դեպքում, կիրառել հարցի (բ) տարբերակը:

Հարցեր, որոնց դիմաց դրված է մեկ աստղանիշ (*)՝ երեխաներին հնարավորություն տալ մատնախոսությամբ, ժեստերով կամ անհրաժեշտության դեպքում նկարների միջոցով պատասխանելու:

Հարցեր, որոնց դիմաց չկա նշված որևէ տարիքային խումբ՝ կիրառելի են 6-10 տարեկան բոլոր երեխաների համար:

Գործունեության և մասնակցության ծածկագրեր		Հարցեր	Անհրաժեշտ նյութ
d1. Սովորելը և գիտելիքներ կիրառելը			
d110	Դիտելը (նայելը) <i>(Տեսողական ազդակներ ընկալելու նպատակով տեսողության զգայարանը մտադրված կերպով օգտագործելը, ինչպես, օրինակ՝ առարկային հեղուկ, մարդկանց դիտելը, սպորտային իրադարձություն, որևէ անձի կամ խաղացող երեխաներին նայելը):</i>	1. Խմբավորի՛ր հիմնական գույներն ըստ երանգների (երեխայի առջև դնել կարմիր, կանաչ, կապույտ, դեղին գույնի մատիտներ):	Խթանիչ նյութ՝ գունավոր մատիտներ
		2. 6-7 տարեկաններ Գտի՛ր բացակայող հատվածը և տեղադրի՛ր: 8-10 տարեկաններ (*) Ի՞նչ պատկեր և ի՞նչ թիվ ես տեսնում նկարներում (խոսքով չհաղորդակցվող երեխան մատնանշում է պահանջված թիվը և պատկերը):	Խթանիչ նյութ՝ նկար 26.1 նկար 26.2
		3. 6-7 տարեկաններ Գտի՛ր ստվերի համապատասխան պատկերը: 8-10 տարեկաններ Ցո՛ւյց տուր նկարում պատկերված բոլոր քառանկյուններն ու եռանկյունները:	Խթանիչ նյութ՝ խաղ «Գտիր ստվերը» Աշխատանքային տետր՝ առաջադրանք 1
		4. Երեխային առաջարկել նկար և հետևել, թե աչքերից ի՞նչ հեռավորության վրա է պահում (արդյունքը կլինի բարձր, եթե երեխան նկարը պահում է 25-30սմ հեռավորության վրա և չի անտեսում պատկերված մանր առարկաները):	Խթանիչ նյութ՝ նկար 27
d115	Լսելը	1. (*) Լսի՛ր և կրկնի՛ր հնչեցված բառերը՝ կատու, սեղան, շուն, տուն, մեքենա, մատիտ, աղջիկ, խոզ, կով, նապաստակ (բառերն արտասանել 6 մետր	Խթանիչ նյութ՝ նկար 2

	<p><i>(Լսողական ազդակները ընկալելու նպատակով լսողության զգայարանը մտադրված կերպով օգտագործելը, ինչպես, օրինակ՝ նադիր, մարդու ձայն, երաժշտություն, դասախոսություն կամ պատմվածք ունկնդրելը):</i></p>	<p>հեռավորությունից, երեխայի մեջքի կողմից, խոսքով չհաղորդակցվող երեխաները միայն մատնանշում են համապատասխան նկարները):</p> <p>2. (*) Լսի՛ր և կրկնի՛ր հնչեցված բառերը՝ կատու, շուն, տուն, մեքենա, կով, նապաստակ (բառերն արտասանել շշուկով, 6 մետր հեռավորությունից, երեխայի մեջքի կողմից, խոսքով չհաղորդակցվող երեխաները միայն մատնանշում են համապատասխան նկարները):</p> <p>3. (*) Կրկնի՛ր նախադասությունները (նախադասությունները կարդալ առանձին, խոսքով չհաղորդակցվող երեխան մատնանշում է պահանջված նկարները): Լուսինը լույս է տալիս: Գարնան առաջին ծաղիկը ձնծաղիկն է: Սեղանին դրված էր դանակ, պատառաքաղ, գդալ:</p> <p>4. (*) Լսի՛ր և նշի՛ր, թե որ հնչյունով է սկսվում և ավարտվում տվյալ բառը. Նուռ, կատու, անձրև, քարտեզ, ծաղիկ, նապաստակ (խոսքով չհաղորդակցվող երեխային առաջարկել ցույց տալ բառի առաջին և վերջին տառերը, կիրառելի չէ այն երեխաների համար, ովքեր տառաճանաչ չեն):</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 3</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 28</p> <p>Խթանիչ նյութ՝ գրատախտակ հայերեն տառերով</p>
<p>d132</p>	<p>Տեղեկություններ հավաքելը</p> <p><i>(Անձանց, իրերի և իրադարձությունների մասին փաստեր հավաքելը, ինչպես օրինակ՝ «ինչու», «ինչ», «որտեղ» և «ինչպես» հարցերը տալը, անուններ հարցնելը՝ բացառությամբ հասկացություններ սովորելու (d137), հմտություններ ձեռք բերելու (d155)):</i></p>	<p>1. Կարողանո՞ւմ է երեխան տեղեկատվություն հավաքել հանձնարարված թեմայի շուրջ (տեղեկություններ ստանալու համար տալ «ե՞րբ», «ինչպե՞ս» և «ինչո՞ւ» հարցերը):</p> <p>2. Պատկերացրո՞ւ՝ հրավիրված ես ծննդյան տոնի, ին՛չ հարցեր կհետաքրքրեն քեզ նախքան գնալը:</p> <p>3. Նայիր նկարին և ասա՝ ով է (ի՞նչ հարցեր կուղղես տեղեկատվություն ստանալու համար):</p> <p>4. ա) Հիմա խաղում ենք խաղ «Ո՞վ եմ ես»:</p> <p>բ) Յո՛ւյց տուր ճիշտ քարտը (խոսքով չհաղորդակցվող երեխաների համար կիրառել այս տարբերակը, նույնիսկ մեկ ճիշտ պատասխանի համար սահմանել 0 միավոր).</p> <ul style="list-style-type: none"> • Ի՞նչպես են օգտվում համացանցից (երեխային տրամադրել նկար 31-ում պատկերված համակարգչի, հեռախոսի նկարները և նկար 81 դ-ի հեռուստացույցի պատկերը): • Ի՞նչ տեսք ունի Երկիր մոլորակը (խթանիչ նյութ՝ նկար 16): • Ինչո՞վ ենք մարսում սնունդը: 	<p>Հարց մեծահասակին</p> <p>Հարց երեխային</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 30</p> <p>Խթանիչ նյութ՝ խաղ «Ո՞վ եմ ես» Խթանիչ նյութ՝ նկար 16, 31, 81</p>

<p>d133</p>	<p>Լեզու սովորելը <i>(Անձանց, առարկաները, իրադարձությունները և զգացմունքները բառերի, խորհրդանիշների, բառակապակցությունների և նախադասությունների միջոցով ներկայացնելու հմտությունը զարգացնելը՝ բացառությամբ լրացուցիչ լեզու սովորելու (d134), հաղորդակցության (d310-d399)):</i></p>	<ol style="list-style-type: none"> 6-7 տարեկաններ Նկարագրիր՝ ի՞նչ է պատահել նկարում (երեխան պետք է նկարագրի անձանց, իրադարձությունները, զգացմունքները): 6-7 տարեկաններ Նկարագրի՛ր առարկաները (երեխան պետք է նկարագրի առարկայի հատկանիշները): 6-7 տարեկաններ Տրված բառերը ներկայացրու խորհրդանիշների միջոցով՝ գարուն, ծմեռ, Հայաստան: 8-10 տարեկաններ Սյունակներից ընտրի՛ր բառերն այնպես, որ ստացվի բառակապակցություն: 8-10 տարեկաններ Դասավորի՛ր բառերն այնպես, որ ստացվի շարահյուսորեն ճիշտ ձևակերպված նախադասություն (Աշնանն այգու բազմագույն պտուղները պսպղում էին արևի ճառագայթների տակ): 8-10 տարեկաններ Տրված նախադասությունը ներկայացրու խորհրդանիշների միջոցով. Հայաստանն աշխարհում առաջին քրիստոնյա երկիրն է: 	<p>Խթանիչ նյութ՝ նկար 7</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 8</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 32</p> <p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 2</p> <p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 3</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 32</p>
<p>d161</p>	<p>Ուշադրությունը պահպանելը <i>(Համապատասխան ժամանակահատվածում կոնկրետ գործողություններին կամ առաջադրանքներին ուղղված ուշադրությունը մտադրված կերպով պահպանելը):</i></p>	<ol style="list-style-type: none"> Կարդալու զուգահեռ երեխային ցույց տալ, որ աստղի մեջ պատկերված է շրջան, քառակուսու մեջ՝ խաչ, սրտիկի մեջ՝ երկու գծիկ, իսկ շրջանի մեջ՝ մեկ գծիկ: Ներքևում դասավորված պատկերների մեջ անհրաժեշտ է տեղադրել համապատասխան նշանները: Կատարի՛ր այդ աշխատանքը յուրաքանչյուր տողի համար: Նկարում խճճված գծերից յուրաքանչյուրը վերջանում է ինչ-որ թվի վրա, օրինակ՝ 1-ը վերջանում է 5 թվի վրա: Տո՛ւյց տուր, թե որ թվերի վրա են վերջանում մնացած գծերը: ա) Ուշադի՛ր լսիր արտահայտությունները, որոնք կկարդամ: Մտապահիր, որպեսզի կրկնես: Ամռանը շոգ է: Երեխաները խաղում են: Ծառերի վրա մրգեր են աճում: Տղան օգնում է տատիկին: 	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 5</p> <p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 6</p> <p>Խթանիչ նյութ՝ փայտե փազլ</p>

		<p>Լճակում նավակ է լողում:</p> <p>բ) Դասավորի՛ր պատկերներն այնպես, ինչպես դրված են (5 երկրաչափական պատկերները ցուցադրել հերթականությամբ, ապա խառնել):</p>		
<p>d163</p> <p>Մտածելը</p> <p><i>(Մտքեր, գաղափարներ և պատկերներ ձևակերպելը՝ նպատակաուղղված կամ ոչ նպատակաուղղված կերպով, ինքնուրույն կամ այլոց հետ միասին, մտածելուն առնչվող գործողությունների հետ կապված՝ ինչպես օրինակ՝ միտք արտահայտելը, ձևանալը, բառախաղը, մրցածին բան ստեղծելը, թեորեն ապացուցելը, մտքերով խաղալը, մտազրոհը, մտասուզվելը (մեղիտացիա), մտորելը, խորհրդածելը կամ խորհելը):</i></p>	<p>4. 6-7 տարեկաններ</p> <p>(*) Նայի՛ր նկարին, փորձի՛ր մտապահել պատկերները, որպեսզի հետո դրանք թվարկես (պահել նկարը 20 վայրկյան, ապա՝ շրջել: Խոսքով չհաղորդակցվող երեխաներին առաջարկել նկար 38-ի առանձին բաղադրիչների և հարցաշարում առկա 4 այլ առարկայական նկարների խմբից ընտրել այն պատկերները, որոնք առկա են եղել ցուցադրված նկարում):</p> <p>8-10 տարեկաններ</p> <p>Ուշադի՛ր նայիր թվերին 20 վայրկյան, այնուհետև նույնությամբ տեղադրի՛ր աղյուսակի դատարկ վանդակներում (փակել թվերով տարբերակը):</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 38</p> <p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 7</p>		
	<p>5. (**)</p> <p>Կկարդամ 10 բառ, որից հետո ցանկացած հաջորդականությամբ կկրկնես այնքանը, որքանը հիշեցիր. անտառ, մուրճ, հաց, դուռ, ձի, սունկ, բեռ, ջուր, աթոռ, մեղր (կիրառելի չէ խոսքով չհաղորդակցվող երեխաների համար):</p>			
	<p>1. (*) Ո՞ր բառն է ավելորդ՝ բազմոց, պահարան, բաժակ, աթոռ (6 տարեկան և խոսքով չհաղորդակցվող երեխաների համար կարող եք կիրառել նկար-քարտեր):</p>		<p>Խթանիչ նյութ՝ նկար 39</p>	
	<p>2. Գտի՛ր համապատասխան հատվածը (6-7 տարեկանների համար կիրառել Ռավենի պրոգրեսիվ մատրիցաների B12, B8 տարբերակները, իսկ 8-10 տարեկանների համար՝ C3, C1, C9, D4 տարբերակները):</p> <p>3. 6-7 տարեկաններ</p> <p>Դասավորի՛ր նկարները ճիշտ հաջորդականությամբ:</p>	<p>4. (*) Ո՞ր տարբերակը կընտրես շնիկին բույն պատրաստելու համար (6 տարեկան և խոսքով չհաղորդակցվող երեխաների համար կարող եք կիրառել նկար-քարտեր).</p> <p>ա) մեխ, պարան, մուրճ, փայտ</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 40</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 41</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 42</p>	

		<p>բ) սղոց, մեխ, մուրճ, փայտ գ) փայտ, բահ, մեխ, մուրճ:</p>	
<p>d166</p>	<p>Կարդալը <i>(Գրավոր խոսքը (օրինակ, գրքեր, ցուցումներ, թերթեր՝ սովորական տեքստի կամ Բրայլի այբուբենով գրված) ընկալելուն և վերծանելուն առնչվող գործողություններ կատարելը՝ ընդհանուր գիտելիք կամ հատուկ տեղեկություն ստանալու համար՝ ներառյալ ստանդարտ տառերով կամ նիշերով կազմված գրավոր խոսքը, ինչպես նաև յուրահատուկ խորհրդանշաններով, օրինակ՝ պատկերանշաններով կազմված տեքստի ընկալելը և մեկնաբանելը):</i></p>	<p>1. 6-7 տարեկաններ (*) Թվարկի՛ր «Ն» հնչյունով սկսվող մի քանի բառ (6 տարեկան և խոսքով չհաղորդակցվող երեխաներին առաջարկել նապաստակի, նռան, նարնջի և հարցաշարում առկա ցանկացած 3 այլ առարկայական նկարների խմբից ընտրել այն առարկաների պատկերները, որոնք սկսվում են «Ն» հնչյունով):</p> <p>2. 6-7 տարեկաններ Հեգի՛ր հետևյալ բառերը՝ տուն, ներկ, գազար, բազմոց, պահարան, եղանակ:</p> <p>3. 6-7 տարեկաններ (*) Ամբողջացրո՛ւ հետևյալ տառերը՝ ձ-ու-կ, կ-ա-տ-ու, ն-ա-պ-ա-ս-տ-ա-կ, լ-ու-ս-ա-ց-ու-յ-ց (խոսքով չհաղորդակցվող երեխան քարտերից ցույց է տալիս համապատասխան բառիմաստը պարունակող նկարը):</p> <p>4. 6-7 տարեկաններ (*) Կարդա՛ հանձնարարված նյութը (կիրառելի չէ առաջին դասարանի նախաայբբենական շրջանում սովորող երեխաների համար, այբբենական շրջանում երեխային առաջարկել բառեր իր անցած տառերով, խոսքով չհաղորդակցվող երեխաների դեպքում առաջարկել տեքստի բովանդակությանը համապատասխանող և դրան հակասող նկարներ, որտեղից երեխան պետք է ընտրություն կատարի):</p> <p>5. 6-7 տարեկաններ (*) Պատասխանի՛ր տեքստի կամ բառակապակցությունների, պարզ համառոտ նախադասությունների վերաբերյալ 2 հարցի՝ հարցադրումներն ուղղելով նույն ծածկագրի 4-րդ առաջադրանքին համապատասխան (կիրառելի չէ առաջին դասարանի նախաայբբենական շրջանում սովորող երեխաների համար, խոսքով չհաղորդակցվող երեխայի դեպքում միավորը սահմանել՝ հաշվի առնելով տվյալ ծածկագրի առաջադրանք 4-ի արդյունքները):</p> <p>6. 8-10 տարեկաններ Տրված բառերից ստացիր 3 նոր բառ՝ մեկական տառ փոխելով, օրինակ՝ պատ-պար):</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 2, 8, 32</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 3, 2, 33, 36,</p> <p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 8, խթանիչ նյութ՝ 41, 49, 28</p> <p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 9</p>

		<p>7. 8-10 տարեկաններ (*) Կարգա՝ հանձնարարված նյութը (խոսքով չհաղորդակցվող երեխաների դեպքում առաջարկել կարդացածը ներկայացնել տեքստի բովանդակությանը համապատասխանող և դրան հակասող նկարների միջոցով, որտեղից երեխան պետք է ընտրություն կատարի կամ գրելու տարբերակով):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 10, խթանիչ նյութ՝ նկար 43</p>
		<p>8. 8-10 տարեկաններ (*) Պատասխանի՛ր տեքստի վերաբերյալ հարցերին (երեխային ուղղել 3-4 հարց, խոսքով չհաղորդակցվող երեխաների դեպքում միավորը սահմանել՝ հաշվի առնելով տվյալ ծածկագրի առաջադրանք 7-ի արդյունքները):</p>	
		<p>9. 8-10 տարեկաններ Տեղադրի՛ր տրված ածականները համապատասխան նախադասություններում:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 11</p>
<p>d170</p> <p>Գրելը</p> <p><i>(Նիշեր կամ տառեր գրելը, պատկերելը կամ վերարտադրելը տեղեկատվություն հաղորդելու համար, ինչպես օրինակ՝ իրադարձություններ կամ մտքեր գրի առնելը կամ նամակ կազմելը, գրառումներ, նշումներ և գրավոր հանձնարարություն կատարելը, տպելը):</i></p>		<p>1. 6-7 տարեկաններ Միացրո՛ւ տրված կետերը մեկ գծով առանց ընդհատելու:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 12</p>
		<p>2. 6-7 տարեկաններ Արտագրի՛ր տրված նյութը (6 տարեկան երեխաները կարող են գրել մասնիկներ ըստ օրինակի):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 13</p>
		<p>3. 6-7 տարեկաններ (*) Գրի՛ր հետևյալ բառերը (թելադրել բառեր, որոնք կազմված են երեխային արդեն ծանոթ տառերով). սար, ձուկ, անտառ, պահարան, դասագիրք, աթոռ, լուսին, կարապ, սալոր, խաղող, սարդ (թույլ տալ երեխային կարդալ բառի գրաֆիկական պատկերը, որից հետո գրել լսատեսողությամբ):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 14</p>
		<p>4. 8-10 տարեկաններ Կազմի՛ր բառեր և գրի՛ր դրանք առանձին տեղում:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 15</p>
		<p>5. 8-10 տարեկաններ Կազմի՛ր նախադասություն քո կազմած բառերով:</p>	
		<p>6. 8-10 տարեկաններ Գրի՛ր թելադրություն:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 16</p>

		<p>Պապս ամեն օր աշխատում էր իր այգում: Տարիներ առաջ նա ընտրեց քարքարոտ այդ հողակտորը: Մաքրեց այն, ծառեր տնկեց ու մշակեց: Աշնանն այգու բազմագույն պտուղները պսպղում էին արևի ճառագայթների տակ:</p>	
<p>d172</p> <p>Հաշվելը</p> <p><i>(Հաշվարկներ կատարելը՝ բառերով արտահայտված խնդիրները լուծելու նպատակով մաթեմատիկական սկզբունքներ կիրառելու միջոցով կամ պատասխանները ստանալով կամ ցուցադրելով, ինչպես օրինակ երեք թվերի գումարը հաշվարկելը կամ մեկ թիվը մյուսով բաժանելու պատասխանը գտնելը):</i></p>	<p>7. Գրի՛ր նամակ ում կցանկանաս:</p>		<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 17</p>
	<p>1. 6-7 տարեկաններ Թվերի շարքում լրացրո՛ւ այն թվերը, որոնք չկան (առաջադրանքը կատարել բանավոր կամ գրավոր):</p>		<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 18</p>
	<p>2. 6-7 տարեկաններ (*) Ունենք շարքով դասավորված 9 մատիտ: Քանի՞ մատիտ կդառնա շարքում, եթե սկզբից և վերջից ավելացնենք մեկական մատիտ (խոսքով չհաղորդակցվող երեխան կարող է պատասխանել ժեստերի միջոցով):</p>		<p>Խթանիչ նյութ՝ գունավոր մատիտներ</p>
	<p>3. 6-7 տարեկաններ Բաժանի՛ր 6 մատիտը երկու հոգու այնպես, որ յուրաքանչյուրը ստանա հավասար քանակով մատիտներ:</p>		<p>Խթանիչ նյութ՝ փայտե գրատախտակ հայերեն տառերով</p>
	<p>4. 6 տարեկաններ (*) Համեմատի՛ր միանիշ թվերը և բանավոր նշի՛ր՝ որն է մեծ, որը՝ փոքր (Անհրաժեշտության դեպքում թվաքարտերի փոխարեն կիրառել հաշվեճողիկներ, խոսքով չհաղորդակցվող երեխան կարող է պատասխանել ժեստերի միջոցով):</p>		<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 19</p>
	<p>5. 7 տարեկաններ Համեմատի՛ր միանիշ թվերը (քարտեր) և աստղանիշի փոխարեն դի՛ր համապատասխան նշանը՝ <, >, =:</p>		<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 20</p>
	<p>6. 6-7 տարեկաններ Կատարի՛ր տրված առաջադրանքները (անհրաժեշտության դեպքում կիրառել հաշվեճողիկներ):</p>		<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 21</p>
	<p>7. 8-10 տարեկաններ Լրացրո՛ւ աղյուսակը (երեխային մտածելու համար տալ 1 թույլ ժամանակ: Եթե դժվարանում է, միջամտել):</p>		
	<p>8. 8-10 տարեկաններ</p>		

		Քանի՞ անգամ պետք է ծախել 8 սմ կողմեր ունեցող քառակուսի կտրված թուղթը, որպեսզի ստանանք 2 սմ կողմերով քառակուսի (երեխային տրամադրվում է կտրված թուղթը և մտածելու համար տրվում է 1 րոպե):	
		9. 8-10 տարեկաններ Տեղադրի՛ր 8, 4, 0 թվերը յուրաքանչյուր տառի փոխարեն (երեխային մտածելու համար տրվում է մինչև 2 րոպե ժամանակ):	Աշխատանքային տետր՝ առաջադրանք 22
		10. 8-10 տարեկաններ Կատարի՛ր տրված առաջադրանքները:	Աշխատանքային տետր՝ առաջադրանք 23
d175	Խնդիրներ լուծելը <i>(Հարցադրումների կամ իրավիճակների համար լուծումներ գտնելը՝ հարցերի էությունը որոշելու և վերլուծելու, տարբերակներ և լուծումներ կազմելու, լուծումների հնարավոր արդյունքները գնահատելու և ընտրված լուծումը կատարելու միջոցով, ինչպես օրինակ՝ երկու մարդկանց միջև վեճ լուծելիս՝ ներառյալ պարզ և բարդ խնդիրներ լուծելու հմտությունները՝ բացառությամբ մտածելու (d163), որոշումներ կայացնելու (d177)):</i>	1. (*) Ինչպե՞ս կվարվես, եթե բակում խաղալիս գնդակը ծակվի (խոսքով չհաղորդակցվող երեխային առաջարկել նկարել՝ տրամադրելով մատիտ, որը սրած չէ, և որով հնարավոր չէ նկարել, զուգահեռաբար սեղանին դնել առարկաներ, որոնց մեջ կա նաև սրիչ): 2. 6-7 տարեկաններ (*) Նայի՛ր նկարին. ինչպե՞ս կվարվես տվյալ իրավիճակում (խոսքով չհաղորդակցվող երեխան կարող է պատասխանել ժեստերի միջոցով): 8-10 տարեկաններ Ինչպե՞ս կարելի է ստանալ 1լ ջուր՝ օգտագործելով 2 և 3 լիտրանոց տարաներ: 3. Արդյո՞ք երեխան կարողանում է լուծումներ գտնել կենցաղում կամ միջանձնային հարաբերություններում հանդիպող խնդիրների դեպքում. 0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք	Խթանիչ նյութ՝ նկար 44
d177	Որոշումներ կայացնելը <i>(Ընտրություն կատարել մի շարք տարբերակներից, իրագործել ընտրված տարբերակը և գնահատել ընտրված տարբերակի արդյունքները, ինչպես օրինակ՝</i>	1. (*) Յո՛ւյց տուր այն տունը, որտեղ կցանկանաս ապրել, և մեկնաբանի՛ր՝ ինչու (խոսքով չհաղորդակցվող երեխան կարող է պատասխանել ժեստերի միջոցով): 2. (**) Ի՞նչ նվեր ես ցանկանում ստանալ: Իսկ մայրի՞կդ: Պատկերացրու, որ այս տուփերում քո և մայրիկի նվերներն են, բայց դու պետք է ընտրես	Խթանիչ նյութ՝ նկար 45 Խթանիչ նյութ՝ նկար 46

	<p>որոշակի իր ընկերելը և գնելը, կամ մի շարք առաջադրանքների թվից որոշել կատարել անհրաժեշտ մեկ առաջադրանք և այն կատարել՝ բացառությամբ մրաժեյլու (d163), խնդիրներ լուծելու (d175)):</p>	<p>դրանցից մեկը: Ո՞րը կընտրես, ինչո՞ւ (կիրառելի չէ խոսքով չհաղորդակցվող երեխաների համար):</p> <p>3. (*) Ծննդյանդ առիթով գումար ես նվեր ստացել: Ի՞նչ կանես այն (խոսքով չհաղորդակցվող երեխան կարող է պատասխանել ժեստերի միջոցով, կամ հարցը տրվում է մեծահասակին):</p> <p>4. Կարողանո՞ւմ ես մի շարք տարբերակներից ընտրություն կատարել և որոշում կայացնել, օրինակ՝ խաղալիք կամ հագուստ գնելիս:</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p>	
<p>d2. Ընդհանուր առաջադրանքները և պահանջները</p>			
<p>d230</p>	<p>Առօրյա կյանքը կազմակերպելը</p> <p>(Պարզ կամ բարդ և համակարգված գործողություններ իրականացնելը՝ առօրյա կյանքը կամ պարտականությունները պլանավորելու, կառավարելու և կատարելու համար, ինչպես օրինակ՝ օրվա ընթացքում ժամանակը պլանավորելը և առանձին գործողությունների համար ծրագրեր կազմելը՝ ներառյալ առօրյա կյանքը կառավարելը և առօրյա գործունեություն իրականացնելը, սեփական կենսագործունեության մակարդակը կառավարելը՝ բացառությամբ համալիր առաջադրանքներ կատարելու (d220)):</p>	<p>1. Նշի՞ր գործողություններ, որոնք (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4)՝</p> <ul style="list-style-type: none"> • կատարում ես օրվա ընթացքում • առավել կարևոր են • կարող ես հետաձգել: <p>2. Կարողանո՞ւմ ես արդյոք հետաքրքիր պլանավորել և անցկացնել քո հանգստյան օրը (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4).</p> <ul style="list-style-type: none"> • որոշելով կատարվելիք գործողությունների հերթականությունը, • անհրաժեշտության դեպքում կատարելով փոփոխություններ: <p>3. Կարողանո՞ւմ ես արդյոք (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4).</p> <ul style="list-style-type: none"> • տրված առաջադրանքը ավարտել ժամանակին • չուշանալ ընկերների հետ հանդիպումից • դպրոց հասնել մինչև դասերի սկսվելը: 	
<p>d250</p>	<p>Սեփական վարքագիծը կառավարելը</p> <p>(Պարզ կամ բաղադրյալ և համակարգված գործողություններ հեղուղական կերպով</p>	<p>1. Կարողանո՞ւմ է արդյոք երեխան հեշտությամբ փոխել գործունեության բնույթը կամ հարմարվել նոր իրավիճակներին, օրակարգերին, մարդկանց.</p> <p>0 միշտ 1 հաճախ</p>	

<p>իրականացնելը՝ ի արձագանք նոր իրավիճակների, անձանց կամ փորձի, ինչպես օրինակ՝ գրադարանում լռություն պահպանելը):</p>	<p>2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p>	
	<p>2. Կարողանո՞ւմ ես արդյոք (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4).</p> <ul style="list-style-type: none"> • հարմարվել դպրոցական միջավայրին՝ հետևելով սահմանված կանոններին • դադարեցնել գործողությունն անմիջապես, երբ քեզ խնդրում են: 	
	<p>3. Պատկերացրու իրավիճակ. դու ցանկանում ես ընկերոջդ (ընկերուհուդ) հետ բակում խաղալ, բայց թույլ չեն տալիս, քանի որ տնային հանձնարարությունների դեռ չես ավարտել: Կարողանո՞ւմ ես արդյոք կառավարել վարքագիծդ.</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p>	
	<p>4. Կարողանո՞ւմ ես արդյոք սպասել (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4).</p> <ul style="list-style-type: none"> • դասամիջոցին, եթե օրինակ ընկերոջդ (ընկերուհուդ) կարևոր ասելիք ունես, բայց ուսուցչուհին պահանջում է լռություն պահպանել, • քո հերթին, եթե ուշանում ես, • դասաժամի ավարտին, եթե շատ սոված ես: 	
	<p>5. Կարողանո՞ւմ ես արդյոք պահպանել ինքնակառավարումդ և հետևել տվյալ վայրին հատուկ կարգուկանոնին մարդաշատ վայրերում (ճաշարան, հավաքույթներ, էքսկուրսիաներ, միջոցառումներ).</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p>	

d3. Հաղորդակցությունը			
d310	Հաղորդակցվելիս բանավոր հաղորդագրություններ ընկալելը <i>(Բանավոր հաղորդագրությունների բառացի և ենթադրվող իմաստները ընկալելը, ինչպես օրինակ՝ հասկանալը, որ հայտարարությունը փաստ է հաստատում կամ այն պատկերավոր արտահայտություն է, ինչպես օրինակ՝ բանավոր հաղորդագրություններն արձագանքելը և դրանք ընկալելը):</i>	1. Հետևել հրահանգների և բանավոր առաջադրանքների ընկալմանը գնահատման ողջ ընթացքում:	
		2. 6-7 տարեկաններ Տրված նախադասության մեջ ավելացրու բառն ըստ իմաստի: Բաղիկները ... են լճակում: (լողալ, թռչել) Երեխաները ... թռչկոտում և վազվզում էին լողափին: (ուրախ, տխուր) Ոգնին սուր ... ունի: (փշեր, ականջներ)	Աշխատանքային տեսոր՝ առաջադրանք 24
		3. 8-10 տարեկաններ ա) Ասա՛, թե ինչ ես հասկանում այս դարձվածքները լսելիս: Եփած հավի ծիծաղն էլ կգա: Գյուղ կանգնի՝ գերան կկտորի: Բերանը ջուր առնել: Աշխարհով մեկ լինել: բ) Լսի՛ր դարձվածքի բացատրությունը և մատնանշիր համապատասխան նկարը (խոսքով չհաղորդակցվող երեխաների համար). <ul style="list-style-type: none"> • Կռահել • Երջանիկ լինել • Սովորող, ուսումնատենչ • Լարված լինել 	Խթանիչ նյութ՝ նկար 48
		4. 8-10 տարեկաններ (*) Տրված նախադասության մեջ ավելացրու բառն ըստ իմաստի (խոսքով չհաղորդակցվող երեխային առաջարկել նկար-քարտեր): <ul style="list-style-type: none"> • Պայծառ արևը շողում է ... : (նկուղ, երկնակամար) • Երեխաները ... թռչկոտում և վազվզում էին լողափին: (անհոգ, տխուր) 	Աշխատանքային տեսոր՝ առաջադրանք 24
d325	Հաղորդակցվելիս գրավոր հաղորդագրություններ ընկալելը <i>(Գրավոր խոսքի (այդ թվում՝ Բրայլի այբուբենի) միջոցով փոխանցվող</i>	1. 6-7 տարեկաններ (*) Կարդա՛ թաքնված բառը (դեղատուն, արևածաղիկ, գետածի): Խոսքով չհաղորդակցվող և 6 տարեկան երեխաներին առաջարկել նկար-քարտեր:	Խթանիչ նյութ՝ նկար 51
		8-10 տարեկաններ Կարդա՛ թաքնված բառը (քամի, աշուն, ձեռագիր):	Խթանիչ նյութ՝ նկար 52

	<p>հաղորդագրությունների բառացի և ենթադրվող իմաստներին ընկալելը, ինչպես օրինակ՝ օրաթերթում քաղաքական իրադարձություններին հետևելը կամ կրոնական բնույթի տեքստի էությունը հասկանալը:</p>	<p>2. Կարդա՛ հանելուկը և գուշակիր (կիրառելի չէ առաջին դասարանի, առաջին կիսամյակի այն երեխաների համար, ովքեր դեռ տառաճանաչ չեն):</p> <p>3. Հետևե՛լ գրավոր հաղորդակցությունների, նկարների ընկալմանը գնահատման ողջ ընթացքում:</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 53</p>
<p>d330</p>	<p>Խոսելը</p> <p>(Բառացի և ենթադրվող իմաստ ունեցող՝ բանավոր հաղորդագրությունների մաս կազմող բառեր, բառակապակցություններ և առավել երկար պարբերություններ կազմելը և արտաբերելը, ինչպես օրինակ՝ բանավոր խոսքի միջոցով փաստ ներկայացնելը կամ պատմություն պատմելը):</p>	<p>1. Լսի՛ր և կրկնի՛ր հետևյալ բառերը՝ դաս, տաս, թաս, կար, գառ, քար, ծառ, սար, զառ, գայլ, ձուկ, ճառ, չար, ցուլ, ջուր, շուն, ժանգ, բադ, պատ, փիղ, խաղ:</p> <p>2. Հետևե՛լ երեխայի խոսքին գնահատման ողջ ընթացքում:</p>	
<p>d350</p>	<p>Զրույցը</p> <p>(Մտքերի և գաղափարների փոխանակումը սկսելը, շարունակելը և ավարտելը՝ բանավոր, գրավոր խոսքի, ժեստերի լեզվի կամ լեզվական այլ միջոցների օգնությամբ՝ ծանոթ կամ անծանոթ մեկ կամ մի քանի անձանց հետ՝ ֆորմալ կամ ոչ ֆորմալ իրավիճակներում՝ ներառյալ զրույցը սկսելը, շարունակելը և ավարտելը, մեկ կամ ավելի մարդկանց հետ զրուցելը):</p>	<p>1. Պատմի՛ր քո սիրելի տոնի մասին (ընթացքում երեխային տալ թեմայից բխող 3-4 հարց):</p> <p>2. Հետևե՛լ ինչպես է երեխան սկսում, շարունակում և ավարտում զրույցը:</p>	
<p>d355</p>	<p>Քննարկումը</p> <p>(Հարցի ուսումնասիրությունը կամ բանավեճը սկսելը, շարունակելը և ավարտելը, կողմ և դեմ փաստարկներով, ինչն իրականացվում է բանավոր, գրավոր խոսքի, ժեստերի լեզվի կամ լեզվական այլ միջոցների օգնությամբ՝ ծանոթ կամ անծանոթ մեկ կամ մի քանի մարդկանց հետ՝ ֆորմալ կամ ոչ ֆորմալ իրավիճակներում՝ ներառյալ մեկ անձի կամ մի քանի մարդկանց հետ քննարկումը):</p>	<p>1. Ընկերները դասամիջոցին նախաճաշում էին: Վարդանը նայում էր ընկերներին և ոչինչ չէր ուտում, որովհետև նախաճաշ չունեիր: Այդ ժամանակ Արամը ծիծաղելով ուտում էր իր խնձորը, իսկ մյուս ընկերը՝ Վահեն, մոտեցավ Վարդանին և տվեց նրան իր հացի մի մասը:</p> <p>(*) Իրականացնել քննարկում հետևյալ հարցերի շուրջ ըստ տեքստի (խոսքով չհաղորդակցվող երեխան կարող է պատասխանել գրավոր խոսքի, ժեստերի միջոցով):</p> <ul style="list-style-type: none"> • Ի՞նչ ես կարծում, արդյո՞ք ճիշտ վարվեց Արամը: • Ինչպիսի՞ն է Վահեի արարքը: • Արամն ինչպիսի՞ ընկեր է Վարդանի համար: 	

		<ol style="list-style-type: none"> 2. Կարողանո՞ւմ ես հիմնավորել և մինչև վերջ պնդել քո կարծիքը: 3. Կարողանո՞ւմ ես սխալվելու դեպքում ընդունել դիմացինի տեսակետը: 	
d360	<p>Հաղորդակցության սարքեր և մեթոդներ օգտագործելը</p> <p><i>(Հաղորդակցության նպատակով սարքեր, մեթոդներ և այլ միջոցներ օգտագործելը, ինչպես օրինակ՝ ընկերոջը հեռախոսով զանգահարելը՝ ներառյալ հեռահաղորդակցության սարքեր, տրանսպորտային մեքենաներ և հաղորդակցության մեթոդներ օգտագործելը):</i></p>	<ol style="list-style-type: none"> 1. Կարողանո՞ւմ ես օգտվել հեռախոսից՝ խոսել և հաղորդագրություններ գրել, հաղորդակցության նպատակով կիրառել համակարգիչ, գաջեթ, FM համակարգ կամ որպես հաղորդակցման միջոց կարդալ շուրթերից, կիրառել ժեստեր: 2. Կարողանո՞ւմ ես օգտվել հեռախոսի հավելվածներից (զանգ, տեսազանգ) ընկերոջդ կամ հարազատներիդ հետ հաղորդակցվելու նպատակով: 	
d4. Շարժունակությունը			
d440	<p>Դաստակի նուրբ շարժումներ կատարելը</p> <p><i>(Առարկաները բանեցնելուն առնչվող համակարգված գործողություններ կատարելը, առարկաները վերցնելը, բանեցնելը և բաց թողնելը ձեռքի, մատների կամ մեծ մատի օգնությամբ, ինչպես օրինակ՝ սեղանից մեքենայի մասերը վերցնելը կամ բռնակը պարզեցնելը՝ ներառյալ վերցնելը, բռնելը, բանեցնելը և բաց թողնելը):</i></p>	<ol style="list-style-type: none"> 1. Բռնի՞ր առարկան երկու ձեռքերով և դի՞ր սեղանին (հերթականությամբ առաջարկել փոքր, միջին և մեծ առարկաներ): 2. Սեղանից վերցրո՞ւ մետաղադրամները (10, 20, 50, 100, 200 դրամանոցներ): 3. Ուրվագծի՞ր տրված պատկերը մատիտով և կտրի՞ր մկրատով: 4. 6-7 տարեկաններ Ներկի՞ր տրված պատկերը՝ փորձելով պահպանել եզրագծերը: 8-10 տարեկաններ Անցի՞ր ճանապարհով՝ առանց թուղթը շարժելու, գծերի սահմանները խախտելու և գրիչը թղթից կտրելու: 	<p>Աշխատանքային տեսոր՝ առաջադրանք 25 Խթանիչ նյութ՝ մկրատ</p> <p>Աշխատանքային տեսոր՝ առաջադրանք 26</p>
d450	<p>Քայլելը</p> <p><i>(Որևէ մակերեսի երկայնքով ուղիով տեղաշարժվելը, այնպես որ մեկ ոտնաթաթը միշտ լինի գեպին, ինչպես օրինակ՝</i></p>	<ol style="list-style-type: none"> 1. Կարողանո՞ւմ է երեխան 1 կմ-ը գերազանցող տարածություն անցնել ոտքով, օրինակ՝ բաց տարածք կամ գյուղերի միջև ընկած տարածություն): 2. Կարողանո՞ւմ է երեխան քայլել խոտածածկ մակերեսի, ավազի, մանրախիճի, սառույցի և ձյան վրայով: 	

	<p>զբոսնելիս, դանդաղ քայլելիս, դեպի առաջ քայլելիս, հեպ-հեպ գնալիս կամ մի կողմ քայլելիս՝ ներառյալ ուղքով կարճ կամ երկար տարածություններ անցնելը, փարբեր մակերեսների վրա քայլելը, խոչընդոտները քայլելով շրջանցելը՝ բացառությամբ տեղափոխվելու (d420), վազելը/տեղաշարժվելու (d455):</p>	<p>3. Կարողանո՞ւմ է երեխան շրջանցել կամ անցնել մայթեզրի վրայով:</p>	
		<p>4. Կարողանո՞ւմ է երեխան մարդաշատ վայրերում անցնել մարդկանց միջով:</p>	
		<p>5. Հետևե՞լ երեխայի քայլքին գնահատման ողջ ընթացքում:</p>	
d5. Ինքնասպասարկումը			
d6. Կենցաղը			
d7. Միջանձնային շփումը և հարաբերությունները			
<p>d720</p>	<p>Բարդ միջանձնային փոխհարաբերություններ</p> <p><i>(Այլ մարդկանց հետ շփումը պահպանելը և կառավարելը՝ տվյալ իրավիճակում և հասարակության համար ընդունելի եղանակով, ինչպես օրինակ՝ հույզերը և մղումները զսպելու, լեզվական և ֆիզիկական ագրեսիան կառավարելու, սոցիալական շփման մեջ ինքնուրույն գործելու, ինչպես նաև հասարակական կանոններին և պայմանականություններին համապատասխան գործելու միջոցով՝ ներառյալ այլ անձանց հետ խաղալը, հարաբերություններ ձևավորելը և դադարեցնելը, շփման շրջանակում հարաբերությունները կարգավորելը, սոցիալական կանոններին համապատասխան շփվելը և սոցիալական տարածություն պահպանելը):</i></p>	<p>1. Կարողանո՞ւմ ես արդյոք առանց կաշկանդվելու շփվել հասակակիցներիդ հետ, օրինակ (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4)՝</p> <ul style="list-style-type: none"> • գնալ զբոսանքի • մասնակցել միջոցառումներին • արտահայտել սեփական կարծիքը • ներգրավվել խմբային խաղերում: <p>2. Կարողանո՞ւմ ես մերժել ընկերոջդ, ով դիմել է քեզ այնպիսի խնդրանքով, որը չես ցանկանում իրականացնել.</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p> <p>3. Կարողանո՞ւմ ես կարգավորել վարքագիծդ, երբ այլ անձանց ներկայությամբ քեզ վիրավորում են.</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p>	

		<p>4. Պատկերացրու մի իրավիճակ, երբ ընկերներիցդ մեկի հետ այլևս չես ցանկանում շփվել. կկարողանա՞ս հեշտությամբ դադարեցնել հարաբերություններն այնպես, որ դիմացինը չվիրավորվի.</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p>	
d8. Կյանքի հիմնական բնագավառները			
<p>d820</p>	<p>Դպրոցական կրթությունը</p> <p><i>(Դպրոց ընդունվելը, կրթություն ստանալը, ֆորմալ կրթությանը առնչվող բոլոր պարտականությունները կատարելը և ֆորմալ կրթության բոլոր առավելություններից օգտվելը, փարրական կամ միջնակարգ կրթական ծրագրի շրջանակներում ուսումնական նյութը, առարկաները և ուսումնական ծրագրի այլ պարտադիր բաղադրիչները սովորելը, այդ թվում՝ կանոնավոր կերպով դպրոց հաճախելը, այլ աշակերտների հետ համագործակցելը, ուսուցիչներից առաջադրանքներ ստանալը, հանձնարարված առաջադրանքների ու նախագծերի կատարումը կազմակերպելը, դրանք ուսումնասիրելը և կատարելը, և կրթության այլ փուլերին պատրաստվելը):</i></p>	<p>1. Կարողանո՞ւմ է երեխան համագործակցել համադասարանցիների, ուսուցիչների հետ.</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p> <p>2. Արդյո՞ք երեխայի կրթական (ակադեմիական) մակարդակը համապատասխանում է չափորոշչային պահանջներին:</p> <p>3. Կարողանո՞ւմ է երեխան պատշաճ կերպով կատարել հանձնարարված առաջադրանքները.</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p> <p>4. Արդյո՞ք կանոնավոր կերպով հաճախում ես դասերին. ընտրի՞ր քեզ համապատասխանող տարբերակը.</p> <p>0 հաճախում եմ միշտ 1 երբեմն բացակայում եմ 2 հաճախ բացակայում եմ 3 հազվադեպ եմ հաճախում</p>	

		4 երբեք չեմ հաճախում:	
		5. Արդյո՞ք Ձեր երեխան մասնակցում է դպրոցում կազմակերպված միջոցառումներին մյուս աշակերտների հետ միասին. 0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք	
d880	Խաղերի մեջ ներգրավվելը <i>(Առարկաներով, խաղալիքներով, նյութերով կամ խաղերով նպատակաուղղված, հետևողական կերպով զբաղվելը՝ ինքնուրույն կամ յալ անձանց հետ միասին):</i>	1. (*) Խաղում ենք «Անուններ» (մարդկանց, ծաղիկների, կենդանիների, քաղաքների): Ուշադի՛ր լսիր, ես կասեմ ծաղկի անուն, դու պետք է շարունակես և ասես նոր անուն իմ ասածի վերջին տառով (խոսքով չհաղորդակցվող երեխաների հետ խաղալ այլ խաղեր, օրինակ՝ դոմինո): 2. Խաղում ենք խաղ «Մոծակ»: Ուշադի՛ր լսիր խաղի կանոնները և փորձի՛ր դրանք պահպանել: 3. Մասնակցո՞ւմ ես խմբային խաղերին՝ պահպանելով քայլերի հաջորդականությունը և կանոնները:	Խթանիչ նյութ՝ խաղ «Մոծակ»
d9. Համայնքային, սոցիալական և քաղաքացիական կյանքը			
d920	Հանգիստը և ժամանցը <i>(Ցանկացած տեսակի խաղային, ժամանցային միջոցառումներին, օրինակ՝ ոչ պաշտոնական կամ կազմակերպված խաղերին և սպորտային միջոցառումներին, ֆիթնեսի, ռելաքսացիայի, զվարճանքի կամ զվարճության ծրագրերին մասնակցելը, պատկերասրահներ, թանգարաններ, կինոթատրոններ կամ թատրոններ այցելելը, արհեստով կամ սիրելի զբաղմունքով զբաղվելը, ժամանցային ընթերցանությամբ զբաղվելը, երաժշտական գործիքներ նվագելը, տեսարժան վայրեր այցելելը, զբոսաշրջությունը և ճանապարհորդությունը՝</i>	1. Մասնակցո՞ւմ ես դպրոցում, բակում կամ այլ տեղում կազմակերպվող տարբեր խաղային, սպորտային, ժամանցային միջոցառումներին: 0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք 2. 8-10 Կարողանո՞ւմ ես ընկերներիդ հետ ինքնուրույն կազմակերպել քո հանգստյան օրերը: 0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ	

<p>ներառյալ խաղերը, սպորտը, արվեստը և մշակույթը, արհեստները, սիրելի զբաղմունքները և սոցիալական շփումը՝ բացառությամբ կենդանիները որպես փոխադրամիջոց օգտագործելու (d480), վարձատրվող և չվարձատրվող աշխատանքի (d850 և d855), խաղերի մեջ ներգրավվելու (d880), կրոնի և հոգևոր կյանքի (d930), քաղաքական կյանքի և քաղաքացիության (d950)):</p>	<p>4 երբեք</p>	
	<p>3. Ընտանիքիդ անդամների հետ այցելում ես ժամանցային և մշակութային վայրեր (կինոթատրոններ, թատրոններ, ներկայացումներ, համերգներ և այլն):</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p>	
	<p>4. Արդյո՞ք կարողանում ես զբաղվել քո նախասիրություններով և սիրելի զբաղմունքով, օրինակ՝ նկարչությամբ, սպորտով և այլն:</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p>	

Տեսողության արձանագրություն

Տեսողության խնդիրներ ունեցող երեխաների հետ արձանագրությունը կիրառելիս ապահովել տրիֆլումանկավարժի ներկայություն՝ ըստ անհրաժեշտության:

Չտեսնող երեխաների համար որպես այլընտրանք կիրառել (ρ) տարբերակը:

Հարցեր, որոնց դիմաց դրված է մեկ աստղանիշ (*)՝ չտեսնող երեխաներին հնարավորություն տալ առարկաները շոշափելու, առաջադրանքները բրայլյան այբուբենով կատարելու կամ բանավոր պատասխանելու:

Հարցեր, որոնց դիմաց դրված է երկու աստղանիշ (**)*՝ կիրառելի չեն չտեսնող երեխայի համար:

Հարցեր, որոնց դիմաց չկա նշված որևէ տարիքային խումբ՝ կիրառելի են 6-10 տարեկան բոլոր երեխաների համար:

Գործունեության և մասնակցության ծածկագրեր		Հարցեր	Անհրաժեշտ նյութ
d1. Սովորելը և գիտելիքներ կիրառելը			
d110	Դիտելը (նայելը) <i>(Տեսողական ազդակներ ընկալելու նպատակով տեսողության զգայարանը մտադրված կերպով օգտագործելը, ինչպես, օրինակ՝ առարկային հեղուկները, մարդկանց դիտելը, սպորտային իրադարձություն, որևէ անձի կամ խաղացող երեխաներին նայելը):</i>	1. Խմբավորի՞ր հիմնական գույներն ըստ երանգների (երեխայի առջև դնել կարմիր, կանաչ, կապույտ, դեղին գույնի մատիտներ):	Խթանիչ նյութ՝ գունավոր մատիտներ
		2. 6-7 տարեկաններ Գտի՞ր բացակայող հատվածը և տեղադրի՞ր: 8-10 տարեկաններ Ի՞նչ պատկեր և ի՞նչ թիվ ես տեսնում նկարներում (խոսքով չհաղորդակցվող երեխան մատնանշում է պահանջված թիվը և պատկերը):	Խթանիչ նյութ՝ նկար 26.1 նկար 26.2
		3. Գտի՞ր ստվերի համապատասխան պատկերը:	Խթանիչ նյութ՝ խաղ «Գտիր ստվերը»
		4. Երեխային առաջարկել նկար և հետևել, թե աչքերից ինչ հեռավորության վրա է պահում (արդյունքը կլինի բարձր, եթե երեխան նկարը պահում է 25-30 սմ հեռավորության վրա և չի անտեսում պատկերված մանր առարկաները):	Խթանիչ նյութ՝ նկար 27

		<p>5. Ինչ կա սենյակում (խնդրել երեխային ցույց տալ սենյակի տարբեր հատվածներում գտնվող կահույքը և առարկաները, դիտարկել, թե երեխան ինչպես է ուսումնասիրում միջավայրը, արդյո՞ք կարող է տեսնել տեսադաշտում գտնվող առարկաները անկախ չափերից, հեռավորությունից, դասավորությունից, թե՞ ֆիքսում է միայն վառ գունավորմամբ և լուսարձակող, առավել մոտ և մեծ առարկաները):</p> <p>6. Հետևի՞ր շարժվող առարկային (շարժել քուղը տարբեր ուղղություններով):</p> <p>7. Արդյո՞ք երեխան հայացքով հետևում է էկրանին երևացող պատկերին (գովազդ, մուլտֆիլմ և այլն):</p>	<p>Խթանիչ նյութ՝ քուղ</p>
d115	<p>Լսելը</p> <p><i>(Լսողական ազդակներ ընկալելու նպատակով լսողության զգայարանը մտադրված կերպով օգտագործելը, ինչպես, օրինակ՝ ուղիղ, մարդու ձայն, երաժշտություն, դասախոսություն կամ պարմվածք ունկնդրելը):</i></p>	<p>1. Լսի՞ր և կրկնի՞ր հնչեցված բառերը՝ կատու, սեղան, շուն, տուն, մեքենա, մատիտ, աղջիկ, խոզ, կով, նապաստակ (բառերն արտասանել 6 մետր հեռավորությունից, երեխայի մեջքի կողմից):</p> <p>2. Լսի՞ր և կրկնի՞ր հնչեցված բառերը՝ կատու, շուն, տուն, մեքենա, կով, նապաստակ (բառերն արտասանել 22ուկով, 6 մետր հեռավորությունից, երեխայի մեջքի կողմից):</p> <p>3. Կրկնի՞ր նախադասությունները: Լուսինը լույս է տալիս: Գարնան առաջին ծաղիկը ծնծաղիկն է: Սեղանին դրված էր դանակ, պատառաքաղ, գդալ:</p> <p>4. Լսի՞ր և նշի՞ր, թե որ հնչյունով է սկսվում և ավարտվում տվյալ բառը. Նուռ, կատու, անձրև, քարտեզ, ծաղիկ, նապաստակ:</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 28</p> <p>Խթանիչ նյութ՝ փայտե գրատախտակ հայերեն տառերով</p>
d132	<p>Տեղեկություններ հավաքելը</p> <p><i>(Անձանց, իրերի և իրադարձությունների մասին փաստեր հավաքելը, ինչպես օրինակ՝ «ինչու», «ինչ», «որտեղ» և «ինչպես» հարցերը փայլը, անուններ հարցնելը՝ բացառությամբ հասկացություններ սովորելու (d137), հմտություններ ձեռք բերելու (d155)):</i></p>	<p>1. Կարողանո՞ւմ է երեխան տեղեկատվություն հավաքել հանձնարարված թեմայի շուրջ (տեղեկություններ ստանալու համար տալ «ե՞րբ», «ինչպե՞ս» և «ինչո՞ւ» հարցերը):</p> <p>2. Պատկերացրու՝ հրավիրված ես ծննդյան տոնի, ինչ հարցեր կհետաքրքրեն քեզ նախքան գնալը:</p> <p>3. (***) Նայիր նկարին և ասա՝ ով է (ի՞նչ հարցեր կուղղես տեղեկատվություն ստանալու համար):</p> <p>4. Հիմա խաղում ենք խաղ «Ո՞վ եմ ես»:</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 30</p> <p>Խթանիչ նյութ՝ խաղ «Ո՞վ եմ ես»</p>

<p>d135</p>	<p>Կրկնելու միջոցով սովորելը <i>(Իրադարձությունների կամ խորհրդանիշների հաջորդականությունը կրկնելը՝ որպես սովորելու հիմնական բաղադրիչ, ինչպես, օրինակ՝ ժեստերի միջոցով կամ առանց ժեստերի փասնյակներով հաշվելու կամ բանաստեղծություն արտասանելու մեջ վարժվելը՝ ներառյալ գործողության կամ վարքագծի հետագա նմանակումը):</i></p>	<p>1. Արտասանի՛ր որևէ բանաստեղծություն կամ հաշվի՛ր (6-7 տարեկաններ՝ 1-10 մեխանիկական հաշիվ, 8-10՝ տասնյակներով կամ հարյուրյակներով):</p> <p>2. (*) Ցո՛ւյց տուր՝ լուսակրի որ գույնն ինչ է նշանակում (չտեսնող երեխան պատասխանում է բանավոր):</p> <p>3. ա) Պատրաստի՛ր թղթից նավակ կամ բաժակ՝ հետևելով և հաջորդաբար կրկնելով իմ քայլերը:</p> <p>բ) Հյուսի՛ր պարանը:</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 33</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 35 Խթանիչ նյութ՝ պարան</p>
<p>d155</p>	<p>Հմտություններ ձեռք բերելը <i>(Գործողությունների կամ առաջադրանքների փոխկապակցված խմբերին առնչվող հիմնական և բարդ հմտությունները զարգացնելը՝ այնպիսի հմտությունների ձեռքբերումը սկսելու և շարունակելու համար, ինչպիսիք են գործիքներ կամ խաղալիքներ գործածելը կամ խաղեր խաղալը՝ ներառյալ հիմնական և բարդ հմտություններ ձեռք բերելը՝ բացառությամբ գրել սովորելու (d145) և գրելու (d170), խաղալ սովորելու (d131)):</i></p>	<p>1. Աշխատանքային գործիքները, հեռախոսի հավելվածները, համակարգիչը կամ այլ էլեկտրոնային սարքերը (փոշեկուլ, վարսահարդարիչ և այլն) օգտագործո՛ւմ ես ըստ նշանակության:</p> <p>2. Կարողանո՞ւմ ես խաղալ՝ հետևելով խաղի կանոններին: Նշիր քո նախընտրած խաղի կանոնները:</p> <p>3. 8-10 տարեկաններ (*) Լուծի՛ր վարժությունն՝ օգտվելով հաշվիչից (չտեսնող երեխային առաջարկել ձայնային հաշվիչ):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 4 Խթանիչ նյութ՝ հաշվիչ</p>
<p>d161</p>	<p>Ուշադրությունը պահպանելը <i>(Համապատասխան ժամանակահատվածում կոնկրետ գործողություններին կամ առաջադրանքներին ուղղված ուշադրությունը մտադրված կերպով պահպանելը):</i></p>	<p>1. ա) Կարդալուն զուգահեռ երեխային ցույց տալ, որ աստղի մեջ պատկերված է շրջան, քառակուսու մեջ՝ խաչ, սրտիկի մեջ՝ երկու գծիկ, իսկ շրջանի մեջ՝ մեկ գծիկ: Ներքևում դասավորված պատկերների մեջ անհրաժեշտ է տեղադրել համապատասխան նշանները: Կատարի՛ր այդ աշխատանքը յուրաքանչյուր տողի համար:</p> <p>բ) Լսի՛ր բառերի շարքը, ծափ տուր գրիչ բառը լսելիս. Քանոն, մատիտ, գրիչ, ալբոմ, գիրք, գրիչ, քանոն, տետր, գրիչ, կարկին, քարտեզ, տետր, գլոբուս, կավիճ, գրիչ, տետր:</p> <p>2. ա) Նկարում խճճված գծերից յուրաքանչյուրը վերջանում է ինչ-որ թվի վրա, օրինակ՝ 1-ով սկսվող գիծը վերջանում է 5 թվի վրա: Ցո՛ւյց տուր, թե որ թվերի վրա են վերջանում մնացած գծերը:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 5</p> <p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 6 Խթանիչ նյութ՝ փայտե փազլ</p>

		<p>բ) Դասավորի՛ր պատկերներն այնպես, ինչպես դրված են (5 երկրաչափական պատկերները դասավորել, թույլ տալ երեխային շոշափել առարկաները հերթականությամբ, յուրաքանչյուրի համար՝ 5 վայրկյան, այնուհետև խառնել):</p>	
		<p>3. Ուշադիր լսի՛ր արտահայտությունները, որոնք կկարդամ: Մտապահիր, որպեսզի կրկնես: Ամռանը շոգ է: Երեխաները խաղում են: Ծառերի վրա մրգեր են աճում: Տղան օգնում է տատիկին: Լճակում նավակ է լողում:</p>	
		<p>4. 6-7 տարեկաններ ա) Նայի՛ր նկարին, փորձի՛ր մտապահել պատկերները, որպեսզի հետո դրանք թվարկես (պահել նկարը 20 վայրկյան, ապա շրջել):</p> <p>բ) Շոշափի՛ր առարկաները, ապա նշիր՝ ինչն է ավելացել կամ պակասել (երեխայի առջև դնել սպասքի պարագաներ, ապա տալ 40 վայրկյան շոշափելու համար):</p> <p>8-10 տարեկաններ (*) Ուշադիր նայիր թվերին 20 վայրկյան, այնուհետև նույնությամբ տեղադրի՛ր աղյուսակի դատարկ վանդակներում (չտեսնող երեխային առաջարկել բրայլյան տարբերակը):</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 38 Սպասքի պարագաներ (հավաքածու)</p> <p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 7</p>
<p>d163</p>	<p>Մտածելը <i>(Մտքեր, գաղափարներ և պատկերներ ձևակերպելը՝ նպատակաուղղված կամ ոչ նպատակաուղղված կերպով, ինքնուրույն կամ այլոց հետ միասին, մտածելուն առնչվող գործողությունների հետ կապված՝ ինչպես օրինակ՝ միտք արտահայտելը, ձևանալը, բառախաղը, մտացածին բան ստեղծելը,</i></p>	<p>5. Կկարդամ 10 բառ, որից հետո ցանկացած հաջորդականությամբ կկրկնես այնքանը, որքանը հիշեցիր. անտառ, մուրճ, հաց, դուռ, ձի, սունկ, բեռ, ջուր, աթոռ, մեղր:</p> <p>1. Ո՞ր բառն է ավելորդ՝ բազմոց, պահարան, բաժակ, աթոռ (6 տարեկան երեխաների համար կարող էք կիրառել նկար-քարտեր):</p> <p>2. ա) Գտի՛ր համապատասխան հատվածը (6-7 տարեկանների համար կիրառել Ռ-ավենի պրոգրեսիվ մատրիցաների B12, B8 տարբերակները, իսկ 8-10 տարեկանների համար՝ C3, C1, C9, D4 տարբերակները):</p> <p>բ) Գուշակի՛ր հանելուկը:</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 39</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 40</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 40.1 (շուն, վարդ)</p>

	<p><i>թերրեմ ապացուցելը, մտքերով խաղալը, մտազորողը, մտասուզվելը (մեղիփացիա), մտորելը, խորհրդածելը կամ խորհելը):</i></p>	<p>3. 6-7 տարեկաններ ա) Դասավորի՛ր նկարները ճիշտ հաջորդականությամբ:</p> <p>բ) Շարունակի՛ր միտքը.</p> <ul style="list-style-type: none"> • Երեխաները գնում են դպրոց, որպեսզի...: • Ձմռանը հագնում են տաք հագուստ, որպեսզի...: • Անձրևանոցն օգտագործում են, որպեսզի...: 	<p>Էսթանիչ նյութ՝ նկար 41</p>
		<p>4. Ո՞ր տարբերակը կընտրես շնիկին բույն պատրաստելու համար (6 տարեկան երեխաների համար կարող եք կիրառել նկար-քարտեր).</p> <p>ա) մեխ, պարան, մուրճ, փայտ բ) սղոց, մեխ, մուրճ, փայտ գ) փայտ, բահ, մեխ, մուրճ:</p>	<p>Էսթանիչ նյութ՝ նկար 42</p>
<p>d166</p>	<p>Կարդալը</p> <p><i>(Գրավոր խոսքը (օրինակ, գրքեր, ցուցումներ, թերթեր՝ սովորական տեքստի կամ Բրայլի այբուբենով գրված) ընկալելուն և վերծանելուն առնչվող գործողություններ կատարելը՝ ընդհանուր գիտելիք կամ հատուկ տեղեկություն ստանալու համար՝ ներառյալ ստանդարտ տառերով կամ նիշերով կազմված գրավոր խոսքը, ինչպես նաև յուրահատուկ խորհրդանշաններով, օրինակ՝ պատկերանշաններով կազմված տեքստն ընկալելը և մեկնաբանելը):</i></p>	<p>1. 6-7 տարեկաններ Թվարկի՛ր «Ն» հնչյունով սկսվող մի քանի բառ (6 տարեկան երեխաներին առաջարկել նապաստակի, նռան, նարնջի և հարցաշարում առկա ցանկացած 3 այլ առարկայական նկարների խմբից ընտրել այն առարկաների պատկերները, որոնք սկսվում են «Ն» հնչյունով):</p>	<p>Էսթանիչ նյութ՝ նկար 2, 8, 32</p>
		<p>2. 6-7 տարեկաններ Հեգի՛ր հետևյալ բառերը՝ տուն, ներկ, գազար, բազմոց, պահարան, եղանակ:</p>	
		<p>3. 6-7 տարեկաններ Ամբողջացրո՛ւ հետևյալ տառերը՝ ձ-ու-կ, կ-ա-տ-ու, ն-ա-պ-ա-ս-տ-ա-կ, լ-ու-ս-ա-ց-ու-յ-ց:</p>	
		<p>4. 6-7 տարեկաններ (*) Կարդա՛ հանձնարարված նյութը (կիրառելի չէ առաջին դասարանի նախաայբբենական շրջանում սովորող երեխաների համար, այբբենական շրջանում երեխային առաջարկել բառեր իր անցած տառերով, չտեսնող երեխաների համար կիրառել բրայլյան տարբերակը):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 8</p>
		<p>5. 6-7 տարեկաններ Պատասխանի՛ր տեքստի կամ բառակապակցությունների, պարզ համառոտ նախադասությունների վերաբերյալ 2 հարցի՝ հարցադրումներն ուղղելով նույն ծածկագրի 4-րդ առաջադրանքին</p>	

		<p>համապատասխան (կիրառելի չէ առաջին դասարանի նախաալբերենական շրջանում սովորող երեխաների համար):</p>	
		<p>6. 8-10 տարեկաններ (* Տրված բառերից ստացիր 3 նոր բառ՝ մեկական տառ փոխելով, օրինակ՝ պատ-պար, (չտեսնող երեխաների համար կիրառել բրայլյան տարբերակը):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 9</p>
		<p>7. 8-10 տարեկաններ (* Կարդա՝ հանձնարարված նյութը (չտեսնող երեխաների համար կիրառել բրայլյան տարբերակը):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 10</p>
		<p>8. 8-10 տարեկաններ (* Պատասխանի՛ր տեքստի վերաբերյալ հարցերին (երեխային ուղղել 3-4 հարց):</p>	
		<p>9. 8-10 տարեկաններ (* Տեղադրի՛ր տրված ածականները համապատասխան նախադասություններում (չտեսնող երեխաների համար կիրառել բրայլյան տարբերակը):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 11</p>
<p>d170</p>	<p>Գրելը <i>(Նիշեր կամ տառեր գրելը, պատկերելը կամ վերարտադրելը տեղեկատվություն հաղորդելու համար, ինչպես օրինակ՝ իրադարձություններ կամ մտքեր գրի առնելը կամ նամակ կազմելը, գրառումներ, նշումներ և գրավոր հանձնարարություն կատարելը, տպելը):</i></p>	<p>1. 6-7 տարեկաններ (* Միացրո՛ւ տրված կետերը մեկ գծով առանց ընդհատելու (չտեսնող երեխաների համար կիրառել կաղապարանախշ):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 12</p>
		<p>2. 6-7 տարեկաններ (* Արտագրի՛ր տրված նյութը (6 տարեկան երեխաները կարող են գրել մասնիկներ ըստ օրինակի, չտեսնող երեխաների համար կիրառել բրայլյան տարբերակը):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 13</p>
		<p>3. 6-7 տարեկաններ (* Գրի՛ր բառեր, բառակապակցություններ, պարզ համառոտ նախադասություններ (թելադրել բառեր, բառակապակցություններ, պարզ համառոտ նախադասություններ, որոնք կազմված են երեխային արդեն ծանոթ տառերով, չտեսնող երեխաների համար կիրառել բրայլյան տարբերակը):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 14</p>
		<p>4. 8-10 տարեկաններ (* Կազմի՛ր բառեր և գրի՛ր դրանք առանձին տեղում (չտեսնող երեխաների համար կիրառել բրայլյան տարբերակը):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 15</p>

		<p>5. 8-10 տարեկաններ (*) Կազմի՛ր նախադասություն քո կազմած բառերով (չտեսնող երեխաների համար կիրառել բրայլյան տարբերակը):</p>	
		<p>6. 8-10 տարեկաններ (*) Գրի՛ր թելադրություն: Պապս ամեն օր աշխատում էր իր այգում: Տարիներ առաջ նա ընտրեց քարքարոտ այդ հողակտորը: Մաքրեց այն, ծառեր տնկեց ու մշակեց: Աշնանն այգու բազմագույն պտուղները պսպղում էին արևի ճառագայթների տակ (չտեսնող երեխաների համար կիրառել բրայլյան տարբերակը):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 16</p>
		<p>7. 8-10 տարեկաններ (*) Գրի՛ր նամակ ում կցանկանաս (չտեսնող երեխաների համար կիրառել բրայլյան տարբերակը):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 17</p>
<p>d172</p>	<p>Հաշվելը <i>(Հաշվարկներ կատարելը՝ բառերով արտահայտված խնդիրները լուծելու նպատակով մաթեմատիկական սկզբունքներ կիրառելու միջոցով կամ պատասխանները ստանալով կամ ցուցադրելով, ինչպես օրինակ երեք թվերի գումարը հաշվարկելը կամ մեկ թիվը մյուսով բաժանելու պատասխանը գտնելը):</i></p>	<p>1. 6-7 տարեկաններ (*) Թվերի շարքում լրացրո՛ւ այն թվերը, որոնք չկան (առաջադրանքը կատարել բանավոր, գրավոր կամ բրայլյան տարբերակով):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 18</p>
<p>2. 6-7 տարեկաններ (*) Ունենք շարքով դասավորված 9 մատիտ: Քանի՞ մատիտ կլինի շարքում, եթե սկզբից և վերջից ավելացնենք մեկական մատիտ (առաջադրանքը կատարել բանավոր, գրավոր կամ բրայլյան տարբերակով):</p>	<p>Խթանիչ նյութ՝ գունավոր մատիտներ</p>		
<p>3. 6-7 տարեկաններ Բաժանի՛ր 6 մատիտը երկու հոգու այնպես, որ յուրաքանչյուրը ստանա հավասար քանակով մատիտներ:</p>			
<p>4. 6 տարեկաններ Համեմատի՛ր միանիշ թվերը և բանավոր նշի՛ր՝ որն է մեծ, որը՝ փոքր (անհրաժեշտության դեպքում թվաքարտերի փոխարեն կիրառել հաշվեձողիկներ):</p>	<p>Խթանիչ նյութ՝ փայտե գրատախտակ հայերեն տառերով</p>		
<p>5. 7 տարեկաններ (*) Համեմատի՛ր միանիշ թվերը (քարտեր) և աստղանիշի փոխարեն դի՛ր համապատասխան նշանը՝ <, >, = (չտեսնող երեխան առաջադրանքը կատարում է բանավոր):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 19</p>		

		<p>6. 6-7 տարեկաններ (*) Կատարի՛ր տրված առաջադրանքները (անհրաժեշտության դեպքում կիրառել հաշվեճողիկներ):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 20</p>
		<p>7. 8-10 տարեկաններ (*) Լրացրո՛ւ աղյուսակը (երեխային մտածելու համար տալ 1 թույլ ժամանակ: Եթե դժվարանում է, միջամտել: Չտեսնող երեխան առաջադրանքը կատարում է բանավոր):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 21</p>
		<p>8. 8-10 տարեկաններ (*) Քանի՞ անգամ պետք է ծալել 8 սմ կողմեր ունեցող քառակուսի կտրված թուղթը, որպեսզի ստանանք 2 սմ կողմերով քառակուսի (երեխային տրամադրվում է կտրված թուղթը և մտածելու համար տրվում է 2 թույլ: Չտեսնող երեխան կարող է առաջադրանքը կատարել բանավոր):</p>	
		<p>9. 8-10 տարեկաններ (**) Տեղադրի՛ր 8, 4, 0 թվերը յուրաքանչյուր տառի փոխարեն (երեխային մտածելու համար տրվում է մինչև 2 թույլ ժամանակ):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 22</p>
		<p>10. 8-10 տարեկաններ (*) Կատարի՛ր տրված առաջադրանքները (չտեսնող երեխաների համար կիրառել բրայլյան տարբերակը):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 23</p>
<p>d175</p>	<p>խնդիրներ լուծելը <i>(Հարցադրումների կամ իրավիճակների համար լուծումներ գտնելը՝ հարցերի էությունը որոշելու և վերլուծելու, տարբերակներ և լուծումներ կազմելու, լուծումների հնարավոր արդյունքները գնահատելու և ընտրված լուծումը կատարելու միջոցով, ինչպես օրինակ՝ երկու մարդկանց միջև վեճ լուծելիս՝ ներառյալ պարզ և բարդ խնդիրներ լուծելու հմտությունները՝ բացառությամբ մտածելու (d163), որոշումներ կայացնելու (d177)):</i></p>	<p>1. Ինչպե՛ս կվարվես, եթե՝</p> <ul style="list-style-type: none"> • բակում խաղալիս գնդակը ծակվի • խմելիս ջուրը թափվի հագուստիդ վրա <p>2. 6-7 տարեկաններ (*) Նայի՛ր նկարին. ինչպե՛ս կվարվես տվյալ իրավիճակում (չտեսնող երեխայի համար տալ նկարի տիֆլումեկնաբանություն):</p> <p>8-10 տարեկաններ Ինչպե՛ս կարելի է ստանալ 1լ ջուր՝ օգտագործելով 2 և 3 լիտրանոց տարաներ:</p> <p>3. Արդյո՞ք երեխան կարողանում է լուծումներ գտնել կենցաղում կամ միջանձնային հարաբերություններում հանդիպող խնդիրների դեպքում.</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն</p>	<p>Իսթանիչ նյութ՝ նկար 44</p>

		<p>3 հազվադեպ 4 երբեք</p>	
d2. Ընդհանուր առաջադրանքները և պահանջները			
d230	<p>Առօրյա կյանքը կազմակերպելը</p> <p><i>(Պարզ կամ բարդ և համակարգված գործողություններ իրականացնելը՝ առօրյա կյանքը կամ պարտականությունները պլանավորելու, կառավարելու և կատարելու համար, ինչպես օրինակ՝ օրվա ընթացքում ժամանակը պլանավորելը և առանձին գործողությունների համար ծրագրեր կազմելը՝ ներառյալ առօրյա կյանքը կառավարելը և առօրյա գործունեություն իրականացնելը, սեփական կենսագործունեության մակարդակը կառավարելը՝ բացառությամբ համալիր առաջադրանքներ կատարելու (d220)):</i></p>	<p>1. Նշի՛ր գործողություններ, որոնք (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4)՝</p> <ul style="list-style-type: none"> • կատարում ես օրվա ընթացքում • առավել կարևոր են • կարող ես հետաձգել: 	
		<p>2. Կարողանո՞ւմ ես արդյոք հետաքրքիր պլանավորել և անցկացնել քո հանգստյան օրը (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4)՝</p> <ul style="list-style-type: none"> • որոշելով կատարվելիք գործողությունների հերթականությունը, • անհրաժեշտության դեպքում կատարելով փոփոխություններ: 	
		<p>3. Կարողանո՞ւմ ես արդյոք (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4).</p> <ul style="list-style-type: none"> • տրված առաջադրանքը ժամանակին ավարտել • չուշանալ ընկերների հետ հանդիպումից • դպրոց հասնել մինչև դասերի սկսվելը: 	
d240	<p>Սթրեսը և այլ տեսակի հոգեբանական լարվածությունը կառավարելը</p> <p><i>(Պարզ կամ բարդ և համակարգված գործողություններ կատարելն այնպիսի հոգեբանական լարվածություն կառավարելու և վերահսկելու համար, որը պահանջվում է զգալի պարտականությունների, սթրեսային ու ճգնաժամային իրավիճակների և ուշադրությունը շեղելու հետ կապված առաջադրանքներ կատարելիս, ինչպես օրինակ՝ քննություններ հանձնելը, ծանրաբեռնված երթևեկության մեջ փոխադրամիջոց վարելը, հագնվելը, երբ ծնողները շտապեցնում են, առաջադրանքը</i></p>	<p>1. Արդյո՞ք կարողանում ես կառավարել հոյզերի արտահայտումը, երբ (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4)՝</p> <ul style="list-style-type: none"> • չեն կատարվում քո ցանկությունները • չես հասցնում ժամանակին կատարել կարևոր առաջադրանքը • հայտնվում ես նոր միջավայրում • նախապատրաստվում ես քննություններին • չես հասցնում ավարտին հասցնել գրավոր աշխատանքը • ստանում ես նկատողություն • ենթարկվում ես քննադատության: 	
		<p>2. Լարված իրավիճակներում չես դրսևորում նյարդային շարժումներ (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4).</p> <ul style="list-style-type: none"> • ծանոթ միջավայրում 	

	<p><i>որոշակի ժամկետում ավարտելը կամ երեխաների մեծ խմբի մասին հոգ փանելը՝ ներառյալ պարտականություններ կատարելը, սթրեսը և ճգնաժամը կառավարելը):</i></p>	<ul style="list-style-type: none"> անձանոթ միջավայրում: 	
		<p>3. (*) Նկարի՛ր 100 շրջան 30 վայրկյանի ընթացքում (միավորը սահմանել դիտարկման արդյունքում, չտեսնող երեխային առաջարկել առաջադրանքը կատարել բրայլյան տարբերակով՝ 30 վայրկյանում դնել 100 կետ):</p>	
d910	<p>Համայնքային կյանքը</p> <p><i>(Համայնքի սոցիալական կյանքի բոլոր ասպեկտներում ներգրավվելը, ինչպես օրինակ՝ բարեգործական կազմակերպության, ծառայողական ակումբների կամ մասնագիտական հասարակական կազմակերպությունների գործունեությանը մասնակցելը՝ ներառյալ ոչ ֆորմալ և ֆորմալ միավորումները, արարողությունները՝ բացառությամբ չվարձավորվող աշխատանքի (d855), հանգստի և ժամանցի (d920), կրոնի և հոգևոր կյանքի (d930), քաղաքացիական կյանքի և քաղաքացիության (d950)):</i></p>	<p>1. Ծնողներիդ հետ մասնակցո՞ւմ ես այնպիսի արարողությունների, ինչպիսիք են մկրտությունը, հարսանյանց արարողությունը, ծննդյան տոնը և այլն:</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p> <p>2. Ընտանիքիդ անդամների հետ այցելո՞ւմ ես այգիներում, փողոցներում, բացօթյա սրճարաններում, խաղահրապարակներում, քաղաքի հրապարակներում կամ հասարակական այլ վայրերում տեղի ունեցող համերգներին, միջոցառումներին:</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն</p>	

		<p>3 հազվադեպ 4 երբեք</p>	
		<p>3. Մասնակցում ես համայնքում կազմակերպված ծիսական արարողություններին, ինչպիսիք են Վարդավառը, Տյառնընդատաջը, Ծաղկազարդը, Ջատիկը:</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p>	
d9205	<p>Սոցիալական շփումը</p> <p><i>(Այլ անձանց հետ ոչ պաշտոնական կամ առօրյա հանդիպումներին մասնակցելը, ինչպես օրինակ՝ ընկերներին կամ ազգականներին այցելելը կամ հանրային վայրերում ոչ պաշտոնական հանդիպումներ ունենալը):</i></p>	<p>1. Հանգստյան օրերին կամ դասերից հետո հանդիպում ես ընկերներիդ հետ՝ շփվելու, հետաքրքիր ժամանց կազմակերպելու նպատակով:</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p>	
		<p>2. Ծնողներիդ հետ այցելում ես ձեր ազգականներին, բարեկամներին:</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p>	
		<p>3. Այցելում ես ժամանցային և մշակութային վայրեր ընտանիքիդ անդամների, համադասարանցիների հետ միասին (կինոթատրոններ, թատրոններ, պատկերասրահներ):</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p>	

Շարժունակության արձանագրություն

Հարցեր, որոնց դիմաց նշված է (*)՝ հնարավորություն տալ շարժունակության դժվարություններ ունեցող երեխային պատասխանել բանավոր կամ ցույց տալ հայացքով:

Հարցեր, որոնց դիմաց նշված է (**)-՝ կիրառելի չեն մանր շարժունակության դժվարություններ ունեցող և խոսքով չհաղորդակցվող երեխայի համար:

Խոսքով չհաղորդակցվող երեխաների համար որպես այլընտրանք, առկայության դեպքում, կիրառել հարցի (բ) փարբերակը:

Հարցեր, որոնց դիմաց չկա նշված որևէ փարբերային խումբ՝ կիրառելի են 6-10 տարեկան բոլոր երեխաների համար:

Գործունեության և մասնակցության ծածկագրեր		Հարցեր	Անհրաժեշտ նյութեր
d1. Սովորելը և գիտելիքներ կիրառելը			
d110	Դիտելը (նայելը) <i>(Տեսողական ազդակներ ընկալելու նպատակով տեսողության զգայարանը մտադրված կերպով օգտագործելը, ինչպես, օրինակ՝ առարկային հեղուկներ, մարդկանց դիտելը, սպորտային իրադարձություն, որևէ անձի կամ խաղացող երեխաներին նայելը):</i>	<p>1. (*) Խմբավորի՛ր հիմնական գույներն ըստ երանգների (երեխայի առջև դնել կարմիր, կանաչ, կապույտ, դեղին գույնի մատիտներ, շարժունակության դժվարություններ ունեցող երեխան առաջադրանքը կատարում է հայացքով):</p> <p>2. 6-7 տարեկաններ (*) Գտի՛ր բացակայող հատվածը և տեղադրի՛ր (շարժունակության դժվարություններ ունեցող երեխան նկարների շարքից հայացքով ցույց է տալիս բացակայող հատվածի նկար-քարտը): 8-10 տարեկաններ (*) Ի՞նչ պատկեր և ի՞նչ թիվ ես տեսնում նկարներում (շարժունակության դժվարություններ ունեցող և խոսքով չհաղորդակցվող երեխան հայացքով ցույց է տալիս պահանջված թիվը և պատկերը):</p> <p>3. 6-7 տարեկաններ (*) Գտի՛ր սովերի համապատասխան պատկերը (շարժունակության դժվարություններ ունեցող երեխան առաջադրանքը կատարում է հայացքով): 8-10 տարեկաններ</p>	<p>Խթանիչ նյութ՝ գունավոր մատիտներ</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 26.1 նկար 26.2</p> <p>Խթանիչ նյութ՝ խաղ «Գտի՛ր սովերը» Աշխատանքային տետր՝ առաջադրանք 1</p>

		<p>(*) Յո՛ւյց տուր նկարում պատկերված բոլոր քառանկյուններն ու եռանկյունները (շարժունակության դժվարություններ ունեցող երեխան առաջադրանքը կատարում է հայացքով):</p>	
		<p>4. (*) Երեխային առաջարկել նկար և հետևել, թե աչքերից ինչ հեռավորության վրա է պահում (արդյունքը կլինի բարձր, եթե երեխան նկարը պահում է 25-30 սմ հեռավորության վրա և չի անտեսում պատկերված մանր առարկաները: Շարժունակության դժվարություններ ունեցող և խոսքով չհաղորդակցվող երեխան հայացքով ցույց է տալիս պահանջված պատկերը):</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 27</p>
<p>d115</p>	<p>Լսելը <i>(Լսողական ազդակներ ընկալելու նպատակով լսողության զգայարանը մտադրված կերպով օգտագործելը, ինչպես, օրինակ՝ ռադիո, մարդու ձայն, երաժշտություն, դասախոսություն կամ պատմվածք ունկնդրելը):</i></p>	<p>1. (*) Լսի՛ր և կրկնի՛ր հնչեցված բառերը՝ կատու, սեղան, շուն, տուն, մեքենա, մատիտ, աղջիկ, խոզ, կով, նապաստակ (բառերն արտասանել 6 մետր հեռավորությունից, երեխայի մեջքի կողմից, խոսքով չհաղորդակցվող և շարժունակության դժվարություններ ունեցող երեխան միայն մատնաշում կամ հայացքով ցույց է տալիս համապատասխան նկարը):</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 2, 3</p>
		<p>2. (*) Լսի՛ր և կրկնի՛ր հնչեցված բառերը՝ կատու, շուն, տուն, մեքենա, կով, նապաստակ (բառերն արտասանել շուրջ 220 կմ, 6 մետր հեռավորությունից, երեխայի մեջքի կողմից, խոսքով չհաղորդակցվող և շարժունակության դժվարություններ ունեցող երեխան միայն մատնաշում կամ հայացքով ցույց է տալիս համապատասխան նկարը):</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 2, 3</p>
		<p>3. (*) Կրկնի՛ր նախադասությունները (նախադասությունները կարդալ առանձին, խոսքով չհաղորդակցվող և շարժունակության դժվարություններ ունեցող երեխան մատնաշում է պահանջված նկարները կամ ցույց է տալիս հայացքով): Լուսինը լույս է տալիս: Գարնան առաջին ծաղիկը ձնծաղիկն է: Սեղանին դրված էր դանակ, պատառաքաղ, գդալ:</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 28</p>
		<p>4. (*) Լսի՛ր և նշի՛ր, թե որ հնչյունով է սկսվում և ավարտվում տվյալ բառը. Նուռ, կատու, անձրև, քարտեզ, ծաղիկ, նապաստակ (խոսքով չհաղորդակցվող և շարժունակության դժվարություններ ունեցող երեխային առաջարկել մատնաշել կամ հայացքով ցույց տալ բառի առաջին և վերջին տառերը):</p>	<p>Խթանիչ նյութ՝ փայտե գրատախտակ հայերեն տառերով</p>

<p>d161</p> <p>Ուշադրությունը պահպանելը</p> <p><i>(Համապատասխան ժամանակահատվածում կոնկրետ գործողություններին կամ առաջադրանքներին ուղղված ուշադրությունը մտադրված կերպով պահպանելը):</i></p>	<p>1. (**) Կարդալուն զուգահեռ երեխային ցույց տալ, որ աստղի մեջ պատկերված է շրջան, քառակուսու մեջ՝ խաչ, սրտիկի մեջ՝ երկու գծիկ, իսկ շրջանի մեջ՝ մեկ գծիկ: Ներքևում դասավորված պատկերների մեջ անհրաժեշտ է տեղադրել համապատասխան նշանները: Կատարի՛ր այդ աշխատանքը յուրաքանչյուր տողի համար (կիրառելի չէ խոսքով չհաղորդակցվող և շարժունակության դժվարություններ ունեցող երեխաների համար):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 5</p>
	<p>2. (*) Նկարում խճճված գծերից յուրաքանչյուրը վերջանում է ինչ-որ թվի վրա, օրինակ՝ 1-ը վերջանում է 5 թվի վրա: Տո՛ւյց տուր, թե որ թվերի վրա են վերջանում մնացած գծերը (շարժունակության դժվարություններ ունեցող երեխան կարող է հայացքով ցույց տալ):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 6</p>
	<p>3. ա) Ուշադի՛ր լսիր արտահայտությունները, որոնք կկարդամ: Մտապահիր, որպեսզի կրկնես: Ամռանը շոգ է: Երեխաները խաղում են: Ծառերի վրա մրգեր են աճում: Տղան օգնում է տատիկին: Լճակում նավակ է լողում:</p> <p>բ) Դասավորի՛ր պատկերներն այնպես, ինչպես դրված են (5 երկրաչափական պատկերները ցուցադրել հերթականությամբ, ապա խառնել, խոսքով չհաղորդակցվող և շարժունակության դժվարություններ ունեցող երեխան կարող է հայացքով ցույց տալ պատկերների հաջորդականությունը):</p>	<p>Իրթանիչ նյութ՝ փայտե փազլ</p>
	<p>4. 6-7 տարեկաններ</p> <p>(*) Նայի՛ր նկարին, փորձի՛ր մտապահել պատկերները, որպեսզի հետո թվարկես (պահել նկարը 20 վայրկյան, ապա՝ շրջել: Խոսքով չհաղորդակցվող երեխաներին առաջարկել նկար 38-ի առանձին բաղադրիչների և հարցաշարում առկա 4 այլ առարկայական</p>	<p>Իրթանիչ նյութ՝ նկար 38</p>

		<p>նկարների խմբից ընտրել այն պատկերները, որոնք առկա էին ցուցադրված նկարում):</p> <p>8-10 տարեկաններ</p> <p>ա) Ուշադիր նայիր թվերին 20 վայրկյան, այնուհետև նույնությամբ տեղադրի՛ր աղյուսակի դատարկ վանդակներում (փակել թվերով տարբերակը):</p> <p>բ) Լսի՛ր բառերի շարքը և ամեն անգամ գրիչ բառը լսելիս արձագանքիր (գլխի շարժում, դիմախաղ, ձայն).</p> <p>Քանոն, մատիտ, գրիչ, ալբոմ, գիրք, գրիչ, քանոն, տետր, գրիչ, կավիճ, գլորուս, գրիչ:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 7</p>
		<p>5. (***) Կկարդամ 10 բառ, որից հետո ցանկացած հաջորդականությամբ կկրկնես այնքանը, որքանը հիշեցիր. անտառ, մուրճ, հաց, դուռ, ձի, սունկ, բեռ, ջուր, աթոռ, մեղր (կիրառելի չէ խոսքով չհաղորդակցվող երեխաների համար):</p>	
<p>d163</p> <p>Մտածելը</p> <p><i>(Մտքեր, գաղափարներ և պատկերներ ձևակերպելը՝ նպատակաուղղված կամ ոչ նպատակաուղղված կերպով, ինքնուրույն կամ այլոց հետ միասին, մտածելուն առնչվող գործողությունների հետ կապված՝ ինչպես օրինակ՝ միտք արտահայտելը, ձևանալը, բառախաղը, մտացածին բան ստեղծելը, թերեմ ապացուցելը, մտքերով խաղալը, մտազրոհը, մտասուզվելը (մեղիտաջիա), մտորելը, խորհրդածելը կամ խորհելը):</i></p>		<p>1. (*) Ո՞ր բառն է ավելորդ՝ բազմոց, պահարան, բաժակ, աթոռ (6 տարեկան, խոսքով չհաղորդակցվող և շարժունակության դժվարություններ ունեցող երեխաների համար կարող էք կիրառել նկար-քարտեր):</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 39</p>
		<p>2. (*) Գտի՛ր համապատասխան հատվածը (6-7 տարեկանների համար կիրառել Ռավենի պրոգրեսիվ մատրիցաների B12, B8 տարբերակները, իսկ 8-10 տարեկանների համար՝ C3, C1, C9, D4 տարբերակները: Շարժունակության դժվարություններ ունեցող երեխաները կատարում են առաջադրանքը հայացքով):</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 40</p>
		<p>3. 6-7 տարեկաններ</p> <p>(*) Դասավորի՛ր նկարները ճիշտ հաջորդականությամբ (շարժունակության դժվարություններ ունեցող երեխան կատարում է առաջադրանքը հայացքով):</p> <p>8-10 տարեկաններ</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 41</p>

		<p>(*) Ո՞ր տարբերակը կընտրես շնիկին բույն պատրաստելու համար (շարժունակության դժվարություններ ունեցող և խոսքով չհաղորդակցվող երեխան հայացքով ցույց է տալիս համապատասխան նկարները).</p> <p>ա) մեխ, պարան, մուրճ, փայտ բ) սղոց, մեխ, մուրճ, փայտ գ) փայտ, բահ, մեխ, մուրճ:</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 42</p>
<p>d166</p>	<p>Կարդալը</p> <p><i>(Գրավոր խոսքը (օրինակ, գրքեր, ցուցումներ, թերթեր՝ սովորական տեքստի կամ Բրայլի այբուբենով գրված) ընկալելուն և վերծանելուն առնչվող գործողություններ կատարելը՝ ընդհանուր գիտելիք կամ հատուկ տեղեկություն ստանալու համար՝ ներառյալ ստանդարտ տառերով կամ նիշերով կազմված գրավոր խոսքը, ինչպես նաև յուրահատուկ խորհրդանշաններով, օրինակ՝ պատկերանշաններով կազմված տեքստն ընկալելը և մեկնաբանելը):</i></p>	<p>1. 6-7 տարեկաններ</p> <p>(*) Թվարկի՛ր «Ն» հնչյունով սկսվող մի քանի բառ (6 տարեկան և խոսքով չհաղորդակցվող երեխաներին առաջարկել նապաստակի, նռան, նարնջի և հարցաշարում առկա ցանկացած 3 այլ առարկայական նկարների խմբից ընտրել այն առարկաների պատկերները, որոնք սկսվում են «Ն» հնչյունով):</p> <p>2. 6-7 տարեկաններ</p> <p>Հեգի՛ր հետևյալ բառերը՝ տուն, ներկ, գազար, բազմոց, պահարան, եղանակ:</p> <p>3. 6-7 տարեկաններ</p> <p>(*) Ամբողջացրո՛ւ հետևյալ տառերը՝ ձ-ու-կ, կ-ա-տ-ու, ն-ա-պ-ա-ս-տ-ա-կ, լ-ու-ս-ա-ց-ու-յ-ց (խոսքով չհաղորդակցվող և շարժունակության դժվարություններ ունեցող երեխան քարտերից հայացքով ցույց է տալիս համապատասխան բառիմաստը պարունակող նկարը):</p> <p>4. 6-7 տարեկաններ</p> <p>(*) Կարդա՛ հանձնարարված նյութը (կիրառելի չէ առաջին դասարանի նախաայբբենական շրջանում սովորող երեխաների համար, այբբենական շրջանում երեխային առաջարկել բառեր իր անցած տառերով: Շարժունակության դժվարություններ ունեցող և խոսքով չհաղորդակցվող երեխաներին առաջարկել մտքում կարդալ նյութը և մատնանշել, հայացքով ցույց տալ նյութին վերաբերող նկարները: Առաջարկել տեքստի բովանդակությանը համապատասխանող և դրան հակասող նկարներ, որտեղից երեխան պետք է ընտրություն կատարի):</p> <p>5. 6-7 տարեկաններ</p>	<p>Խթանիչ նյութ՝ նկար 2, 8, 32</p> <p>Խթանիչ նյութ՝ նկար 3, 2, 33, 36,</p> <p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 8, Խթանիչ նյութ՝ 41, 49, 28</p>

		<p>(*) Պատասխանի՛ր տեքստի կամ բառակապակցությունների, պարզ համառոտ նախադասությունների վերաբերյալ 2 հարցի՝ հարցադրումներն ուղղելով նույն ծածկագրի 4-րդ առաջադրանքին համապատասխան (կիրառելի չէ առաջին դասարանի նախաայբբենական շրջանում սովորող երեխաների համար, խոսքով չհաղորդակցվող և շարժունակության դժվարություններ ունեցող երեխաների դեպքում միավորը սահմանել՝ հաշվի առնելով տվյալ ծածկագրի առաջադրանք 4-ի արդյունքները):</p>	
		<p>6. 8-10 տարեկաններ Տրված բառերից ստացիր 3 նոր բառ՝ մեկական տառ փոխելով, օրինակ՝ պատ-պար):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 9</p>
		<p>7. 8-10 տարեկաններ (*) Կարդա՛ հանձնարարված նյութը (խոսքով չհաղորդակցվող և շարժունակության դժվարություններ ունեցող երեխաների դեպքում առաջարկել կարդացածը ներկայացնել տեքստի բովանդակությանը համապատասխանող և դրան հակասող նկարների միջոցով, որտեղից երեխան պետք է ընտրություն կատարի կամ գրելու տարբերակով):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 10, խթանիչ նյութ՝ նկար 43</p>
		<p>8. 8-10 տարեկաններ (*) Պատասխանի՛ր տեքստի վերաբերյալ հարցերին (երեխային ուղղելի 3-4 հարց, խոսքով չհաղորդակցվող և շարժունակության դժվարություններ ունեցող երեխաների դեպքում միավորը սահմանել՝ հաշվի առնելով տվյալ ծածկագրի առաջադրանք 7-ի արդյունքները):</p>	
		<p>9. 8-10 տարեկաններ Տեղադրի՛ր տրված ածականները համապատասխան նախադասություններում:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 11</p>
<p>d170</p>	<p>Գրելը <i>(Նիշեր կամ փառեր գրելը, պատկերելը կամ վերարտադրելը փեղեկագրություն հաղորդելու համար, ինչպես օրինակ՝ իրադարձություններ կամ մտքեր գրի առնելը կամ նամակ կազմելը, գրառումներ, նշումներ</i></p>	<p>1. 6-7 տարեկաններ Միացրո՛ւ տրված կետերը մեկ գծով առանց ընդհատելու:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 12</p>
		<p>2. 6-7 տարեկաններ (*) Արտագրի՛ր տրված նյութը (6 տարեկան երեխաները կարող են գրել մասնիկներ ըստ օրինակի, շարժունակության դժվարություններ ունեցող երեխային ըստ անհրաժեշտության առաջարկել համակարգիչ):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 13</p>

	<p><i>և գրավոր հանձնարարություն կատարելը, տպելը):</i></p>	<p>3. 6-7 տարեկաններ (*) Գրի՛ր բառեր, բառակապակցություններ, պարզ համառոտ նախադասություններ (թելադրել բառեր, բառակապակցություններ, պարզ համառոտ նախադասություններ, որոնք կազմված են երեխային արդեն ծանոթ տառերով, շարժունակության դժվարություններ ունեցող երեխային ըստ անհրաժեշտության առաջարկել համակարգիչ):</p> <p>4. 8-10 տարեկաններ (*) Կազմի՛ր բառեր և գրի՛ր դրանք առանձին տեղում (շարժունակության դժվարություններ ունեցող երեխային ըստ անհրաժեշտության առաջարկել համակարգիչ):</p> <p>5. 8-10 տարեկաններ (*) Կազմի՛ր նախադասություն քո կազմած բառերով (շարժունակության դժվարություններ ունեցող երեխային ըստ անհրաժեշտության առաջարկել համակարգիչ):</p> <p>6. 8-10 տարեկաններ (*) Գրի՛ր թելադրություն: Պապս ամեն օր աշխատում էր իր այգում: Տարիներ առաջ նա ընտրեց քարքարոտ այդ հողակտորը: Մաքրեց այն, ծառեր տնկեց ու մշակեց: Աշնանն այգու բազմագույն պտուղները պսպղում էին արևի ճառագայթների տակ (շարժունակության դժվարություններ ունեցող երեխային ըստ անհրաժեշտության առաջարկել համակարգիչ):</p> <p>7. 8-10 տարեկաններ (*) Գրի՛ր նամակ ում կցանկանաս (շարժունակության դժվարություններ ունեցող երեխային ըստ անհրաժեշտության առաջարկել համակարգիչ):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 14</p> <p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 15</p> <p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 16</p> <p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 17</p>
<p>d172</p>	<p>Հաշվելը <i>(Հաշվարկներ կատարելը՝ բառերով արտահայտված խնդիրները լուծելու նպատակով մաթեմատիկական սկզբունքներ կիրառելու միջոցով կամ պարասխանները ստանալով կամ ցուցադրելով, ինչպես օրինակ երեք թվերի գումարը հաշվարկելը կամ մեկ թիվը մյուսով բաժանելու պարասխանը գտնելը):</i></p>	<p>1. 6-7 տարեկաններ (*) Թվերի շարքում լրացրո՛ւ այն թվերը, որոնք չկան (առաջադրանքը կատարել բանավոր, շարժունակության դժվարություններ ունեցող երեխան գրավոր կամ հայացքով ցույց է տալիս համապատասխան թիվը):</p> <p>2. 6-7 տարեկաններ (*) Ունենք շարքով դասավորված 9 մատիտ: Քանի՞ մատիտ կդառնա շարքում, եթե սկզբից և վերջից ավելացնենք մեկական մատիտ (խոսքով չհաղորդակցվող և շարժունակության դժվարություններ</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 18</p> <p>Խթանիչ նյութ՝ գունավոր մատիտներ</p>

		<p>ունեցող երեխան կարող է պատասխանել՝ հայացքը ուղղելով համապատասխան թվին):</p>	
		<p>3. 6-7 տարեկաններ (*) Բաժանի՛ր 6 մատիտը երկու հոգու այնպես, որ յուրաքանչյուրը ստանա հավասար քանակով մատիտներ (շարժունակության դժվարություններ ունեցող երեխան կարող է պատասխանել բանավոր):</p>	
		<p>4. 6 տարեկաններ (*) Համեմատի՛ր միանիշ թվերը և բանավոր նշի՛ր՝ որն է մեծ, որը՝ փոքր (անհրաժեշտության դեպքում թվաքարտերի փոխարեն կիրառել հաշվեճողիկներ, խոսքով չհաղորդակցվող և շարժունակության դժվարություններ ունեցող երեխան կարող է պատասխանել ժեստերի, հայացքի միջոցով):</p>	<p>Խթանիչ նյութ՝ փայտե գրատախտակ հայերեն տառերով</p>
		<p>5. 7 տարեկաններ (*) Համեմատի՛ր միանիշ թվերը (քարտեր) և աստղանիշի փոխարեն դի՛ր համապատասխան նշանը՝ <, >, =: Անհրաժեշտության դեպքում թվաքարտերի փոխարեն կիրառել հաշվեճողիկներ, խոսքով չհաղորդակցվող և շարժունակության դժվարություններ ունեցող երեխան կարող է պատասխանել ժեստերի, հայացքի միջոցով):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 19</p>
		<p>6. 6-7 տարեկաններ (*) Կատարի՛ր տրված առաջադրանքները (անհրաժեշտության դեպքում կիրառել հաշվեճողիկներ, շարժունակության դժվարություններ ունեցող երեխան պատասխանում է բանավոր կամ թվաքարտերի միջոցով):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 20</p>
		<p>7. 8-10 տարեկաններ (*) Լրացրո՛ւ աղյուսակը (երեխային մտածելու համար տալ 1 թույլ Ժամանակ: Եթե դժվարանում է, միջամտել: Շարժունակության դժվարություններ ունեցող երեխան պատասխանում է բանավոր կամ թվաքարտերի միջոցով):</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 21</p>
		<p>8. 8-10 տարեկաններ (*) Քանի՞ անգամ պետք է ծալել 8 սմ կողմեր ունեցող քառակուսի կտրված թուղթը, որպեսզի ստանանք 2 սմ կողմերով քառակուսի (երեխային մտածելու համար տրվում է 1 թույլ: Եթե դժվարանում է,</p>	

		միջամտում ենք: Շարժունակության դժվարություններ ունեցող երեխան պատասխանում է բանավոր):	
		9. 8-10 տարեկաններ Տեղադրի՛ր 8, 4, 0 թվերը յուրաքանչյուր տառի փոխարեն (երեխային մտածելու համար տրվում է մինչև 2 րոպե ժամանակ: Եթե դժվարանում է, միջամտում ենք):	Աշխատանքային տետր՝ առաջադրանք 22
		10. 8-10 տարեկաններ (*) Կատարի՛ր տրված առաջադրանքները (շարժունակության դժվարություններ ունեցող երեխան պատասխանում է բանավոր):	Աշխատանքային տետր՝ առաջադրանք 23
d2. Ընդհանուր առաջադրանքները և պահանջները			
d230	Առօրյա կյանքը կազմակերպելը <i>(Պարզ կամ բարդ և համակարգված գործողություններ իրականացնելը՝ առօրյա կյանքը կամ պարզականությունները պլանավորելու, կառավարելու և կատարելու համար, ինչպես օրինակ՝ օրվա ընթացքում ժամանակը պլանավորելը և առանձին գործողությունների համար ծրագրեր կազմելը՝ ներառյալ առօրյա կյանքը կառավարելը և առօրյա գործունեություն իրականացնելը, սեփական կենսագործունեության մակարդակը կառավարելը՝ բացառությամբ համալիր առաջադրանքներ կատարելու (d220)):</i>	<ol style="list-style-type: none"> Նշի՛ր գործողություններ, որոնք (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4)՝ <ul style="list-style-type: none"> կատարում ես օրվա ընթացքում առավել կարևոր են կարող ես հետաձգել: Կարողանո՞ւմ ես արդյոք հետաքրքիր պլանավորել և անցկացնել քո հանգստյան օրը (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4)՝ <ul style="list-style-type: none"> որոշելով կատարվելիք գործողությունների հերթականությունը, անհրաժեշտության դեպքում կատարելով փոփոխություններ: Կարողանո՞ւմ ես արդյոք (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4). <ul style="list-style-type: none"> տրված առաջադրանքը ժամանակին ավարտել չուշանալ ընկերների հետ հանդիպումից դպրոց հասնել մինչև դասերի սկսվելը: 	
d240	Սթրեսը և այլ տեսակի հոգեբանական լարվածությունը կառավարելը <i>(Պարզ կամ բարդ և համակարգված գործողություններ կատարելն այնպիսի հոգեբանական լարվածություն կառավարելու և վերահսկելու համար, որը պահանջվում է զգալի պարզականությունների, սթրեսային</i>	<ol style="list-style-type: none"> Արդյո՞ք կարողանում ես կառավարել հոյզերի արտահայտումը, երբ (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4)՝ <ul style="list-style-type: none"> չեն կատարվում քո ցանկությունները չես հասցնում ժամանակին կատարել կարևոր առաջադրանքը հայտնվում ես նոր միջավայրում նախապատրաստվում ես քննություններին 	

	<p><i>ու ճգնաժամային իրավիճակների և ուշադրությունը շեղելու հետ կապված առաջադրանքներ կատարելիս, ինչպես օրինակ՝ քննություններ հանձնելը, ծանրաբեռնված երթևեկության մեջ փոխադրամիջոց վարելը, հագնվելը, երբ ծնողները շտապեցնում են, առաջադրանքը որոշակի ժամկետում ավարտելը կամ երեխաների մեծ խմբի մասին հոգ տանելը՝ ներառյալ պարտականություններ կատարելը, սթրեսը և ճգնաժամը կառավարելը):</i></p>	<ul style="list-style-type: none"> • չես հասցնում ավարտին հասցնել գրավոր աշխատանքը • ստանում ես նկատողություն • ենթարկվում ես քննադատության: <p>2. Լարված իրավիճակներում չես դրսևորում նյարդային շարժումներ (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4).</p> <ul style="list-style-type: none"> • ծանոթ միջավայրում • անծանոթ միջավայրում: <p>3. (**) Նկարի՝ ր 100 շրջան 30 վայրկյանի ընթացքում (միավորը սահմանել դիտարկման արդյունքում):</p>	
d3. Հաղորդակցությունը			
<p>d330</p>	<p>Խոսելը</p> <p><i>(Բառացի և ենթադրվող իմաստ ունեցող՝ բանավոր հաղորդագրությունների մաս կազմող բառեր, բառակապակցություններ և առավել երկար պարբերություններ կազմելը և արտաբերելը, ինչպես օրինակ՝ բանավոր խոսքի միջոցով փաստ ներկայացնելը կամ պատմություն պատմելը):</i></p>	<p>1. Լսի՛ր և կրկնի՛ր հետևյալ բառերը՝ դաս, տաս, թաս, կար, գառ, քար, ծառ, սար, զառ, գայլ, ձուկ, ճառ, չար, ցուլ, ջուր, շուն, ժանգ, բաղ, պատ, փիղ, խաղ:</p> <p>2. Հետևե՛լ երեխայի խոսքին գնահատման ողջ ընթացքում:</p>	
<p>d350</p>	<p>Ջրույցը</p> <p><i>(Մտքերի և գաղափարների փոխանակումը սկսելը, շարունակելը և ավարտելը՝ բանավոր, գրավոր խոսքի, ժեստերի լեզվի կամ լեզվական այլ միջոցների օգնությամբ՝ ծանոթ կամ անծանոթ մեկ կամ մի քանի անձանց հետ՝ ֆորմալ կամ ոչ ֆորմալ իրավիճակներում՝ ներառյալ զրույցը սկսելը, շարունակելը և ավարտելը, մեկ կամ ավելի մարդկանց հետ զրուցելը):</i></p>	<p>1. Պատմի՛ր քո սիրելի տոնի մասին (ընթացքում երեխային տալ թեմայից բխող 3-4 հարց):</p> <p>2. Հետևել՝ ինչպես է երեխան սկսում, շարունակում և ավարտում զրույցը:</p>	
<p>d360</p>	<p>Հաղորդակցության սարքեր և մեթոդներ օգտագործելը</p>	<p>1. Կարողանո՞ւմ ես օգտվել հեռախոսից՝ խոսել և հաղորդագրություններ գրել, հաղորդակցության նպատակով կիրառել համակարգիչ, գաջեթ կամ որպես հաղորդակցման միջոց կիրառել ժեստեր:</p>	

	<p>(Հաղորդակցության նպատակով սարքեր, մեթոդներ և այլ միջոցներ օգտագործելը, ինչպես օրինակ՝ ընկերոջը հեռախոսով զանգահարելը՝ ներառյալ հեռահաղորդակցության սարքեր, տպագրական մեքենաներ և հաղորդակցության մեթոդներ օգտագործելը):</p>	<p>2. Կարողանո՞ւմ ես օգտվել հեռախոսի հավելվածներից (զանգ, տեսազանգ) ընկերոջդ կամ հարազատներիդ հետ հաղորդակցվելու նպատակով:</p>	
d4. Շարժունակությունը			
<p>d440</p>	<p>Դաստակի նուրբ շարժումներ կատարելը</p> <p>(Առարկաները բանեցնելուն առնչվող համակարգված գործողություններ կատարելը, առարկաները վերցնելը, բանեցնելը և բաց թողնելը ձեռքի, մատների կամ մեծ մատի օգնությամբ, ինչպես օրինակ՝ սեղանից մետաղադրամներ վերցնելը կամ բռնակը պտտեցնելը՝ ներառյալ վերցնելը, բռնելը, բանեցնելը և բաց թողնելը):</p>	<p>1. Բռնի՞ր առարկան երկու ձեռքով և դի՞ր սեղանին (հերթականությամբ առաջարկել փոքր, միջին և մեծ առարկաներ):</p> <p>2. Սեղանից վերցրո՞ւ մետաղադրամները (10, 20, 50, 100, 200 դրամանոցներ):</p> <p>3. Ուրվագծի՞ր տրված պատկերը մատիտով և կտրի՞ր մկրատով:</p> <p>4. 6-7 տարեկաններ Ներկի՞ր տրված պատկերը՝ փորձելով պահպանել եզրագծերը: 8-10 տարեկաններ Անցի՞ր ճանապարհով՝ առանց թուղթը շարժելու, գծերի սահմանները խախտելու և գրիչը թղթից կտրելու:</p>	<p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 25 Խթանիչ նյութ՝ մկրատ</p> <p>Աշխատանքային տետր՝ առաջադրանք 26</p>
<p>d445</p>	<p>Դաստակը և բազուկն օգտագործելը</p> <p>(Դաստակի և բազուկի օգնությամբ՝ առարկաները տեղաշարժելու կամ դրանք բանեցնելու համար պահանջվող համակարգված գործողություններ կատարելը, ինչպես օրինակ դռների բռնակները պտտեցնելը կամ որևէ առարկա նեղելը կամ բռնելը):</p>	<p>1. Բռնի՞ր գնդակը և նետի՞ր ինձ:</p> <p>2. Մեկնի՞ր ձեռքդ գրասեղանի լայնքով և վերցրո՞ւ առարկան (սեղանին դնել որևէ առարկա, օրինակ՝ գիրք կամ սրիչ):</p> <p>3. Ձգի՞ր պարանը դեպի քեզ (բռնել պարանի մի ծայրից, մյուսը տալ երեխային):</p> <p>4. Բացի՞ր գուաշի խցանները:</p>	<p>Խթանիչ նյութ՝ գնդակ</p> <p>Խթանիչ նյութ՝ պարան</p> <p>Խթանիչ նյութ՝ գուաշներ</p>
<p>d450</p>	<p>Քայլելը</p>	<p>1. Կարողանո՞ւմ ես քայլել տանը, դպրոցում:</p>	

	<p>(Որևէ մակերեսի երկայնքով ուրքով տեղաշարժվելը, այնպես որ մեկ ուրնաթաթը միշտ լինի գեպինին, ինչպես օրինակ՝ զբոսնելիս, դանդաղ քայլելիս, դեպի առաջ քայլելիս, հետ-հետ գնալիս կամ մի կողմ քայլելիս՝ ներառյալ ուրքով կարծ կամ երկար տարածություններ անցնելը, փարբեր մակերեսների վրա քայլելը, խոչընդոտները քայլելով շրջանցելը՝ բացառությամբ տեղափոխվելու (d420), վազելը/տեղաշարժվելու (d455)):</p>	<ol style="list-style-type: none"> 2. Կարողանո՞ւմ ես 1 կմ-ը գերազանցող տարածություն անցնել ոտքով, օրինակ՝ բաց տարածք կամ գյուղերի միջև ընկած տարածություն): 3. Կարողանո՞ւմ ես շրջանցել մայթեզրը կամ անցնել նրա վրայով: 4. Կարողանո՞ւմ ես քայլել խոտածածկ մակերեսի, ավազի, մանրախճի, սառույցի և ձյան վրայով: 5. Հետևե՛լ երեխայի քայլքին գնահատման ողջ ընթացքում: 	
<p>d455</p>	<p>Տեղաշարժվելը</p> <p>(Մարմինն ամբողջությամբ մեկ տեղից մյուսը տեղափոխելը քայլելուց բացի այլ եղանակով, ինչպես օրինակ ժայռ մագլցելը կամ փողոցում վազելը, ցատկապարանով ցատկելը, արագ վազելը, ցատկելը, գլուխկոնձի տալը կամ խոչընդոտները շրջանցելով վազելը՝ ներառյալ սողալը, մագլցելը, վազելը, մանրաքայլ վազելը, ցատկելը, լողալը, ճոճվելը, գլորվելը և ուրքերը քարշ տալը՝ բացառությամբ տեղափոխվելու (d420):, քայլելու (d450)):</p>	<ol style="list-style-type: none"> 1. Կարողանո՞ւմ է երեխան սողալով անցնել լաբիրինթոսի միջով: 2. Կարողանո՞ւմ ես բարձրանալ և իջնել աստիճաններով: 3. Կարողանո՞ւմ ես գլուխկոնձի տալ: 4. Կարողանո՞ւմ է երեխան կատարել այնպիսի խոշոր շարժողական ֆունկցիաներ, ինչպիսիք են վազելը, խոչընդոտները շրջանցելով վազելը և ցատկելը: 5. Հետևե՛լ երեխայի տեղաշարժմանը գնահատման ողջ ընթացքում: 	
<p>d460</p>	<p>Տարբեր վայրերում տեղաշարժվելը</p> <p>(Տարբեր վայրերում կամ իրավիճակներում քայլելը և տեղաշարժվելը, ինչպես օրինակ՝ տան սենյակների միջև, շենքի ներսում կամ քաղաքի փողոցում քայլելը՝ ներառյալ տանը տեղաշարժվելը, տանը սողալը և բարձրանալը, տնից բացի այլ շինություններում, տնից և այլ շինություններից դուրս գտնվող տարածքում քայլելը կամ տեղաշարժվելը):</p>	<ol style="list-style-type: none"> 1. Կարողանո՞ւմ է երեխան տեղաշարժվել սեփական տանը՝ անցնելով սենյակից սենյակ, հարկից հարկ: 2. Կարողանո՞ւմ է երեխան տեղաշարժվել դպրոցում հարկից հարկ, դասասենյակից ճաշարան, միջանցք, մարզասրահ և այլն: 3. Կարողանո՞ւմ է երեխան առանց տրանսպորտային միջոցից օգտվելու քայլել և տեղաշարժվել փոքր քաղաքի կամ գյուղի փողոցներում և ավելի երկար տարածություններում: 	

<p>d470</p>	<p>Փոխադրամիջոցից օգտվելը</p> <p><i>(Տրանսպորտից օգտվելը՝ որպես ուղևոր տեղաշարժվելու նպատակով, ինչպես օրինակ՝ ավտոմեքենայով, ավտոբուսով, ռիկշայով, էժան երթուղային տաքսիով, սայլակով կամ մանկասայլակով, կենդանիների օգնությամբ շարժման մեջ դրվող փոխադրամիջոցով, հանրային կամ մասնավոր տաքսիով, գնացքով, տրամվայով, մետրոյով, նավակով կամ օդային տրանսպորտով փոխադրվելը՝ ներառյալ մարդու մկանային ուժով շարժման մեջ դրվող տրանսպորտային միջոցից օգտվելը, մասնավոր կամ հանրային մեխանիկական տրանսպորտային միջոցից օգտվելը՝ բացառությամբ սարքավորումների օգնությամբ տեղաշարժվելու (d465), փոխադրամիջոց վարելու (d475)):</i></p>	<p>1. Կարողանո՞ւմ ես ինքնուրույն օգտվել հասարակական փոխադրամիջոցներից (ավտոբուս, երթուղային տաքսի, մետրո և այլն):</p>	
<p>d5. Ինքնասպասարկումը</p>			
<p>d530</p>	<p>Բնական կարիքները հոգալը</p> <p><i>(Արտաթորանքը (դաշտան, միզարձակում և կղազատում) հեռացնելու պահանջն զգալը, դրա հեռացումը պլանավորելն ու իրականացնելը և դրանից հետո մարմինը մաքրելը՝ ներառյալ միզարձակումը, կղազատումը և դաշտանային պարբերաշրջանին առնչվող խնամքը կարգավորելը՝ բացառությամբ լվացվելու (d510), մարմնի մասերը խնամելու (d520)):</i></p>	<p>1. Կարողանո՞ւմ ես ինքնուրույն օգտվել պետքարանից:</p> <p>2. Կարողանո՞ւմ ես ինքնուրույն հետևել անձնական հիգիենային:</p>	
<p>d540</p>	<p>Հագնվելը</p> <p><i>(Հագուստը և կոշիկները հագնելուն և հանելուն ուղղված համակարգված</i></p>	<p>1. Կարողանո՞ւմ ես ինքնուրույն հագնել և հանել հագուստի բոլոր տեսակները:</p>	

	<p>գործողություններ և առաջադրանքներ հերթականությամբ կատարելը և կլիմայական ու սոցիալական պայմաններին հետևելը, ինչպես օրինակ՝ շապիկներ, կիսաշրջազգեստներ, բլուզներ, վարտիքներ, ներքնազգեստ, սարիներ, կիմոնոներ, զուգագուլպաներ, գլխարկներ, ձեռնոցներ, վերարկուներ, կոշիկներ և գուլպաներ, երկարաճիպք կոշիկներ, հողաթափեր և տնային մաշիկներ հագնելը, հարմարեցնելը և հանելը՝ ներառյալ հագուստ և կոշիկներ ու գուլպաներ հագնելը և հանելը, համապատասխան հագուստ ընտրելը):</p>	<p>2. Կարողանում ես կոճկել և արձակել բոլոր տեսակի շղթաները, կոճակները և ճարմանդները:</p> <p>3. Կարողանում ես ինքնուրույն հագնել և հանել հողաթափերը, կոշիկները:</p> <p>4. Կարողանում ես ընտրել եղանակին համապատասխան հագուստ:</p>	
<p>d550</p>	<p>Ուտելը</p> <p>(Մնունդ ստանալու կարիքն զգալը և մատուցված սննդամթերքը ուտելուն ուղղված համակարգված առաջադրանքներ և գործողություններ կատարելը, այն բերանին մոտեցնելը և այն տվյալ մշակույթում ընդունելի եղանակով ուտելը, սննդամթերքը մասերի բաժանելը կամ կտրելը, շերտ և թիթեղամաններ բացելը, սեղանի սպասք օգտագործելը, արագ սնվելը, ճաշկերույթի կամ ճաշի մասնակցելը՝ բացառությամբ խմելու (d560)):</p>	<p>1. Կարողանում ես ինքնուրույն ուտել:</p> <p>2. Կարողանում ես ինքնուրույն կատարել կենցաղային աշխատանքներ՝ սեղան սպասադրել, ափսեսներ լվանալ:</p> <p>3. Կարողանում ես սննդամթերքը մասերի բաժանել կամ կտրատել, սպասքից օգտվել:</p>	
<p>d560</p>	<p>Խմելը</p> <p>(Խմելու կարիքն զգալը և ըմպելիքով տարան վերցնելը, այն բերանին մոտեցնելը և ըմպելիքը տվյալ մշակույթում ընդունելի եղանակով խմելը, խմելու համար նախատեսված հեղուկներ խառնելը, մերթ-մերթ խառնելը և լցնելը, շերտ և թիթեղամաններ բացելը, ձողիկով խմելը կամ հոսող ջուր խմելը, ինչպես օրինակ՝ ծորակից կամ աղբյուրից, կործք ուտելը: Բացառությամբ ուտելու (d550)):</p>	<p>1. Կարողանում ես խմել բաժակով կամ խմելու համար նախատեսված ձողիկով:</p> <p>2. Կարողանում ես ինքնուրույն ջուր խմել ցայտաղբյուրից:</p> <p>3. Կարողանում ես ինքնուրույն բացել ջրով լի տարան, լցնել ջուրը բաժակի մեջ և խմել:</p>	

d6. Կենցաղը

d7. Միջանձնային շփումը և հարաբերությունները

<p>d720</p>	<p>Բարդ միջանձնային փոխհարաբերություններ</p> <p><i>(Այլ մարդկանց հետ շփումը պահպանելը և կառավարելը՝ փվյալ իրավիճակում և հասարակության համար ընդունելի եղանակով, ինչպես օրինակ՝ հույզերը և մղումները զսպելու, լեզվական և ֆիզիկական ագրեսիան կառավարելու, սոցիալական շփման մեջ ինքնուրույն գործելու, ինչպես նաև հասարակական կանոններին և պայմանականություններին համապատասխան գործելու միջոցով՝ ներառյալ այլ անձանց հետ խաղալը, հարաբերություններ ձևավորելը և դադարեցնելը, շփման շրջանակում հարաբերությունները կարգավորելը, սոցիալական կանոններին համապատասխան շփվելը և սոցիալական տարածություն պահպանելը):</i></p>	<ol style="list-style-type: none"> 1. Կարողանո՞ւմ ես առանց կաշկանդվելու շփվել հասակակիցների հետ, օրինակ (գնահատման միավորներ՝ միշտ-0, հաճախ-1, երբեմն-2, հազվադեպ-3, երբեք-4)՝ <ul style="list-style-type: none"> • գնալ զբոսանքի • մասնակցել միջոցառումներին • արտահայտել սեփական կարծիքը • ներգրավվել խմբային խաղերում: 2. Կարողանո՞ւմ ես մերժել ընկերոջդ, ով դիմել է քեզ այնպիսի խնդրանքով, որը չես ցանկանում իրականացնել. <ul style="list-style-type: none"> 0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք 3. Երբ հյուր ես գնում, հեշտությամբ ես շփվում անձանոթ մարդկանց հետ. <ul style="list-style-type: none"> 0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք 4. Պատկերացրու մի իրավիճակ, երբ ընկերներիցդ մեկի հետ այլևս չես ցանկանում շփվել. կկարողանա՞ս հեշտությամբ դադարեցնել հարաբերություններն այնպես, որ դիմացինը չվիրավորվի. <ul style="list-style-type: none"> 0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք 	
--------------------	---	---	--

Ճ8. Կյանքի հիմնական բնագավառները

<p>Ճ820</p>	<p>Դպրոցական կրթությունը <i>(Դպրոց ընդունվելը, կրթություն ստանալը, ֆորմալ կրթությանը առնչվող բոլոր պարտականությունները կատարելը և ֆորմալ կրթության բոլոր առավելություններից օգտվելը, փարրական կամ միջնակարգ կրթական ծրագրի շրջանակներում ուսումնական նյութը, առարկաները և ուսումնական ծրագրի այլ պարտադիր բաղադրիչները սովորելը, այդ թվում՝ կանոնավոր կերպով դպրոց հաճախելը, այլ աշակերտների հետ համագործակցելը, ուսուցիչներից առաջադրանքներ ստանալը, հանձնարարված առաջադրանքների ու նախագծերի կատարումը կազմակերպելը, դրանք ուսումնասիրելը և կատարելը, և կրթության այլ փուլերին պատրաստվելը):</i></p>	<ol style="list-style-type: none"> 1. Կարողանո՞ւմ է երեխան համագործակցել համադասարանցիների, ուսուցիչների հետ: <ul style="list-style-type: none"> 0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք 2. Արդյո՞ք երեխայի կրթական (ակադեմիական) մակարդակը համապատասխանում է չափորոշչային պահանջներին: 3. Կարողանո՞ւմ է երեխան պատշաճ կերպով կատարել հանձնարարված առաջադրանքները: <ul style="list-style-type: none"> 0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք 4. Արդյո՞ք կանոնավոր կերպով հաճախում ես դասերին. ընտրի՛ր քեզ համապատասխանող տարբերակը. <ul style="list-style-type: none"> 0 հաճախում եմ միշտ 1 բացակայում եմ երբեմն 2 բացակայում եմ հաճախ 3 հաճախում եմ հազվադեպ 4 երբեք չեմ հաճախում: 5. Արդյո՞ք Ձեր երեխան մասնակցում է դպրոցում կազմակերպված միջոցառումներին մյուս աշակերտների հետ միասին: <ul style="list-style-type: none"> 0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք 	
--------------------	--	--	--


Ճ9. Համայնքային, սոցիալական և քաղաքացիական կյանքը

<p>d920</p>	<p>Հանգիստը և ժամանցը</p> <p><i>(Ցանկացած տեսակի խաղային, ժամանցային միջոցառումներին, օրինակ՝ ոչ պաշտոնական կամ կազմակերպված խաղերին և սպորտային միջոցառումներին, ֆիթնեսի, ռելաքսացիայի, զվարճանքի կամ զվարճության ծրագրերին մասնակցելը, պատկերասրահներ, թանգարաններ, կինոթատրոններ կամ թատրոններ այցելելը, արհեստով կամ սիրելի զբաղմունքով զբաղվելը, ժամանցային ընթերցանությամբ զբաղվելը, երաժշտական գործիքներ նվագելը, տեսարժան վայրեր այցելելը, զբոսաշրջությունը և ճանապարհորդությունը՝ ներառյալ խաղերը, սպորտը, արվեստը և մշակույթը, արհեստները, սիրելի զբաղմունքները և սոցիալական շփումը՝ բացառությամբ կենդանիները որպես փոխադրամիջոց օգտագործելու (d480), վարձավորվող և չվարձավորվող աշխատանքի (d850 և d855), խաղերի մեջ ներգրավվելու (d880), կրոնի և հոգևոր կյանքի (d930), քաղաքական կյանքի և քաղաքացիության (d950)):</i></p>	<p>Այցելում ես ընտանիքիդ անդամների հետ ժամանցային վայրեր, ինչպես օրինակ՝ զբոսայգի, սրճարան, կինոթատրոն, թատրոն, թանգարան, պատկերասրահ և այլն:</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p> <p>Մասնակցում ես դպրոցի կողմից կազմակերպվող արտադպրոցական և արտադասարանական միջոցառումներին, օրինակ՝ դպրոցի բակում կազմակերպվող տարբեր խաղային, սպորտային միջոցառումներին, էքսկուրսիաներին:</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p> <p>Մասնակցում ես ընկերներիդ հետ տարբեր վայրերում կազմակերպվող խաղերին, օրինակ՝ բակային խաղերին (ֆուտբոլ, պահմտոցի), քարտային և սեղանի խաղերին («Մոնոպոլիա», «Այլկերպիկ») և այլն:</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p> <p>Կարողանում ես զբաղվել քո նախասիրություններով և սիրելի զբաղմունքով, օրինակ՝ հաճախել որևէ խմբակ, երգել, ասմունքել, նկարել, նվագել որևէ երաժշտական գործիք և այլն:</p> <p>0 միշտ 1 հաճախ 2 երբեմն 3 հազվադեպ 4 երբեք</p>	
--------------------	---	--	--

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐ

d110

Առաջադրանք 1. Յո՛ւյց փուր նկարում պատկերված բոլոր քառանկյուններն ու եռանկյունները:



d133

Առաջադրանք 2. Սյունակներից ընտրի՛ր բառերն այնպես, որ ստացվի բառակապակցություն:

Սաղարթախիտ

Ձոր

Սուր

Աղջիկ

Համեստ

Մկրատ

Խոր

Մանուկ

Ժիր

Անտառ

d133

Առաջադրանք 3. Բառերը դասավորի՛ր այնպես, որ ստացվի շարահյուսորեն ճիշտ ձևակերպված նախադասություն:

պտուղները արևի պսպղում են բազմագույն այգու ճառագայթների աշնան տակ

d155


Առաջադրանք 4 (8-10 տարեկաններ). Լուծի՛ր վարժությունն՝ օգտվելով հաշվիչից:

$$(27 + 45) : 8 =$$

$$(12 + 8) \cdot (10 + 8) =$$


d161

Առաջադրանք 5. Համապատասխան նշանները տեղադրի՛ր պատկերների մեջ:



d161

Առաջադրանք 6. Յո՛ւյց տուր, թե որ թվերի վրա են վերջանում մնացած գծերը:



Առաջադրանք 7 (8-10 տարեկաններ). Ուշադի՛ր նայիր թվերին 20 վայրկյան, այնուհետև նույնությամբ տեղադրի՛ր արյուսակի դատարկ վանդակներում:

5	9	3
4	1	7
6	2	8

d166

Առաջադրանք 8. Կարդա՛ տրված բառերը, բառակապակցությունները, պարզ համառոտ նախադասությունները: Պատասխանի՛ր տեքստի կամ բառակապակցությունների, պարզ համառոտ նախադասությունների վերաբերյալ հարցերին:

Ամբողջ օրը անձրև էր գալիս: Արմենը չէր կարողանում ո՛չ հեծանիվ քշել, ո՛չ գնդակ խաղալ, ո՛չ էլ ընկերների հետ վազվզել:

- Ինչ անպետք անձրև է, - գայրացավ Արմենը:

-Անձրևը չի կարող անպետք լինել, - բացատրեց տատիկը: - Անձրևի շնորհիվ են մեծանում ծառ ու ծաղիկները: Առանց անձրևի ոչինչ չի կարող աճել և մեծանալ:

d166

Առաջադրանք 9. (8-10 տարեկաններ). *Տրված բառերից ստացի՛ր 3 նոր բառ՝ մեկական տառ փոխելով:*

Սեր, տուն, նուշ

d166

Առաջադրանք 10. (8-10 տարեկաններ). Կարդա՛ հանձնարարված փոքրիկ նյութը: Պատասխանի՛ր տեքստի վերաբերյալ հարցերին:

Ծովի գորտերը, խորհուրդ անելով, ասացին.

- Ինչո՞ւ ենք տոգած փորերով ու դեղնած մաշկով խեղդվում ջրում, դուրս գանք ցամաք ու ապրենք ուրիշների պես:

Ծերերից մեկն ասում է.

- Հայրս պատվեր է տվել ինձ, որ ծովի ապաստանը չթողնեմ, որովհետև բնությամբ երկչոտ ենք, գուցե դուրս գանք ու սարսափելով վերադառնանք և ցույց տանք մեր երկչոտությունը: Չլսեցին խորհուրդն ու դուրս ելան, բայց ոտնաձայն լսելով՝ փախան ու կրկին սուզվեցին ծովը:

d166

Առաջադրանք 11 (8-10 տարեկաններ). *Տեղադրի՛ր տրված ածականները համապատասխան նախադասություններում. խոնավ, նեղ, փարթամ, թավույր:*

_____ արահետը մեզ տարավ _____ անտառի խորքը: _____ ծառերից _____ հողի վրա կուտակվում էին կաղինն ու հաճարը:

d170

Առաջադրանք 12 (6-7 տարեկաններ). Միացրո՛ւ տրված կետերը մեկ գծով առանց ընդհատելու:



d170

Առաջադրանք 13, 14 (6-7 տարեկաններ). Արտագրի՛ր տրված նյութը: Գրի՛ր բառեր, բառակապակցություններ, պարզ համառոտ նախադասություններ:

d170

Առաջադրանք 15 (8-10 տարեկաններ). Կազմի՛ր բառեր և գրի՛ր դրանք առանձին տեղում: Կազմի՛ր նախադասություն քո կազմած բառերով:

Բ Ա Պ Ե Ս Է Մ Ու Ն Ի Գ Կ Ռ Ֆ Ղ Տ Ո Գ Շ Ր Լ Դ

d170

Առաջադրանք 16 (8-10 տարեկաններ). Գրի՛ր թելադրություն:

d170

Առաջադրանք 17 (8-10 տարեկաններ). Գրի՛ր նամակ ում կցանկանաս:

d172

Առաջադրանք 18 (6-7 տարեկաններ). Թվերի շարքում լրացրո՛ւ այն թվերը, որոնք չկան:

1 ___ 3 4 ___ 6 ___ ___ 9

d172

Առաջադրանք 19 (6-7 տարեկաններ). Համեմատիր թվերը (<, >, =):

$9 \square 5$

$3 \square 1$

$8 \square 4$

$3 \square 3$

$1 \square 4$

$2 \square 4$

$5 \square 5$

$6 \square 3$

$5 \square 9$

$8 \square 10$

d172

Առաջադրանք 20 (6-7 տարեկաններ). Կատարի՛ր տրված առաջադրանքները:

$7 + 2 =$

$9 - 7 =$

$3 + 6 =$

$5 + 4 =$

$6 - 3 =$

$5 - 2 =$

d172

Առաջադրանք 21 (8-10 տարեկաններ). Լրացրո՛ւ աղյուսակը:

2	4	6	8	10	12		
10	9	8	7	6	5		
3	3	4	4	5	5		
1	7	2	7	3	7		

d172

Առաջադրանք 22 (8-10 տարեկաններ). Լրացրո՛ւ աղյուսակը:

$$\begin{array}{r} \text{ԱԳԱ} \\ -\text{ԳԳԳ} \\ \hline \text{ԳԲԳ} \end{array} \quad (8, 4, 0)$$

d172

Առաջադրանք 23 (8-10 տարեկաններ). Կատարի՛ր տրված առաջադրանքները:

$28 : (64 - 57) + 929 =$

$27 + 27 : 9 + 670 =$

d310

Առաջադրանք 24. *Տրված նախադասության մեջ ավելացրու բառն ըստ իմաստի:*

(6-7 տարեկաններ)

Բադիկները ... են լճակում (լողալ/թռչել):

Երեխաները ... թռչկոտում և վազվզում էին լողափին (ուրախ/տխուր):

Ոզնին սուր ... ունի (փշեր/ականջներ):

(8-10 տարեկաններ)


Պայծառ արևը շողում է ... (նկուղ/երկնակամար):

Գարնանային ... քամին բերկրանքով լցրեց մարդկանց սրտերը (տաք/կարմիր):


d440

Առաջադրանք 25. *Ուրվագծի՛ր տրված պատկերը մադիտով և կտրի՛ր մկրատով:*

6-7տարեկաններ 25.1



8-10 տարեկաններ 25.2




d440

Առաջադրանք 26 (6-7տարեկաններ). *Ներկի՛ր տրված պատկերը՝ փորձելով պահպանել եզրագծերը:*



Առաջադրանք 26 (8-10 տարեկաններ). Անցի՛ր ճանապարհով՝ առանց թուղթը շարժելու, գծերի սահմանները խախտելու և գրիչը թղթից կտրելու:



ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ

ԽԹԱՆԻՉ ՆՅՈՒԹԵՐ

ՆԿԱՐ - ՔԱՐՏԵՐ


d115

Նկար 2




d115

Նկար 3





d130

Նկար 5




d132

Նկար 6





d133

Նկար 7




d133

Նկար 8



d163

Նկար 16



d760


Նկար 25

Նկար 25-ի առանձին բաղադրիչներ




d110

Նկար 26.1



Նկար 26.2



d110

Նկար 27




d115

Նկար 28



d130

Նկար 29




d132

Նկար 30



d132

Նկար 31



d133

Նկար 32



d135

Նկար 33




d135

Նկար 34



d135

Նկար 35



d137

Նկար 36



d137



















Նկար 37

Գեղեցիկ	Զինջ	Հնայիչ
Միագույն	Անշուք	Պղտոր
Գունագեղ	Ալկոր	Երփներանգ
Երիտասարդ	Տգեղ	Անգույն

d161

Նկար 38

Նկար 38-ի առանձին բաղադրիչներ













d163

Նկար 39



d163

Նկար 40




d163 Նկար 40.1

<p>Մարդուն մոտիկ ու մտերիմ՝ Կենդանի է հավատարիմ, Հսկում է նա փարախ ու բակ, Չի ընդունում ոչ մի կաշառք:</p>	<p>Այն ինչն է, ինչը՝ հոտն անուշ, Ինքը՝ կարմիր, կոթը՝ փուշ:</p>
--	---


d163

Նկար 41



d163

Նկար 42




d166

Նկար 43




d175

Նկար 44



d177

Նկար 45



d177

Նկար 46



d2503

Նկար 47



d310

Նկար 48






d315

Նկար 49



d315





Ակար 50



d325



Նկար 51

Նկար 51-ի առանձին
բաղադրիչներ



d325

Նկար 52

			
			
	Ն		Ն

d325

Նկար 53



<p>Ամբողջ օրը քուն չունի Լայն դաշտերում տուն չունի, Ծաղկից ծաղիկ է թռչում, Փեթակ ունի, բույն չունի:</p>	<p>Ծնվում է ու մեծանում, Հենց նույն օրն էլ՝ մահանում, Հետո նորից կյանք առած Պայծառ շորեր է հագնում:</p>
--	--

d335

Նկար 54.1




Նկար 54.2




d650

Նկար 55



















d660

Նկար 56



ԽԱՂԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ

<<	Անվանում	Նկարագիր	Նկար
1.	Փայտե փազլ	Փայտե հիմքի վրա հավաքվող փազլ՝ կազմված փայտե ուղղանկյուններից և քառակուսիներից:	
2.	Փայտե գրատախտակ հայերեն տառերով	Երկկողմ գրատախտակ՝ իր կավիճներով և գունանշիչով: Գունանշիչը նախատեսված է գրատախտակի սպիտակ, ողորկ երեսի համար: Տուփի մեջ ներառված են գունավոր երկրաչափական պատկերներ, թվեր, գործողությունների նշաններ, հայերեն տառեր:	
3.	Գտիր ստվերը	Խաղը ներառում է մրգերի գունավոր նկար-քարտեր և դրանց համապատասխան ստվերներ: Չափը՝ 26x17,5x3,5սմ	
4.	Ձայնագրիչ	Ձայնագրիչ Sony ICD-PX240 4GB	
5.	Դոմինո	Փայտե դոմինո կենդանիների պատկերներով:	
6.	Խաղ՝ «Ո՞վ եմ ես»	Սեղանի խաղ	
7.	Խաղ՝ Մոծակ	Մոծակ խաղը բաղկացած է միջատների պատկերներով 32 (8 տեսակի 4-ական) խաղաքարտերից: Խաղի նպատակն է տիրանալ մրցակիցների բոլոր խաղաքարտերին՝ «սատկացնելով» կապուկում «նենգորեն թաքնված» արնախում մոծակներին:	
8.	Պարան	Ռետինե ցատկապարան՝ պլաստմասե կամ փայտե բռնակներով, երկարությունը՝ 1.5 մետր:	

9.	Սպասքի պարագաներ (հավաքածու)	Նյութը՝ պլաստմաս	
10.	Գնդակ	Ֆուտբոլի գնդակ Պատրաստման նյութը՝ բնական կաուչուկ: Չափերը՝ 20x20x20 սմ	
11.	Հաշվիչ	Ապրանքանիշը՝ CITIZEN Մոդել՝ SDC 450N	
12.	Մկրատ	Երկարությունը՝ 19 սմ	
13.	Գունավոր մատիտներ	1 տուփ ԳՈՒՆԱՎՈՐ ՄԱՏԻՏ BRAUBERG, 12 ԳՈՒՅՆ	
14.	Քուղ	Հաստ գունավոր քուղ	
15.	Դիմակ նապաստակի	Թղթից կամ կտորից	
16.	Բրայլյան տրաֆարետ	Կազմված է մետաղի կամ ամուր պլաստիկի երկու թերթից, որոնց միջև հեշտությամբ տեղադրվում է թուղթը: Չափը՝ A6 չափ, 9 տող, յուրաքանչյուրում՝ 21 բջիջ:	
17.	Բրայլյան գրիչ	Բրայլյան համակարգով գրելու համար նախատեսված ասեղ:	

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Հարցաշարում ներառված յուրաքանչյուր առաջադրանք և որակիչ գնահատվում է 0-4 սանդղակով, որտեղ 0-ն համապատասխանում է «խնդիր չկա», 1-ը՝ «թեթև խնդիր», 2-ը՝ «միջին խնդիր», 3-ը՝ «ծանր խնդիր», իսկ 4-ը՝ «խորը խնդիր» աստիճաններին:

d1. Սովորելը և գիտելիքը կիրառելը

Այս բաժինը ներառում է զգայարանների նպատակային օգտագործումը, սովորելը, ձեռք բերած գիտելիքները կիրառելը, մտածելը, խնդիրներ լուծելը և որոշումներ կայացնելը:

Զգայարանների նպատակային օգտագործումը (d110-d129)

Դիտարկել, թե ինչպես է սովորողը նպատակային և ոչ նպատակային օգտագործում իր զգայարանները՝ դիտելը (նայելը), լսելը և այլն (համ, հոտ, շոշափելիք) (d110-d129):

0 միավոր - Սովորողը տեսողական, լսողական և այլ զգայարանների միջոցով լիովին ընկալում է արտաքին ազդակները և կարողանում է դրանք կիրառել նպատակաուղղված (մտադրված, կամային) կերպով (առաջադրանքների, գործողությունների կատարման 0–4% դեպքերում ունի սխալվելու հնարավորություն):

1 միավոր - Սովորողը տեսողական, լսողական և այլ զգայարանների միջոցով ազդակների ընկալման համար երբեմն ունենում է առաջադրանքները կամ հարցերը կրկնելու կարիք (առաջադրանքների, գործողությունների կատարման 5–24% դեպքերում ունի ուղղորդման կարիք):

2 միավոր - Սովորողը տեսողական, լսողական և այլ զգայարանների միջոցով ազդակների ընկալման համար ունենում է օժանդակող սարքերի, սարքավորումների կարիք (ակնոց, լսողական սարք) կամ արտաքին ազդակների ընկալման համար որոշակի աջակցության կարիք (առաջադրանքների, գործողությունների կատարման 25–49% դեպքերում ունի աջակցության կարիք):

3 միավոր - Սովորողը տեսողական, լսողական և այլ զգայարանների միջոցով ազդակների ընկալման համար մշտապես ունենում է ուղղորդման, օգնության կարիք (ֆիզիկական, խոսքային): Տեսողական, լսողական և այլ զգայարանների միջոցով առարկաները, գործողություններն ընկալելիս ունենում է դժվարություններ՝ առանց խոսքային հրահագնի չի նայում պահանջվող առարկային կամ առաջադրանքին, չի արձագանքում ծայնային ազդակներին, չի օգտագործում այլ զգայարանները շրջակա աշխարհը ճանաչելու համար: Հաճախ նկատվում են տեսողական, լսողական ընկալման խնդիրներ՝ առարկան ամբողջական չի ընկալում, չի տարբերակում

	<p>հեռու, մոտ, ծանոթ, անծանոթ ձայները (առաջադրանքների, գործողությունների կատարման 50–95% դեպքերում ունի աջակցության կարիք):</p> <p>4 միավոր - Սովորողը տեսողական, լսողական և այլ զգայարանների միջոցով չի կարողանում ընկալել շրջակա աշխարհը՝ մարդկանց, ծանոթ և անծանոթ առարկաները (ընդհանրապես չի տեսում), չի կարողանում լսել, ընկալել, վերլուծել տարբեր բնույթի ձայները (ընդհանրապես չի լսում), չի կարողանում այլ զգայարանների միջոցով ճանաչել շրջակա աշխարհը (առաջադրանքների, գործողությունների կատարման 96–100% դեպքերում ունի աջակցության կարիք):</p>
<p>Սովորելու հիմնական կարողությունը (d130-d159)</p>	
<p><i>Դիտարկել, թե ինչպես է սովորողը կիրառում իր սովորելու հիմնական կարողությունները՝ ընդօրինակելը, լեզու սովորելը, հասկացություններ սովորելը, կարդալ սովորելը, գրել սովորելը, հաշվել սովորելը, հմտություններ ձեռք բերելը և այլն (d130-d159):</i></p>	<p>0 միավոր – Սովորողը կարողանում է ինքնուրույն, առանց որևէ դժվարության կիրառել սովորելու հիմնական կարողությունները. յուրացնել հասկացությունները, ընդօրինակել գործողությունները, կրկնել խոսքը, հեգել և կապակցել բառերը, սովորել թվերը, կատարել պարզ թվաբանական և բառեր, խորհրդանիշներ գրելու հետ կապված գործողությունները (առաջադրանքների, գործողությունների կատարման 0–4% դեպքերում ունի սխալվելու հնարավորություն):</p> <p>1 միավոր - Սովորողը կարողանում է ինքնուրույն, սակայն փոքր-ինչ դժվարությամբ կամ ուղղորդմամբ (խոսքային հուշում, սխեմաներ, գործիքներ, ուսումնաօժանդակ նյութեր և այլն) կիրառել սովորելու հիմնական կարողությունները. սովորել, յուրացնել հասկացություններ, ընդօրինակել գործողությունները, հեգել և կապակցել բառերը, սովորել թվերը, կատարել պարզ թվաբանական և բառեր, խորհրդանիշներ գրելու հետ կապված գործողությունները (առաջադրանքների, գործողությունների կատարման 5–24% դեպքերում ունի ուղղորդման կարիք):</p> <p>2 միավոր – Սովորողն ունենում է դժվարություններ հիմնական կարողությունները կիրառելիս՝ գործողություններն ընդօրինակելիս, հասկացությունները սովորելիս, յուրացնելիս, բառերը հեգելիս և կապակցելիս, թվերը սովորելիս, պարզ թվաբանական և բառեր, խորհրդանիշներ գրելու հետ կապված գործողություններ կատարելիս, և առաջադրանքների պարզեցման ու անձի որոշակի աջակցության կարիք է առաջանում (առաջադրանքների, գործողությունների կատարման 25–49 % դեպքերում ունի աջակցության կարիք):</p> <p>3 միավոր - Սովորողը գործողություններն ընդօրինակելիս, հասկացությունները սովորելիս, բառերը հեգելիս և կապակցելիս, թվերը սովորելիս ունենում է զգալի դժվարություններ և առաջադրանքների պարզեցման և</p>

	<p>մշտական ուղղորդման, աջակցության կարիք՝ ֆիզիկական, խոսքային (առաջադրանքների, գործողությունների կատարման 50–95% դեպքերում ունի աջակցության կարիք):</p> <p>4 միավոր - Սովորողը չի կարողանում սովորել հասկացություններ, ընդօրինակել գործողությունները, հեգել և կապակցել բառերը, սովորել թվերը նույնիսկ ամբողջական աջակցության պարագայում (առաջադրանքների, գործողությունների կատարման 96–100% դեպքերում ունի աջակցության կարիք):</p>
<p>Գիտելիքը կիրառելը (d160-d179)</p>	
<p><i>Դիտարկել, թե ինչպես է սովորողը կիրառում իր գիտելիքները՝ ուշադրության կենտրոնացումը, մտածելու գործընթացը, կարդալը, գրելը, հաշվելը, խնդիրներ լուծելը, որոշումներ կայացնելը և այլն (d160-d179):</i></p>	<p>0 միավոր - Սովորողը կարողանում է ինքնուրույն, առանց դժվարության կենտրոնացնել և պահպանել ուշադրությունը պահանջվող գործողության և առաջադրանքի վրա, մտածել (համեմատել, հակադրել, դասակարգել, տրամաբանել, երևակայել և այլն), կարդալ և վերարտադրել կարդացածի իմաստը, գրել, կատարել մաթեմատիկական հաշվարկներ, գտնել խնդիրների իրավիճակային լուծումներ, կայացնել որոշումներ և մեկնաբանել այն (առաջադրանքների, գործողությունների կատարման 0–4% դեպքերում ունի սխալվելու հնարավորություն):</p> <p>1 միավոր - Սովորողը կարողանում է ինքնուրույն, սակայն փոքր-ինչ դժվարությամբ կամ ուղղորդմամբ (հուշում, սխեմաներ, գործիքներ, ուսումնասօժանդակ նյութեր և այլն) կենտրոնացնել և պահպանել ուշադրությունը պահանջվող գործողության և առաջադրանքի վրա, մտածել (համեմատել, հակադրել, դասակարգել, տրամաբանել, երևակայել և այլն), կարդալ և վերարտադրել կարդացածի իմաստը, գրել՝ պահպանելով սահմանված կանոնները, կատարել մաթեմատիկական հաշվարկներ, գտնել խնդիրների իրավիճակային լուծումներ, կայացնել որոշումներ և մեկնաբանել դրանք (առաջադրանքների, գործողությունների կատարման 5–24% դեպքերում ունի ուղղորդման կարիք):</p> <p>2 միավոր - Սովորողը պահանջվող գործողության և առաջադրանքի վրա ուշադրությունը կենտրոնացնելիս և պահպանելիս, մտածելիս (համեմատել, հակադրել, դասակարգել, տրամաբանել, երևակայել և այլն), գրելիս, կարդալիս և կարդացածի իմաստը վերարտադրելիս, մաթեմատիկական հաշվարկներ կատարելիս, խնդիրների իրավիճակային լուծումներ գտնելիս, որոշումներ կայացնելիս և մեկնաբանելիս ունենում է դժվարություններ, և կարիք է լինում առաջադրանքների պարզեցման ու անձի որոշակի աջակցության (առաջադրանքների, գործողությունների կատարման 25–49% դեպքերում ունի աջակցության կարիք):</p> <p>3 միավոր - Սովորողը պահանջվող գործողության և առաջադրանքի վրա ուշադրությունը կենտրոնացնելիս և պահպանելիս, մտածելիս (համեմատել, հակադրել, դասակարգել, տրամաբանել, երևակայել և այլն), գրելիս,</p>

կարդալիս և կարդացածի իմաստը վերարտադրելիս, մաթեմատիկական հաշվարկներ կատարելիս, խնդիրների իրավիճակային լուծումներ գտնելիս, որոշումներ կայացնելիս և մեկնաբանելիս ունենում է զգալի դժվարություններ և առաջադրանքների պարզեցման ու մշտական ուղղորդման, աջակցության կարիք (ֆիզիկական, խոսքային), (առաջադրանքների, գործողությունների կատարման 50–95% դեպքերում ունի աջակցության կարիք):

4 միավոր - Սովորողը չի կարողանում կենտրոնացնել և պահպանել ուշադրությունը պահանջվող գործողության և առաջադրանքի վրա, մտածել (համեմատել, հակադրել, դասակարգել, տրամաբանել, երևակայել և այլն), գրել, կարդալ և վերարտադրել կարդացածի իմաստը, կատարել մաթեմատիկական հաշվարկներ, գտնել խնդիրների իրավիճակային լուծումներ, կայացնել որոշումներ և մեկնաբանել դրանք նույնիսկ ամբողջական աջակցության պարագայում (առաջադրանքների, գործողությունների կատարման 96–100% դեպքերում ունի աջակցության կարիք):

ժ2. Ընդհանուր առաջադրանքները և պահանջները

Այս բաժինը ներառում է առանձին կամ համալիր առաջադրանքներ կատարելու, առօրյա կյանքը կազմակերպելու և սթրեսը կառավարելու հմտությունները:

Դիտարկել, թե ինչպես է սովորողը կարարում առանձին կամ համալիր առաջադրանքները, ինչպես է կազմակերպում և իրականացնում իր առօրյան, ինչպես է կառավարում իր վարքը և հույզերը սթրեսային իրավիճակներում:

0 միավոր – Սովորողը կարողանում է ինքնուրույն, առանց որևէ դժվարության նպատակաուղղված կերպով կատարել առանձին և համալիր առաջադրանքները, պլանավորել, կառավարել և իրականացնել իր առօրյա կյանքը, սթրեսային և ճգնաժամային իրավիճակներում հարմարվել և կառավարել սեփական վարքագիծն ու հույզերը (առաջադրանքների, գործողությունների կատարման 0–4% դեպքերում կարող են նկատվել դժվարություններ):

1 միավոր - Սովորողը կարողանում է ինքնուրույն, սակայն փոքր-ինչ դժվարությամբ կամ ուղղորդմամբ (խոսքային հուշում, սխեմաներ, գործիքներ, ուսումնասօժանդակ նյութեր և այլն) նպատակաուղղված կատարել առանձին և համալիր առաջադրանքները, պլանավորել, կառավարել և իրականացնել իր առօրյա կյանքը, կառավարել սեփական վարքագիծն ու հույզերը սթրեսային, ճգնաժամային իրավիճակներում (առաջադրանքների, գործողությունների կատարման 5–24% դեպքերում ունի ուղղորդման կարիք):

2 միավոր - Սովորողը հաճախ դժվարանում է նպատակաուղղված կերպով ինքնուրույն կատարել առանձին և համալիր առաջադրանքները կամ կատարել միայն պարզ առաջադրանքները, դժվարանում է պլանավորել,

կառավարել և իրականացնել իր առօրյա կյանքը կամ կարողանում է պահպանել ոչ բոլոր բաղադրիչները՝ պլանավորում է, բայց չի կարողանում իրագործել կամ հակառակը, գործողությունները կատարելիս կարիք է լինում առաջադրանքների պարզեցման (անձի ոչ մշտական աջակցություն, հարմարեցված պարագաներ): Դժվարանում է հարմարվել և կառավարել սեփական վարքագիծն ու հույզերը սթրեսային, ճգնաժամային իրավիճակներում, հաճախ ունենում է անձի որոշակի աջակցության կարիք (առաջադրանքների, գործողությունների կատարման 25–49% դեպքերում ունի աջակցության կարիք):

3 միավոր - Սովորողը նպատակաուղղված կերպով առանձին և համալիր առաջադրանքները կատարելիս, առօրյա կյանքը պլանավորելիս, կառավարելիս և իրականացնելիս, սթրեսային և ճգնաժամային իրավիճակներում հարմարվելիս և սեփական վարքագիծն ու հույզերը կառավարելիս ունենում է զգալի դժվարություններ, և առաջադրանքների պարզեցման, հարմարեցված պարագաների, անձի մշտական ուղղորդման, աջակցության կարիք կա (ֆիզիկական, խոսքային), (առաջադրանքների, գործողությունների կատարման 50–95% դեպքերում ունի աջակցության կարիք):

4 միավոր - Սովորողը չի կարողանում նպատակաուղղված կերպով կատարել առանձին և համալիր առաջադրանքները, պլանավորել, կառավարել և իրականացնել իր առօրյա կյանքը, ճգնաժամային և սթրեսային իրավիճակներում հարմարվել և կառավարել սեփական վարքագիծն ու հույզերը, նույնիսկ անձի կամ հարմարեցված պարագաների ամբողջական աջակցության պարագայում (առաջադրանքների, գործողությունների կատարման 96–100% դեպքերում ունի աջակցության կարիք):

Ճ3. Հաղորդակցությունը

Այս բաժինը ներառում է լեզվական միջոցների, նշանների և խորհրդանշանների միջոցով հաղորդակցվելու ընդհանուր և հատուկ հատկանիշները՝ ներառյալ հաղորդագրություններ ընկալելը և արտաբերելը, գրույց վարելը և հաղորդակցության սարքեր ու մեթոդներ օգտագործելը:

Խոսքի ընկալում (d310-d329)

Դիտարկել, թե ինչպես է սովորողը ընկալում գրավոր, բանավոր և ոչ խոսքային հաղորդագրությունների

0 միավոր – Սովորողն առանց որևէ դժվարության ընկալում է գրավոր և բանավոր պարզ և բարդ հրահանգները, ուղիղ և փոխաբերական իմաստ արտահայտող բառերը, արտահայտությունները և մտքերը, ինչպես նաև ժեստերի, խորհրդանիշների, նկարների ուղիղ և փոխաբերական իմաստները (դեմքի արտահայտություններ, մարմնի շարժումներ, ձայնային ազդակներ, սիմվոլներ), (առաջադրանքների,

*ուղիղ և փոխաբերական
իմաստները:*

գործողությունների կատարման 0–4% դեպքերում կարող են նկատվել դժվարություններ):

1 միավոր - Սովորողն ինքնուրույն, սակայն փոքր-ինչ դժվարությամբ կամ ուղղորդմամբ (խոսքային հուշում, հրահանգի կրկնում) ընկալում է գրավոր և բանավոր պարզ և բարդ հրահանգները, ուղիղ և փոխաբերական իմաստ արտահայտող բառերը, արտահայտությունները և մտքերը, ինչպես նաև ժեստերի, խորհրդանիշների, նկարների ուղիղ և փոխաբերական իմաստները (դեմքի արտահայտություններ, մարմնի շարժումներ, ձայնային ազդակներ, սիմվոլներ), (առաջադրանքների, գործողությունների կատարման 5–24% դեպքերում ունի ուղղորդման կարիք):

2 միավոր - Սովորողը հաճախ դժվարանում է ընկալել գրավոր և բանավոր պարզ և բարդ հրահանգները կամ ընկալում է պարզեցված, ոչ շատ արագ, հստակ, հասկանալի խոսքը, ուղիղ և փոխաբերական իմաստ արտահայտող պարզ բառերը, արտահայտությունները և մտքերը, ինչպես նաև սահմանափակ քանակությամբ ժեստերի, խորհրդանիշների, նկարների ուղիղ և փոխաբերական իմաստները: Ունի անձի ոչ մշտական աջակցության, հարմարեցված պարագաների, ուսումնասօժանդակ նյութերի, առաջադրանքների, հրահանգների պարզեցման կարիք (առաջադրանքների, գործողությունների կատարման 25–49% դեպքերում ունի աջակցության կարիք):

3 միավոր - Սովորողը գրավոր և բանավոր պարզ և բարդ հրահանգները, ուղիղ և փոխաբերական իմաստ արտահայտող բառերը, արտահայտությունները և մտքերը, ինչպես նաև ժեստերի, խորհրդանիշների, նկարների ուղիղ և փոխաբերական իմաստները (դեմքի արտահայտություններ, մարմնի շարժումներ, ձայնային ազդակներ, սիմվոլներ) ընկալելիս ունենում է զգալի դժվարություններ, և անհրաժեշտ է հրահանգների, խոսքի պարզեցում, խոսքին զուգահեռ այլընտրանքային ոչ խոսքային մեթոդների և միջոցների կիրառում, անձի մշտական ուղղորդում և աջակցություն (ֆիզիկական, խոսքային), (առաջադրանքների, գործողությունների կատարման 50–95% դեպքերում ունի աջակցության կարիք):

4 միավոր - Սովորողը չի կարողանում ընկալել գրավոր և բանավոր անգամ պարզ հրահանգները, ուղիղ և փոխաբերական իմաստ արտահայտող բառերը, ինչպես նաև ժեստերը, խորհրդանիշները, նկարները (դեմքի արտահայտություններ, մարմնի շարժումներ, ձայնային ազդակներ, սիմվոլներ), նույնիսկ անձի ամբողջական աջակցության կամ այլընտրանքային ոչ խոսքային մեթոդների ու միջոցների կիրառման պարագայում (առաջադրանքների, գործողությունների կատարման 96–100% դեպքերում ունի աջակցության կարիք):

Խոսքի արտաբերում (d330-d349)

Դիտարկել սովորողի գրավոր, բանավոր և ոչ խոսքային հաղորդագրություններ կազմելը և փոխանցելը՝ արտաբերման ունակություններ, պատմություններ պատմել, մտքերը գրավոր և ոչ խոսքային տարբերակով շարադրել:

0 միավոր – Սովորողն առանց որևէ դժվարության շարահյուսորեն ճիշտ կառուցված գրավոր և բանավոր խոսքի միջոցով կազմում և արտաբերում է իմաստ արտահայտող բառեր, արտահայտություններ, համառոտ և ընդարձակ նախադասություններ, ներկայացնում է պատմություններ, փաստեր, ինչպես նաև մտքեր փոխանցելու նպատակով կիրառում է ոչ խոսքային հաղորդակցման միջոցներ: Խոսքի արտաբերումը սահուն և հասկանալի է (առաջադրանքների, գործողությունների կատարման 0–4% դեպքերում կարող են նկատվել դժվարություններ):

1 միավոր - Սովորողն ինքնուրույն, սակայն փոքր-ինչ դժվարությամբ կամ ուղղորդմամբ գրավոր և բանավոր շարահյուսորեն ճիշտ կառուցված խոսքի միջոցով կազմում և արտաբերում է իմաստ արտահայտող բառեր, արտահայտություններ, համառոտ և ընդարձակ նախադասություններ, ներկայացնում է պատմություններ, փաստեր, ինչպես նաև մտքեր փոխանցելու նպատակով կիրառում է ոչ խոսքային հաղորդակցման միջոցներ: Խոսքը հասկանալի է, սակայն երբեմն կարող են նկատվել խոսքային դադարներ, ջղաձգումներ, ինչպես նաև մտքերի գրավոր կամ բանավոր արտահայտման ժամանակ կարող են նկատվել 1-3 հնչյունի կամ մեկ հնչյունախմբի արտաբերման դժվարություններ, փոխարինումներ կամ առանձին հնչյուններն արտաբերում է ճիշտ, սակայն գրավոր կամ բանավոր խոսքում կարիք ունի ամրապնդման (առաջադրանքների, գործողությունների կատարման 5–24% դեպքերում ունի ուղղորդման կարիք):

2 միավոր - Սովորողը հաճախ դժվարանում է գրավոր և բանավոր շարահյուսորեն ճիշտ կառուցված խոսքի միջոցով ներկայացնել իմաստ արտահայտող պատմություններ, փաստեր, կազմել և արտաբերել բարդ ընդարձակ նախադասություններ: Խոսքը դժվար հասկանալի է անձանոթների համար, նկատվում են հնչյունախմբերի բացակայություններ, աղավաղումներ, փոխարինումներ, վանկային տեղափոխություններ, ինչը կարող է արտացոլվել նաև գրավոր խոսքում: Նկատվում են խոսքի սահունության, տեմպի և ռիթմի խանգարումներ, խոսքային դադարներ, ջղաձգումներ: Սովորողի բառապաշարը սահմանափակ է, հաճախ հաղորդակցվում է պարզ նախադասություններով, նկատվում է ոչ ճիշտ կառուցված շարահյուսություն:

Ոչ խոսքային հաղորդակցման միջոցներով կարողանում է փոխանցել պարզ գործողություններ: Ունի անձի ոչ մշտական աջակցության, այլընտրանքային հաղորդակցման մեթոդների և միջոցների, ուսումնասովորական նյութերի կիրառման կարիք (առաջադրանքների, գործողությունների կատարման 25–49% դեպքերում ունի աջակցության կարիք):

3 միավոր - Սովորողն ունի մտքերը գրավոր, բանավոր կազմելու և բառերի, բառակապակցությունների, նախադասությունների միջոցով իմաստալից արտահայտելու զգալի դժվարություններ: Խոսքը դժվար հասկանալի է նույնիսկ ծանոթների համար, խոսքում առկա են հնչյունախմբերի բացակայություններ, աղավաղումներ, փոխարինումներ, վանկային տեղափոխություններ, հաղորդակցվում է մեկ-երկու բառով, շարահյուսորեն սխալ կառուցված, իմաստ չարտահայտող արտահայտություններով, պարզ համառոտ նախադասություններով: Նկատվում են խոսքի սահունության, տեմպի և ռիթմի խանգարումներ, խոսքային դադարներ, ջղաձգումներ: Գրավոր խոսքը գրեթե անհասկանալի է կամ ընդհանրապես բացակայում է: Ոչ խոսքային հաղորդակցման միջոցներով կարողանում է փոխանցել առօրյայում հաճախ կիրառվող մի քանի պարզ գործողություններ: Սովորողը մշտապես ունի անձի ուղղորդման և աջակցության (ֆիզիկական, խոսքային), այլընտրանքային հաղորդակցման մեթոդների, միջոցների և ուսումնասօժանդակ նյութերի կիրառման կարիք (առաջադրանքների, գործողությունների կատարման 50–95% դեպքերում ունի աջակցության կարիք):

4 միավոր - Սովորողը չի կարողանում նույնիսկ պարզ բառերի միջոցով մտքերը գրավոր կամ բանավոր արտահայտել, խոսքի արտաբերումը լիովին բացակայում է, կամ առկա են որոշ ձայնարկումներ: Չի կարողանում ոչ խոսքային հաղորդակցման միջոցներով փոխանցել որևէ տեղեկատվություն՝ նույնիսկ անձի ամբողջական աջակցության կամ այլընտրանքային ոչ խոսքային մեթոդների և միջոցների կիրառման պարագայում (առաջադրանքների, գործողությունների կատարման 96–100% դեպքերում ունի աջակցության կարիք):

Զրույցը և հաղորդակցության սարքերի ու մեթոդների օգտագործումը (d350-d369)

Դիտարկել, թե ինչպես է սովորողը բանավոր, գրավոր կամ հաղորդակցման այլընտրանքային տարբերակներով սկսում, շարունակում և ավարտում զրույցը սեփական կամ զրուցակցի

0 միավոր – Սովորողն առանց որևէ դժվարության իր նախաձեռնությամբ կամ ըստ պահանջի սկսում, շարունակում և ավարտում է զրույցը թեմայի շրջանակում, մասնակցում է քննարկումներին, արտահայտում սեփական տեսակետը, հաղորդակցման նպատակով կիրառում սարքեր, մեթոդներ կամ այլ միջոցներ՝ հեռախոս, համակարգիչ, գրասալիկ, ժեստ, գրավոր հաղորդակցում և այլն (առաջադրանքների, գործողությունների կատարման 0–4% դեպքերում կարող են նկատվել դժվարություններ):

1 միավոր - Սովորողն ինքնուրույն, սակայն որոշակի դժվարությամբ կամ ուղղորդմամբ նախաձեռնում կամ ըստ պահանջի սկսում, շարունակում և ավարտում է զրույցը թեմայի շրջանակում, ընդգրկվում է քննարկումներին, արտահայտում է սեփական տեսակետը (կարող է խոսել ուշացումով կամ ուղղորդող հուշումից հետո),

նախաձեռնությամբ, ինչպես է մտքերը և գաղափարներ փոխանակում, մասնակցում քննարկումներին, օգտագործում սարքեր, մեթոդներ և այլ միջոցներ հաղորդակցության նպատակով:

հաղորդակցման նպատակով կիրառում է սարքեր, մեթոդներ կամ այլ միջոցներ՝ հեռախոս, համակարգիչ, գրասալիկ, ժեստ, գրավոր հաղորդակցում և այլն (առաջադրանքների, գործողությունների կատարման 5–24% դեպքերում ունի ուղղորդման կարիք):

2 միավոր - Սովորողը հաճախ դժվարանում է իր նախաձեռնությամբ կամ ըստ պահանջի թեմայի շրջանակում սկսել, շարունակել և ավարտել զրույցը կամ կարողանում է պահպանել ոչ բոլոր բաղադրիչները՝ սկսում է, բայց դժվարանում է պահպանել զրույցի ընթացքը կամ հակառակը, խոսքը կառուցում է ոչ ճիշտ շարահյուսությամբ, բառապաշարն աղքատիկ է: Ընդգրկվում է քննարկումներին, արտահայտում է սեփական տեսակետը ուղղորդող հարցադրումների, ուսումնասովանդակ նյութերի կիրառման պարագայում, հաղորդակցման նպատակով կիրառում է սարքեր, մեթոդներ կամ այլ միջոցներ՝ հեռախոս, համակարգիչ, գրասալիկ, ժեստ, գրավոր հաղորդակցում՝ անձի ոչ մշտական աջակցությամբ (առաջադրանքների, գործողությունների կատարման 25–49% դեպքերում ունի աջակցության կարիք):

3 միավոր - Սովորողն ունի բանավոր, գրավոր կամ հաղորդակցման այլընտրանքային տարբերակներով սեփական կամ այլ անձի նախաձեռնությամբ զրույց կամ երկխոսություն սկսելու, շարունակելու և ավարտելու, քննարկումներին մասնակցելու, հաղորդակցման սարքեր, մեթոդներ և այլ միջոցներ օգտագործելու զգալի դժվարություններ: Գրեթե չի կարողանում նախաձեռնել իրավիճակին համապատասխան հաղորդակցություն կամ ըստ պահանջի սկսում, բայց չի կարողանում թեմայի շրջանակում շարունակել կառուցել խոսքը: Քննարկումներին մասնակցում է՝ արտահայտելով պարզ մտքեր, բառեր, բառակապակցություններ, որոք հիմնականում կապակցված չեն, կամ խոսքում կարող են նկատվել իմաստ չարտահայտող, քննարկման թեմային չվերաբերող արտահայտություններ: Հաղորդակցման նպատակով կիրառում է միայն այն սարքերը, մեթոդները կամ միջոցները, որոնց տիրապետման հմտությունները երկարատև ուսուցանվել են՝ հեռախոս, համակարգիչ, գրասալիկ, ժեստ, գրավոր հաղորդակցում և այլն: Նկատվում են խոսքի սահունության, տեմպի և ռիթմի խանգարումներ, խոսքային դադարներ, ջղաձգումներ, խոսքը հիմնականում անհասկանալի է նույնիսկ ծանոթների համար: Գրավոր խոսքը գրեթե անհասկանալի է կամ ընդհանրապես բացակայում է: Ոչ խոսքային հաղորդակցման միջոցներով կարողանում է փոխանցել առօրյայում հաճախ կիրառվող մի քանի պարզ գործողություններ: Սովորողը մշտապես ունի անձի ուղղորդման և աջակցության (ֆիզիկական, խոսքային), այլընտրանքային հաղորդակցման մեթոդների, միջոցների և ուսումնասովանդակ նյութերի կիրառման կարիք (առաջադրանքների, գործողությունների կատարման 50–95% դեպքերում ունի աջակցության կարիք):

4 միավոր - Սովորողը չի կարողանում մասնակցել պարզ երկխոսություններին, քնարկումներին կամ ոչ խոսքային հաղորդակցման միջոցներով փոխանցել որևէ տեղեկատվություն՝ նույնիսկ անձի ամբողջական աջակցության կամ այլընտրանքային ոչ խոսքային մեթոդների և միջոցների կիրառման պարագայում (առաջադրանքների, գործողությունների կատարման 96–100% դեպքերում ունի աջակցության կարիք):

d4. Շարժունակությունը

Այս բաժինը ներառում է տեղաշարժվելը՝ մարմնի դիրքը կամ գտնվելու վայրը փոխելու կամ մեկ տեղից մյուսը տեղափոխվելու միջոցով, առարկաներ տանելը տեղաշարժելու կամ բանեցնելու միջոցով, քայլելը, վազելը կամ բարձրանալը, ինչպես նաև փոխադրման տարբեր ձևերից օգտվելը:

Մարմնի դիրքը փոխելը և պահպանելը (d410, d420), քայլելը և տեղաշարժվելը (d450-d469), փոխադրամիջոցով տեղաշարժվելը (d470)

Դիտարկել, թե ինչպես է սովորողը որևէ դիրք ընդունում կամ այդ դիրքը փոխում, ինչպես է մի տեղից մյուսը տեղափոխվում, ինչպես է քայլում կամ այլ եղանակով տեղափոխվում, ինչպես է տարբեր վայրերում փոխադրամիջոցներով տեղաշարժվում:

0 միավոր - Սովորողն ինքնուրույն, առանց դժվարության կարողանում է մարմնի որևէ դիրք ընդունել, դիրքը փոխել կանգնած, պառկած, նստած, կքանստած, ծնկի իջած վիճակներում, ինչպես նաև մեկ հարթությունից տեղափոխվել մեկ այլ հարթություն նստած, պառկած դիրքերից: Կարողանում է խոչընդոտները շրջանցելով քայլել, զբոսնել, ոտքով կարճ կամ երկար տարածություններ անցնել, ինչպես նաև տեղաշարժվել այլ եղանակով՝ սողալ, մագլցել, ցատկել, վազել, լողալ, գլորվել և այլն: Առանց որևէ դժվարության կարողանում է որպես ուղևոր տեղափոխվել տրանսպորտային միջոցներով (առաջադրանքների, գործողությունների կատարման 0–4% դեպքերում ունի ուղղորդման կարիք):

1 միավոր – Սովորողը փոքր-ինչ դժվարությամբ, բայց՝ ինքնուրույն, երբեմն՝ հենվելով կամ բռնվելով, կարողանում է ընդունել և փոխել մարմնի դիրքը կանգնած, պառկած, նստած, կքանստած, ծնկի իջած վիճակներում, ինչպես նաև մեկ հարթությունից մեկ այլ հարթություն տեղափոխվել նստած, պառկած դիրքերից: Կարողանում է խոչընդոտները շրջանցելով քայլել, զբոսնել, ոտքով կարճ կամ երկար տարածություններ անցնել, ինչպես նաև տեղաշարժվել այլ եղանակով՝ սողալ, մագլցել, ցատկել, վազել, լողալ, գլորվել և այլն, երբեմն ունենում է հավասարակշռության պահպանման դժվարություններ, կամ նրա մոտ նկատվում է դանդաղկոտություն, սակայն ինքնուրույն կարողանում է կառավարել և հաղթահարել դժվարությունները: Կարողանում է որպես ուղևոր տեղաշարժվել տրանսպորտային միջոցներով՝ աստիճանները բարձրանալ, նստել և իջնել (առաջադրանքների, գործողությունների կատարման 5–24% դեպքերում ունի ուղղորդման կարիք):

2 միավոր - Սովորողն ունենում է օժանդակող սարքերի, սարքավորումների կամ այլ անձի ոչ մշտական աջակցության կարիք մարմնի որոշակի դիրք ընդունելու, կանգնած, պառկած, նստած, կքանստած, ծնկի իջած վիճակներում մարմինը տեղափոխելու համար, ինչպես նաև մեկ հարթությունից մեկ այլ հարթություն տեղափոխվելիս: Քայլում և տեղաշարժվում է դանդաղ և որոշ օգնող հարմարանքների միջոցով, օրինակ՝ պրոթեզ, քայլակ, օրթեզ կամ այլ անձի աջակցությամբ, ինքնուրույն տեղաշարժվում է քայլակով միայն հարմարեցված միջավայրում՝ ընդարձակ, առանց խոչընդոտների տարածության մեջ: Ուռքով կարողանում է քայլել կարճ տարածություններ, շրջանցել ոչ բոլոր խոչընդոտները, ինչպես նաև տեղաշարժվել այլ եղանակով՝ սողալ, մագլցել, ցատկել, վազել, լողալ, գլորվել և այլն, սակայն հիմնականում ունենում է հավասարակշռության պահպանման դժվարություններ: Որպես ուղևոր՝ տրանսպորտային միջոցներում ունի հարմարեցված փոխադրամիջոցի կամ անձի օգնության կարիք (առաջադրանքների, գործողությունների կատարման 25–49% դեպքերում ունի աջակցության կարիք):

3 միավոր - Սովորողը փոխում է մարմնի դիրքը քայլակով կանգնած, պառկած, նստած վիճակներում, ինչպես նաև մի հարթությունից մեկ այլ հարթություն տեղափոխվում է մեծ դժվարությամբ (գլորվում է փորի վրա պառկած վիճակում, սողում է առաջ, հենվում է ձեռքերի կամ որևէ ամուր մակերսի վրա) և այլ անձի, օգնող, օժանդակող հարմարանքների մշտական աջակցությամբ, օրինակ՝ տեղաշարժում է իր մարմինը միայն որոշ օգնող հարմարանքների միջոցով՝ սայլակ, քայլակ, օրթեզ, պրոթեզ և այլն: Հաճախ հատակին նստած դիրքը և հավասարակշռությունը պահելու համար անհրաժեշտ է իրանի հենարան և որոշ օգնող հարմարանքներ: Ինքնուրույն տեղաշարժվում է սայլակով (էլեկտրական կամ ձեռքով կառավարվող) միայն հարմարեցված միջավայրում՝ հարթ, ընդարձակ, առանց խոչընդոտների տարածություն (առաջադրանքների, գործողությունների կատարման 50–95% դեպքերում ունի աջակցության կարիք):

4 միավոր – Սովորողն առհասարակ չի կարողանում փոխել մարմնի հիմնական դիրքը, միշտ գտնվում է պառկած, նստած (հենված) վիճակում, չի կարողանում տեղափոխվել (չի տեղաշարժում իր մարմինը նույնիսկ լիովին հարմարեցված միջավայրում): Նստած է սայլակի վրա, չի կառավարում մարմինը, չի պահում գլուխը. օգնող հարմարանքների միջոցով անհրաժեշտ է պահել երեխայի գլուխը և հավասարակշռությունը, նրան գրկած են տեղաշարժում կամ տեղաշարժվում է սայլակով՝ այլ անձի անմիջական աջակցությամբ, քանի որ կրում է կորսետ և նույնիսկ շրջվելու համար ֆիզիկական աջակցության կարիք ունի (առաջադրանքների, գործողությունների կատարման 95-100% դեպքերում ունի աջակցության կարիք):

Առարկաներ տանելը, տեղաշարժելը և բանեցնելը (d430-d449)

Դիտարկել, թե ինչպես է սովորողն աշխատում մանր և խոշոր առարկաներով, ինչպես է կառավարում ձեռքի և մատների նուրբ շարժումները, դաստակի և բազկի համակարգված շարժումները, ինչպես է օգտագործում երկու ձեռքերը: Մասնավորապես դիտարկել, թե ինչպես է բռնում, քաշում, ձգում, հրում, վերցնում, բարձրացնում, տեղափոխում առարկաները, ինչպես է բռնում կավիճը, մատիտը, գրիչը և կատարում համապատասխան շարժումներ, ինչպես է աշխատում մկրատով, ծեփում, կոճկում և արձակում մեծ ու մանր կոճակները, կատարում կամ արձակում կոշկաքուղը:

0 միավոր - Սովորողն ինքնուրույն, առանց դժվարության կարողանում է կառավարել դաստակի, ձեռքի և մատների նուրբ շարժումները, կարողանում է բռնել մեծ և փոքր առարկաներ, քաշել, հրել, բարձրացնել և տեղափոխել առարկաները, օգտագործել երկու ձեռքերը համակարգված գործողություններ կատարելիս, մկրատով կտրել, քուղելը կապել, օգտագործել սպասքի պարագաները, կատարել գրելու, ներկելու համակարգված շարժումներ (առաջադրանքների, գործողությունների կատարման 0–4% դեպքերում ունի ուղղորդման կարիք):

1 միավոր – Սովորողը փոքր-ինչ դժվարությամբ, բայց ինքնուրույն կարողանում է կառավարել դաստակի, բազկի, ձեռքի և մատների նուրբ շարժումները, կարողանում է բռնել մեծ և փոքր առարկաներ, քաշել, հրել, բարձրացնել և տեղափոխել առարկաները, օգտագործել երկու ձեռքերը՝ կատարելով համակարգված գործողություններ, սակայն ունենում է որոշ սահմանափակումներ մանր, ծանր և փխրուն առարկաներով գործողություններ կատարելիս, ինչպես նաև նվազում է գործողության կատարման որակը (ճկունություն) և/կամ արագությունը, որի պատճառը կարող է լինել ձեռքերի, մատների լարվածությունը, թուլությունը կամ դողը: Գործողությունների սահմանափակումները չեն խոչընդոտում սովորողի ինքնուրույնությանը առօրյայում (առաջադրանքների, գործողությունների կատարման 5–24% դեպքերում ունի ուղղորդման կարիք):

2 միավոր - Սովորողը դժվարությամբ է կառավարում դաստակի, ձեռքի և մատների նուրբ շարժումները, կարողանում է հրել, հարվածել՝ ավելի շատ ուժ գործադրելով, բարձրացնել և տեղաշարժել խոշոր առարկաները՝ օգտագործելով երկու ձեռքերը միասին, որը պայմանավորված է ձեռքերի, մատների զգալի լարվածությամբ, թուլությամբ կամ դողով, կարող է նկատվել աջ կամ ձախ ձեռքի գերակայություն: Ձեռքի մատների նուրբ շարժումները և համակարգումը տուժած են: Հաճախ մանր առարկաներով գործողություններ կատարելիս կարիք ունի հարմարեցված պարագաների (հաստ մատիտ, հարմարեցված գրիչ, մկրատ), ինչպես նաև մատիտը կամ գրիչը բռնում է միայն իրեն հարմար տարբերակով՝ ներկելիս դուրս է գալիս պատկերի ուրվագծի սահմաններից, ձեռքի և դաստակի կոորդինացված շարժումներով գծում/նկարում է՝ օգտագործելով թղթի ամբողջ մակերեսը: Գործողությունների սահմանափակումները հիմնականում չեն խոչընդոտում առօրյայում սովորողի ինքնուրույնությանը (առաջադրանքների, գործողությունների կատարման 25–49% դեպքերում ունի աջակցության կարիք):

3 միավոր – Սովորողի մոտ նկատվում է մանր առարկաները բռնելու, հրելու, հարվածելու, տեղափոխելու մեծ դժվարություններ՝ պայմանավորված դաստակի արտահայտված դողի, ձեռքերի մկանային լարվածության կամ թուլության հետ: Կարողանում է ձեռքերով հրել, շարժել միայն ավելի խոշոր առարկաները (գնդակ գլորել), բռնել, բարձրացնել միայն իրեն հարմարեցված իրերը, երկու ձեռքերն օգտագործել խոշոր առարկան բռնած պահելու համար: Չի կարողանում ինքնուրույն բռնել մատիտը, գրիչը, անձի անմիջական աջակցության դեպքում (ձեռքը բռնած) մատիտը բռնում է ամբողջ ձեռքի ավոյով և կատարում գրելու կամ նկարելու անկանոն շարժումներ (խզբզում է): Լավագույն դեպքում կարողանում է կատարել պարզ գործողություններ ֆիզիկական աջակցությամբ, օրինակ՝ կոճակ սեղմել: Գործողությունների սահմանափակումները հիմնականում խոչընդոտում են սովորողի ինքնուրույնությանը առօրյայում, անհրաժեշտ է շարունակական ֆիզիկական աջակցություն, հարմարեցված դիրք, աջակցող սարքավորումներ և տեխնոլոգիաներ (առաջադրանքների, գործողությունների կատարման 50–95% դեպքերում ունի աջակցության կարիք):

4 միավոր – Սովորողն առհասարակ չի կարողանում կատարել դաստակի, ձեռքի և մատների նույն շարժումներ՝ բռնել մեծ և փոքր առարկաներ, քաշել, հրել, շարժել բարձրացնել, տեղափոխել: Դաստակի, ձեռքի և մատների շարժումները համակարգված չեն, կատարում է անորոշ շարժումներ: Չի կարողանում երկու ձեռքերով բռնել նույնիսկ ավելի խոշոր, հարմարեցված առարկաները, անհրաժեշտ է մշտական ֆիզիկական աջակցություն (առաջադրանքների, գործողությունների կատարման 95-100% դեպքերում ունի աջակցության կարիք):

d5. Ինքնասպասարկումը

Այս բաժինը ներառում է սեփական անձի խնամքը, լվացվելը և սրբվելը, մարմինը և մարմնի մասերը խնամելը, հագնվելը, ուտելը, խմելը և առողջությանը հետևելը (d510- d571):

Դիտարկել, թե ինչպես է սովորողը հետևում սեփական առողջությանը և կատարում ինքնասպասարկմանն ուղղված գործողությունները, ինչպես է սոցիալական նորմերին և եղանակին

0 միավոր - Տարիքին համապատասխան զարգացած են ինքնասպասարկման հմտությունները: Սովորողն ինքնուրույն, առանց որևէ դժվարության կարողանում է հոգալ բնական կարիքները, կատարել հանվելու, հագնելու, լվացվելու, ուտելու, խմելու հետ կապված բոլոր գործողությունները, ինչպես նաև հետևում է սեփական առողջությանը և անվտանգությանը (գործողությունների կատարման 0–4% դեպքերում ունի ուղղորդման կարիք):

1 միավոր – Սովորողը փոքր-ինչ դժվարությամբ, բայց ինքնուրույն կարողանում է հետևել սեփական առողջությանն ու անվտանգությանը, հոգալ բնական կարիքները և խնամել մարմնի մասերը (երբեմն հուշելու

համապատասխան հազուսր ընկերում:

կարիք է լինում), կատարել ինքնասպասարկմանն ուղղված գործողությունները. ինքնուրույն սնվում է, սակայն՝ անփույթ ու դանդաղ, հանվելու, հագնվելու, կոճակները կոճկելու, կոշիկների քուղերը կապելու համար պահանջվում է ավելի երկար ժամանակ ու ջանք գործադրել (առաջադրանքների, գործողությունների կատարման 5–24% դեպքերում ունի աջակցության կարիք):

2 միավոր - Սովորողը դժվարությամբ է կարողանում հետևել սեփական առողջությանն ու անվտանգությանը, հոգալ բնական կարիքները և խնամել մարմնի մասերը, կատարել ինքնասպասարկմանն ուղղված գործողությունները (հաճախ հուշման, ուղղորդման կարիք է լինում). կարողանում է լվացվել, հետևել սեփական հիգիենային և հոգալ բնական կարիքները մասնակի օգնությամբ կամ կատարում է դրանց հետ կապված պարզ գործողությունները, ինքնուրույն սնվում է, սակայն՝ անփույթ ու շատ դանդաղ, կարողանում է հանել և հագնել այնպիսի հագուստներ, որոնք չունեն ճարմանդներ, փոքր կոճակներ, կարողանում է կոճկել միայն մեծ կոճակները, կոշիկների քուղերը կապելիս պահանջվում է մեծահասակի օգնություն և ավելի երկար ժամանակ ու ջանք: Գործողությունների սահմանափակումները հիմնականում չեն խոչընդոտում սովորողի ինքնուրույնությանը առօրյայում (առաջադրանքների, գործողությունների կատարման 25–49% դեպքերում ունի աջակցության կարիք):

3 միավոր – Սովորողի մոտ նկատվում են արտահայտված դժվարություններ սեփական առողջության, անվտանգության, բնական կարիքները, ինչպես նաև մարմնի խնամքի մասին հոգալիս: Ինքնասպասարկմանն ուղղված գործողությունները կատարելիս հաճախ կարիք է լինում այլ անձի անմիջական աջակցության. երեխան մեկնում է ձեռքերը դեպի հոսող ջուրը, վերցնում է սրբիչը, սակայն լվացվելուն ուղղված գործողություններ չի կատարում, կրում է տակդիր, կարող է արտահայտել իր պահանջմունքը, բայց դրան ուղղված գործողությունները կատարելիս ունի մշտական ուղղորդման կարիք, սնվում է հիմնականում ձեռքերով, չի կարողանում ինքնուրույն և ճիշտ բռնել, կիրառել գդալը, բաժակը կամ բռնում է ձեռքի ամբողջ ավոյլ և կատարում չհամակարգված շարժումներ (ուտում և խմում է անփույթ կամ սնունդը բերանին չի հասցնում), օգտվում է սպասքից անձի անմիջական աջակցության դեպքում (ձեռքը բռնած): Հանում և հագնում է հագուստի միայն մի մասը և/կամ կատարում է օգնող գործողություններ: Լավագույն դեպքում կարողանում է կատարել պարզ, չհամակարգված գործողություններ ֆիզիկական աջակցությամբ, օրինակ՝ ոտքը դնել կոշիկի մեջ: Գործողությունների սահմանափակումները հիմնականում խոչընդոտում են սովորողի ինքնուրույնությանը առօրյայում, անհրաժեշտ են շարունակական ֆիզիկական աջակցություն, հարմարեցված պարագաներ,

աջակցող սարքավորումներ և տեխնոլոգիաներ (առաջադրանքների, գործողությունների կատարման 50–95% դեպքերում ունի աջակցության կարիք):

4 միավոր – Սովորողն առհասարակ չի կարողանում հոգալ բնական կարիքները, կատարել հանվելու, հագնելու, լվացվելու, ուտելու, խմելու հետ կապված բոլոր գործողությունները, ինչպես նաև հետևել սեփական առողջությանը և անվտանգությանը (առաջադրանքների, գործողությունների կատարման 95-100% դեպքերում ունի աջակցության կարիք):

d6. Կենցաղը

Այս բաժինը ներառում է կենցաղային և ամենօրյա գործողությունների ու առաջադրանքների կատարումը, այդ թվում՝ սննդամթերք, հագուստ և առաջին անհրաժեշտության այլ պարագաներ ձեռք բերելը, տունը մաքրելը, անձնական և կենցաղային իրերի մասին հոգ տանելը և այլ անձանց օգնելը (d620, d630, d640, d650, d660):

Դիտարկել, թե ինչպես է սովորողը փարիքին համապատասխան վարում առօրյա կենցաղային կյանքը՝ գնումներ կատարել, կերակուր պատրաստել, տնային գործեր կատարել, հոգ փանել կենցաղային իրերի և այլ անձանց մասին:

0 միավոր – Սովորողը կարողանում է ինքնուրույն, առանց որևէ դժվարության նպատակաուղղված կերպով ընտրել՝ գներն ու որակական հատկանիշները համեմատելով, գնել և տեղափոխել անհրաժեշտ կենցաղային իրեր, վճարումներ կատարել որոշակի ծառայությունների համար (կոմունալների վճարում), սեփական անձի կամ այլ անձանց համար պարզ կամ բաղադրյալ կերակուրների պատրաստումը պլանավորել, կազմակերպել, իրականացնել, մատուցել, նաև օգնել նշված գործողությունների կատարման ընթացքում կամ դրանց կատարմանն ուղղված ցուցումներ տալ, ինչպես նաև հետևել կացարանի մաքրությանը՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելով կենցաղային տեխնիկա, սարքավորումներ, ընդգրկվել տնային գործերի կատարման, հագուստի, սպասքի խնամքի ապահովման գործընթացներում (մաքրել, լվանալ, սրբել, չորացնել, աղբը թափել): Կարողանում է նաև խնամել, վերանորոգել կենցաղային իրերը, հոգ տանել ընտանի կենդանիների, բույսերի մասին, օգնել այլ անձանց ինքնասպասարկման, տեղաշարժման, հաղորդակցման գործընթացներում, ինչպես նաև մտահոգվել և հոգ տանել նրանց ինքնազգացողության, խնամքի մասին (առաջադրանքների, գործողությունների կատարման 0–4% դեպքերում կարող են նկատվել դժվարություններ):

1 միավոր – Սովորողը փոքր-ինչ դժվարությամբ, բայց ինքնուրույն կարողանում է ընտրել՝ գներն ու որակական հատկանիշները համեմատելով, գնել և տեղափոխել անհրաժեշտ կենցաղային իրեր, վճարումներ կատարել որոշակի ծառայությունների համար (կոմունալների վճարում), սեփական անձի կամ այլ անձանց համար պարզ կամ բաղադրյալ կերակուրների պատրաստումը պլանավորել, կազմակերպել, իրականացնել, մատուցել և/կամ

օգնել նշված գործողությունների կատարման ընթացքում, ինչպես նաև հետևել կացարանի մաքրությանը՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելով կենցաղային տեխնիկա, սարքավորումներ, ընդգրկվել տնային գործերի կատարման, հագուստի, սպասքի խնամքի ապահովման գործընթացներում (մաքրել, վանալ, սրբել, չորացնել, աղբը թափել): Կարողանում է նաև խնամել, վերանորոգել կենցաղային իրերը, հոգ տանել ընտանի կենդանիների, բույսերի մասին, օգնել այլ անձանց ինքնասպասարկման, տեղաշարժման, հաղորդակցման գործընթացներում, ինչպես նաև մտահոգվել և հոգ տանել նրանց ինքնազգացողության, խնամքի մասին: Վերոնշյալ գործողությունների կատարման ժամանակ սովորողն ունի հուշման, ուղղորդման կարիք՝ խոսք, ոչ խոսքային միջոցներ, նկարներ, սխեմաներ և այլն (առաջադրանքների, գործողությունների կատարման 5–24% դեպքերում ունի աջակցության կարիք):

2 միավոր – Սովորողը հիմնականում դժվարանում է նպատակաուղղված կերպով ինքնուրույն կատարել կենցաղային և ամենօրյա գործողությունները՝ ստանալով անձի հաճախակի աջակցություն (հաջորդական քայլերի ուղղորդում, հարմարեցված պարագաներ, հաճախակի խոսքային կամ մասնակի ֆիզիկական աջակցություն, ոչ խոսքային միջոցներով տրվող հուշումներ, նկարներ, սխեմաներ և այլն) կարողանում է ընտրել, գնել և տեղափոխել անհրաժեշտ կենցաղային իրեր, պատրաստել պարզ կերակուրներ և/կամ օգնել նշված գործողությունների կատարման ընթացքում, ինչպես նաև հետևել կացարանի մաքրությանը՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելով կենցաղային տեխնիկա, սարքավորումներ, ընդգրկվել տնային գործերի կատարման, հագուստի, սպասքի խնամքի ապահովման գործընթացներում (մաքրել, վանալ, սրբել, չորացնել, աղբը թափել): Կարողանում է նաև խնամել, վերանորոգել կենցաղային իրերը, հոգ տանել ընտանի կենդանիների, բույսերի մասին, օգնել այլ անձանց ինքնասպասարկման, տեղաշարժման, հաղորդակցման գործընթացներում (առաջադրանքների, գործողությունների կատարման 25–49% դեպքերում ունի աջակցության կարիք):

3 միավոր – Սովորողի մոտ նկատվում են արտահայտված դժվարություններ, ինչի արդյունքում պահանջվող գործողություններից որևէ բաղադրիչ իրականացնելու համար ունի այլ անձի կամ հարմարեցված պարագաների մշտական աջակցության կարիք: Կարողանում է ընտրել (ցույց տալ), գնել որոշ իրեն ծանոթ իրեր՝ ըստ տրված ցուցումների, մշտական աջակցությամբ տաքացնել, մատուցել պատրաստված կերակուրը և/կամ օգնել նշված գործողությունների կատարման ընթացքում, ինչպես նաև առանձին, պարզ գործողություններով հավաքել սեփական իրերը՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելով կենցաղային տեխնիկա, սարքավորումներ,

ընդգրկվել տնային գործերի կատարման գործընթացներում (մաքրել սեղանը, հատակը, հավաքել աղբը): Այլ անձի հետ համատեղ կարողանում է իրականացնել կենցաղային իրերի, ընտանի կենդանիների, բույսերի խնամքի հետ կապված որևէ պարզ գործողություն, օգնել այլ անձանց՝ կատարելով պարզ ցուցումները, օրինակ՝ բաժակը տալ, հագուստը բերել և այլն (առաջադրանքների, գործողությունների կատարման 50–95% դեպքերում ունի աջակցության կարիք):

4 միավոր – Սովորողն առհասարակ չի կարողանում իրականացնել կենցաղային և ամենօրյա նույնիսկ ամենապարզ գործողություններ, ինչի արդյունքում ունի այլ անձի ամբողջական աջակցության կարիք (առաջադրանքների, գործողությունների կատարման 95-100% դեպքերում ունի աջակցության կարիք):

ժ7. Միջանձնային շփումը և հարաբերությունները

Այս բաժինը ներառում է այլ անձանց հետ հիմնական և բարդ փոխհարաբերություններ ձևավորելը, հաստատելը և պահպանելը, ինչպես նաև շփման ընթացքում իրավիճակին համապատասխան վարքագիծն ու հույզերը կառավարելը և վերահսկելը հասարակության համար ընդունելի եղանակով:

Ընդհանուր միջանձնային փոխհարաբերություններ (ժ710, ժ720)

Դիտարկել, թե ինչպես է սովորողն այլ մարդկանց հետ փոխհարաբերություններում ցուցաբերում հարգանք, հոգատարություն և հանդուրժողականություն, ինչպես նաև շփում հաստատում և պահպանում՝ դրսևորելով իրավիճակին համապատասխան հույզեր ու վարքագիծ:

0 միավոր – Սովորողը հիմնական և բարդ միջանձնային փոխհարաբերություններ հաստատելիս, համապատասխան իրավիճակում հարաբերությունները պահպանելիս և հասարակության կողմից ընդունելի եղանակով հարաբերությունները կառավարելիս դժվարություններ չունի: Կարողանում է այլ անձանց զգացմունքներին արձագանքել իրավիճակին համապատասխան՝ դրսևորելով հարգանք և ջերմ հարաբերություններ, երախտագիտություն և հանդուրժողականություն, ինչպես նաև համարժեք արձագանքել քննադատությանը և ցուցաբերել քննադատական մտածողություն հարաբերություններում: Հասարակության համար ընդունելի եղանակով հույզերն ու վարքագիծն իրավիճակին համապատասխան դրսևորելիս դժվարություններ չեն նկատվում. կարողանում է այլ անձանց հետ կարճատև և երկարատև շփում հաստատել ու պահպանել, ինչպես նաև գիտակցել և պահպանել իր և նրանց միջև սոցիալական տարածությունը՝ մշակույթային նորմերին համապատասխան (առաջադրանքների, գործողությունների կատարման 0–4% դեպքերում կարող են նկատվել դժվարություններ):

1 միավոր – Սովորողն ինքնուրույն, սակայն փոքր-ինչ դժվարությամբ կամ ուղղորդմամբ կարողանում է հաստատել և պահպանել հիմնական և բարդ միջանձնային փոխհարաբերություններ: Կարողանում է այլ անձանց

զգացմունքներին արձագանքել իրավիճակին համապատասխան՝ դրսևորելով հարգանք և ջերմ հարաբերություններ, երախտագիտություն և հանդուրժողականություն, ինչպես նաև համարժեք արձագանքել քննադատությանը և ցուցաբերել քննադատական մտածողություն հարաբերություններում: Հասարակության համար ընդունելի եղանակով հույզերն ու վարքագիծն իրավիճակին համապատասխան դրսևորելիս, այլ անձանց հետ կարճատև և երկարատև շփում հաստատելիս ու պահպանելիս, ինչպես նաև իր և նրանց միջև սոցիալական տարածություն պահպանելիս երբեմն ունենում է ուղղորդման և/կամ վերահսկման անհրաժեշտություն (առաջադրանքների, գործողությունների կատարման 5–24% դեպքերում ունի ուղղորդման կարիք):

2 միավոր - Սովորողը հիմնական և բարդ միջանձնային փոխհարաբերություններ ձևավորելիս, պահպանելիս, հասարակության կողմից ընդունելի եղանակով հարաբերությունները կարգավորելիս, ինչպես նաև դրանք դադարեցնելիս հաճախ ունենում է դժվարություններ. կարող է դրսևորել անկանխատեսելի ու իրավիճակին անհամապատասխան վերաբերմունք, հիմնականում շփվում է իրեն ծանոթ անձանց հետ, կարողանում է հարաբերություններում ցուցաբերել հարգանք, ջերմություն, երախտագիտություն, սակայն դժվարանում է ընդունել կարծիքների անհամաձայնությունը և դրանց համարժեք արձագանքել: Դժվարանում է նաև հասարակության կողմից ընդունելի ձևով շփվել, պահպանել սոցիալական տարածություն: Հույզերն իրավիճակին համապատասխան դրսևորելիս, տվյալ իրավիճակում և հասարակության համար ընդունելի եղանակով վարքը կառավարելիս հաճախ ունենում է բազմակի ուղղորդումների, ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցության կարիք (առաջադրանքների, գործողությունների կատարման 25–49% դեպքերում ունի աջակցության կարիք):

3 միավոր - Սովորողն ունի զգալի դժվարություններ ծանոթ և անծանոթ անձանց հետ շփում հաստատելիս և պահպանելիս, դժվարանում է անզամ դրսևորել հարգանք և ջերմություն, երախտագիտություն: Սովորողը գրեթե միշտ չի կարողանում համարժեք արձագանքել իրեն կամ այլ անձանց ուղղված նկատողությանը, քննադատությանը, օրինակ՝ անտարբեր է կամ շատ բուռն է արձագանքում դրանց: Հիմնականում դժվարանում է դրսևորել իրավիճակին համապատասխան վարքագիծ և հույզեր, ինչպես նաև պահպանել սոցիալական տարածություն իր և այլ անձանց միջև: Սովորողն այլ անձանց հետ շփվելու ընթացքում համապատասխան վարքագիծ դրսևորելու համար մշտապես ունենում է այլ անձի ֆիզիկական, խոսքային, ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցության կարիք (առաջադրանքների, գործողությունների կատարման 50–95% դեպքերում ունի աջակցության կարիք):

	<p>4 միավոր - Սովորողը չի կարողանում հաստատել և պահպանել անգամ հիմնական միջանձնային փոխհարաբերություններ. չի շփվում ծանոթ անձանց հետ, չի կարողանում հույզերն ու վարքագիծն իրավիճակին համապատասխան դրսևորել նույնիսկ այլ անձի մշտական և ամբողջական աջակցության դեպքում (առաջադրանքների, գործողությունների կատարման 96–100% դեպքերում ունի աջակցության կարիք):</p>
<p>Կոնկրետ միջանձնային հարաբերություններ (d730, d740, 760)</p>	
<p><i>Դիտարկել սովորողի՝ ծանոթ և անծանոթ անձանց հետ ֆորմալ և ոչ ֆորմալ հարաբերություններում դրսևորվող շփման և հաղորդակցման առանձնահատկությունները:</i></p>	<p>0 միավոր - Սովորողը ծանոթ և անծանոթ անձանց հետ կոնկրետ նպատակով ժամանակավոր կամ մշտական ֆորմալ և ոչ ֆորմալ կապեր հաստատելիս և պահպանելիս չունի դժվարություններ, նախաձեռնող է, կարողանում է պահպանել հասարակական նորմերը: Սովորողն առանց դժվարության կարողանում է հաստատել և պահպանել ընտանեկան և ազգակցական հարբերություններ: Անհրաժեշտության դեպքում աջակցություն ստանալու և տրամադրելու նպատակով դիմում է ընտանիքի անդամներին, ազգականներին, ծանոթ և անծանոթ անձանց (առաջադրանքների, գործողությունների կատարման 0–4% դեպքերում կարող են նկատվել դժվարություններ):</p> <p>1 միավոր - Սովորողն ինքնուրույն, սակայն փոքր-ինչ դժվարությամբ, կարողանում է ծանոթ և անծանոթ անձանց հետ կոնկրետ նպատակով ժամանակավոր կամ մշտական ֆորմալ և ոչ ֆորմալ կապեր հաստատել, պահպանել, սակայն երբեմն այլ անձի խոսքային ուղղորդման կամ վերահսկման կարիք է լինում: Անհրաժեշտության դեպքում նվազագույն ուղղորդմամբ կարողանում է դիմել ընտանիքի անդամներին, ազգականներին, ծանոթ և անծանոթ անձանց՝ աջակցություն ստանալու և տրամադրելու նպատակով (առաջադրանքների, գործողությունների կատարման 5–24% դեպքերում ունի ուղղորդման կարիք):</p> <p>2 միավոր - Սովորողը ծանոթ և անծանոթ անձանց հետ կոնկրետ նպատակով ժամանակավոր կամ մշտական ֆորմալ և ոչ ֆորմալ կապեր հաստատելիս և պահպանելիս հաճախ ունենում է դժվարություններ. շփման մեջ նախաձեռնող չէ, որոշակի աջակցության՝ բազմակի խոսքային, մասնագիտական և ուսումնամեթոդական ուղղորդումների կարիք ունի: Անհրաժեշտության դեպքում դժվարությամբ է դիմում ընտանիքի անդամներին, ազգականներին, ծանոթ և անծանոթ անձանց աջակցություն ստանալու և տրամադրելու նպատակով (առաջադրանքների, գործողությունների կատարման 25–49% դեպքերում ունի աջակցության կարիք):</p> <p>3 միավոր - Սովորողը ծանոթ և անծանոթ անձանց հետ ժամանակավոր կամ մշտական ֆորմալ և ոչ ֆորմալ կապեր հաստատելիս և պահպանելիս ունենում է զգալի դժվարություններ՝ հիմնականում անտարբեր է, չի ցանկանում շփում հաստատել և հաղորդակցվել, անհրաժեշտ է այլ անձի մշտական ուղղորդում և</p>

մասնագիտական աջակցություն: Անգամ խիստ անհրաժեշտության դեպքում ինքնուրույն չի դիմում ընտանիքի անդամներին, ազգականներին, ծանոթ և անծանոթ անձանց կամ դիմում է միայն կոնկրետ անձանց՝ աջակցություն ստանալու և տրամադրելու նպատակով (առաջադրանքների, գործողությունների կատարման 50–95% դեպքերում ունի աջակցության կարիք):

4 միավոր - Սովորողը բոլորովին չի կարողանում ծանոթ և անծանոթ անձանց հետ ժամանակավոր կամ մշտական կապեր հաստատել և պահպանել անգամ այլ անձի ամբողջական աջակցության դեպքում (առաջադրանքների, գործողությունների կատարման 96–100% դեպքերում ունի աջակցության կարիք):

Ճ8. Կյանքի հիմնական բնագավառները
 Այս բաժինը ներառում է կրթության, խաղային գործունեության մեջ ներգրավվելը, ինչպես նաև տնտեսական գործարքներ կատարելը (ճ815, ճ820, ճ860, ճ880):

Դիտարկել, թե ինչպես է սովորողը ներգրավվում և մասնակցում խաղային և ուսումնական գործընթացներին, կատարում հանձնարարված առաջադրանքները, տնտեսական գործարքները, տնօրինում գումարը:

0 միավոր - Սովորողը առանց որևէ դժվարության կարողանում է ներգրավվել նախադպրոցական (տարիքին համապատասխան զարգացած են իմացական գիտելիքները և հմտությունները, ունի պատրաստվածություն դպրոց հաճախելու համար) և դպրոցական կրթության մեջ (հաշվառված է ուսումնական հաստատությունում և պատշաճ կերպով հաճախում է դպրոց, տարիքին համապատասխան ստանում է ակադեմիական գիտելիքներ), կատարել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությանն առնչվող պարտականությունները, առաջադրանքները, ներգրավվում է խմբային առաջադրանքներին և համագործակցում է այլ անձանց հետ: Կարողանում է տարիքին համապատասխան կատարել տնտեսական գործարքներ՝ կատարել գնումներ, վերահսկել դրամը: Մասնակցում է խաղային գործողություններին ինքնուրույն կամ այլ երեխաների հետ՝ նպատակաուղղված կերպով կիրառելով նյութերը, առարկաները, խաղալիքները (առաջադրանքների, գործողությունների կատարման 0–4% դեպքերում կարող են նկատվել դժվարություններ):

1 միավոր – Սովորողը փոքր-ինչ դժվարությամբ, բայց ինքնուրույն կարողանում է ներգրավվել նախադպրոցական (տարիքին համապատասխան զարգացած են տարրական իմացական գիտելիքները և հմտությունները, ունի պատրաստվածություն դպրոց հաճախելու համար) և դպրոցական կրթության մեջ (հաշվառված է ուսումնական հաստատությունում և հաճախում է դպրոց, տարիքին համապատասխան ստանում է ակադեմիական գիտելիքներ, սակայն որոշ առարկաների ծրագրի շրջանակներում ուսումնական նյութը յուրացնելիս կարիք է ունենում ուղղորդման կամ հավելյալ ժամանակի տրամադրման): Կարողանում է մեծահասակի վերահսկողությամբ, երբեմն խոսքային ուղղորդմամբ կատարել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությանն

առնչվող պարտականությունները, առաջադրանքները, ներգրավվել խմբային առաջադրանքներին և համագործակցել այլ անձանց հետ: Կարողանում է կատարել գնումներ, սակայն դրանք տնտեսելիս և նպատակային կերպով օգտագործելիս կարիք է ունենում վերահսկողության: Մասնակցում է խաղային գործողություններին ինքնուրույն կամ այլ երեխաների հետ՝ նպատակաուղղված կերպով կիրառելով նյութերը, առարկաները, խաղալիքները, երբեմն ունենալով ուղղորդման անհրաժեշտություն (առաջադրանքների, գործողությունների կատարման 5–24% դեպքերում կարող են նկատվել դժվարություններ):

2 միավոր – Սովորողը նախադպրոցական (տարիքին համապատասխան զարգացած չեն տարրական իմացական գիտելիքները և հմտությունները, չունի բավարար պատրաստվածություն դպրոց հաճախելու համար) և դպրոցական (հաշվառված է ուսումնական հաստատությունում և հաճախում է դպրոց, սակայն դժվարանում է ստանալ տարիքին համապատասխան ակադեմիական գիտելիքներ, առարկաների ծրագրի շրջանակներում ուսումնական նյութը դժվարանում է յուրացնել, կարիք է ունենում մասնագետի օգնության և հավելյալ ժամանակի տրամադրման) կրթության գործընթացներին ներգրավվելիս հաճախ ունենում է զգալի դժվարություններ: Հաճախ այլ անձի որոշակի օգնությամբ կարողանում է մասամբ կատարել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությանն առնչվող պարտականությունները, առաջադրանքները, ներգրավվել խմբային առաջադրանքների կատարման գործընթացում և համագործակցել այլ անձանց հետ: Կարողանում է կատարել գնումներ հստակ գումարի սահմաններում կամ օգտվելով նախապես կազմված գնումների ցանկից, դժվարանում է դրանք տնտեսելիս և հաճախ նաև նպատակային կերպով օգտագործելիս: Խաղային գործողություններին ինքնուրույն կամ այլ երեխաների հետ մասնակցելիս, նյութերը, առարկաները, խաղալիքները նպատակաուղղված կիրառելիս ունենում է որոշակի աջակցության կարիք (առաջադրանքների, գործողությունների կատարման 25–49% դեպքերում ունի աջակցության կարիք):

3 միավոր – Սովորողի մոտ նկատվում են արտահայտված դժվարություններ նախադպրոցական (տարիքին համապատասխան զարգացած չեն տարրական նվազագույն իմացական գիտելիքները և հմտությունները, չունի բավարար պատրաստվածություն դպրոց հաճախելու համար) և դպրոցական (հաշվառված է ուսումնական հաստատությունում, սակայն կարող են նկատվել ցածր հաճախելիություն կամ ներգրավվածություն դասապրոցեսներին, տարիքին համապատասխան դժվարանում է ստանալ ակադեմիական գիտելիքներ, դժվարությամբ է յուրացնում անգամ ուսումնական պարզ նյութը, հասկացությունները, մասնագետի մշտական աջակցության կարիք է ունենում) կրթության գործընթացներին ներգրավվելիս: Դժվարանում է կատարել

ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությանն առնչվող պարզ առաջադրանքները, գործողությունները, ներգրավվել խմբային առաջադրանքների կատարման գործընթացներին և համագործակցել այլ անձանց հետ: Դժվարանում է կատարել գնումներ անգամ հստակ գումարի սահմաններում, չի կարողանում դրամը նպատակային կերպով օգտագործել: Խաղային գործողություններին մասնակցում է այլ անձի մշտական ներգրավվածության դեպքում, նպատակաուղղված կերպով կիրառում է սահմանափակ քանակությամբ առարկաներ, խաղալիքներ: Վերոնշյալ գործողությունների կատարման և ներգրավման համար անհրաժեշտ է մշտական, ամբողջական աջակցություն, ոչ խոսքային միջոցներ, նկարներ, սխեմաներ և ուսումնամեթոդական այլ նյութերի տրամադրում (առաջադրանքների, գործողությունների կատարման 50–95% դեպքերում ունի աջակցության կարիք):

4 միավոր – Սովորողի մոտ նկատվում են զգալի դժվարություններ նախադարձական (առհասարակ չունի պատրաստվածություն դպրոց հաճախելու համար) և դպրոցական (ընդհանրապես չունի ներգրավվածություն դասապրոցեսին) կրթության գործընթացներին ներգրավվելիս: Չի կարողանում կատարել անգամ պարզ առաջադրանքները, գործողությունները, ներգրավվել խմբային առաջադրանքների կատարման ընթացքին և համագործակցել այլ անձանց հետ նույնիսկ այլ անձի ամբողջական միջամտությամբ: Չունի պատկերացում դրամի վերաբերյալ: Չի կարողանում ինքնուրույն զբաղվել որևէ խաղային գործունեությամբ կամ ներգրավվել խմբային խաղերին, ինչպես նաև նպատակաուղղված կերպով չի կիրառում առարկաներ, խաղալիքներ անգամ մշտական, ամբողջական աջակցության դեպքում (առաջադրանքների, գործողությունների կատարման 95-100% դեպքերում ունի աջակցության կարիք):

d9. Համայնքային, սոցիալական և քաղաքացիական կյանքը

Այս բաժնում ներկայացված են սովորողների ներգրավվածությունը համայնքային, սոցիալական և քաղաքացիական կյանքի բոլոր ոլորտներում և դրա համար պահանջվող հմտությունները (d910, d920):

Դիտարկել, թե ինչպես է սովորողը մասնակցություն ցուցաբերում համայնքային ֆորմալ և ոչ ֆորմալ միավորումներին, հասարակական կյանքին

0 միավոր - Սովորողը կարողանում է ինքնուրույն, առանց որևէ դժվարության ներգրավվել համայնքի, սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում, հասարակական ակումբներում կամ էթնիկական տարբեր խմբերում, ծիսակատարություններին, արարողություններին, ինչպիսիք են հարսանիքները, մկրտությունները և այլ տոները: Կարողանում է նաև մասնակցություն ցուցաբերել խաղահրապարակներում, այգիներում, փողոցում կամ հասարակական այլ վայրերում կազմակերպվող միջոցառումներին: Սովորողն առանց որևէ միջամտության մասնակցում է խաղային, ժամանցային, սպորտային, մշակութային միջոցառումներին՝ այցելելով պատկերասրահներ, թանգարաններ, կինոթատրոններ կամ թատրոններ, ինչպես նաև մասնակցություն է

առնչվող արարողություններին, տարաբնույթ հավաքույթներին, ինչպես նաև ցանկացած տեսակի խաղային, սպորտային և ժամանցային միջոցառումներին:

ցուցաբերում դպրոցական և համայնքային մրցակցային օլիմպիադաներին, սպորտային իրադարձություններին միայնակ կամ խմբի կազմում: Սովորողն ունի սիրելի զբաղմունք և նախասիրություններ և կարողանում է ինքնուրույն ներգրավվել դրանց առնչվող միջոցառումներին, ինչպես օրինակ՝ նկարների, մետաղադրամների, քարերի հավաքածուներ կազմելը, արվեստի կամ արհեստի խմբակներ հաճախելը: Մասնակցում է նաև առօրյա հանդիպումներին՝ ընկերներ, ազգականներ (առաջադրանքների, գործողությունների կատարման 0–4% դեպքերում կարող են նկատվել դժվարություններ):

1 միավոր - Սովորողը կարողանում է ինքնուրույն, սակայն փոքր-ինչ դժվարությամբ կամ ուղղորդմամբ (հիշեցում, հուշում՝ հայացքով, ժեստով կամ խոսքով) ներգրավվել համայնքի, սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում, հասարակական ակումբներում կամ էթնիկական տարբեր խմբերում, ծիսակատարություններին, արարողություններին, ինչպիսիք են հարսանիքները, մկրտությունները և այլ տոները: Կարողանում է նաև մասնակցություն ցուցաբերել խաղահրապարակներում կամ հասարակական այլ վայրերում կազմակերպվող միջոցառումներին: Սովորողը երբեմն մեծահասակի ուղղորդմամբ մասնակցում է խաղային, ժամանցային, սպորտային, մշակութային միջոցառումներին՝ այցելելով պատկերասրահներ, թանգարաններ, կինոթատրոններ կամ թատրոններ, ինչպես նաև մասնակցություն է ցուցաբերում դպրոցական և համայնքային մրցակցային օլիմպիադաներին, սպորտային իրադարձություններին միայնակ կամ խմբի կազմում: Սովորողն ունի սիրելի զբաղմունք և նախասիրություններ և կարողանում է ինքնուրույն, սակայն մեծահասակի վերահսկողությամբ ներգրավվել դրանց առնչվող միջոցառումներում, ինչպես օրինակ՝ նկարների, մետաղադրամների, քարերի հավաքածուներ կազմելը, արվեստի կամ արհեստի խմբակներ հաճախելը: Մասնակցում է նաև առօրյա հանդիպումներին՝ ընկերներ, ազգականներ (առաջադրանքների, գործողությունների կատարման 5–24% դեպքերում ունի ուղղորդման կարիք):

2 միավոր - Սովորողը հաճախ դժվարանում է նպատակաուղղված կերպով ինքնուրույն ներգրավվել համայնքային, սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում, հաճախ ունենում է որոշակի աջակցության կարիք հասարակական ակումբներում կամ էթնիկական տարբեր խմբերում, ծիսակատարություններին, արարողություններին (ամուսնություններ, մկրտություններ և այլն) մասնակցություն ցուցաբերելու համար: Դժվարանում է նաև ինքնուրույն մասնակցություն ցուցաբերել խաղահրապարակներում կամ հասարակական այլ վայրերում կազմակերպվող միջոցառումներին, սպորտային իրադարձություններին, կարողանում է մասնակցել խաղային, ժամանցային, սպորտային, մշակութային միջոցառումներին և այցելել պատկերասրահներ, թանգարաններ, կինոթատրոններ կամ թատրոններ միայն մեծահասակի ուղեկցությամբ կամ ստանալով այլ անձի համապատասխան ցուցումներն ու ուղղորդումները: Սովորողն ունի սիրելի զբաղմունք և

նախասիրություններ, սակայն հաճախ դժվարանում է ինքնուրույն ներգրավվել դրանց հետ կապված միջոցառումներում, ինչպես օրինակ՝ նկարների, մետաղադրամների, քարերի հավաքածուներ կազմելը, արվեստի կամ արհեստի խմբակներ հաճախելը: Մասնակցում է առօրյա հանդիպումներին՝ ընկերներ, ազգականներ, միայն մեծահասակի ոչ մշտական աջակցությամբ (առաջադրանքների, գործողությունների կատարման 25–49% դեպքերում ունի աջակցության կարիք):

3 միավոր - Սովորողն ունի համայնքային, սոցիալական կյանքի տարբեր իրադարձություններում, խմբերում ներգրավվելու և մասնակցություն ցուցաբերելու կայուն դժվարություններ: Հասարակական միջոցառումներում, արարողություններում (ամուսնություններ, մկրտություններ և այլն) նվազագույն մասնակցություն ցուցաբերելու համար ունի այլ անձի մշտական աջակցության կարիք: Առանց այլ անձի զգալի աջակցության դժվարանում է անգամ մասնակցություն ցուցաբերել խաղահրապարակներում կազմակերպվող խաղային, ժամանցային, սպորտային իրադարձություններին, կարողանում է այցելել համայնքային հասարակական կամ մշակութային վայրեր միայն մեծահասակի մշտական ուղեկցությամբ և աջակցությամբ: Սովորողը հիմնականում չի ցուցաբերում նախասիրություններ կամ սովորականից շատ է սևեռվում դրանց վրա: Մասնակցում է առօրյա հանդիպումներին՝ ընկերներ, ազգականներ, միայն մեծահասակի մշտական ուղեկցությամբ և աջակցությամբ՝ հաճախ չներգրավվելով կազմակերպված միջոցառումներում (առաջադրանքների, գործողությունների կատարման 50–95% դեպքերում ունի աջակցության կարիք):

4 միավոր – Սովորողն առհասարակ չի կարողանում ներգրավվել համայնքում, կյանքի սոցիալական և քաղաքացիական բնագավառներում կազմակերպվող միջոցառումներին, ինչի արդյունքում ունի այլ անձի ամբողջական աջակցության կարիք ցանկացած տեսակի խաղային, ժամանցային միջոցառումներին տարրական մասնակցություն ցուցաբերելու համար, որը չի ենթադրում դրա համար պահանջվող գործողությունների և առաջադրանքների կատարում (առաջադրանքների, գործողությունների կատարման 95-100% դեպքերում ունի աջակցության կարիք):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը» հաստատելու մասին N 370-Ն հրաման:
2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն):
3. «Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգում. երեխաներ և երիտասարդներ. ՖՄԴ-ԵԵ» Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, © Առողջապահության համաշխարհային կազմակերպություն 2007:

Սվաջյան Ա. Հ., Ադամյան Հ. Ա., Մարգարյան Լ. Հ., Գարեգինյան Ա. Ա.,
Մուրադյան Ռ. Մ, Գրիգորյան Օ. Կ.

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ
ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԵՎ
ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ**

6-10 տարիքային խումբ




ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ



Տառատեսակը՝ GHEA Grapalat: Չափը՝ 21,0 x 29,7:
Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 200:
Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում, Երևան, Դ.Մալյան փողոց 43



ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱՓՈՓՈՒՄԻՆԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

© Հանրապետական մանկավարժափոփոխության կենտրոն (ՀԱԿ)




-  [Facebook.com/hmkyerevan](https://www.facebook.com/hmkyerevan)
-  [Instagram.com/hmk_yerevan](https://www.instagram.com/hmk_yerevan)
-  [YouTube.com/hmkyerevan](https://www.youtube.com/hmkyerevan)

-  hmkentron.yerevan@gmail.com
-  hmk.am



յուրաքանչյուր
երեխայի համար

© Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ)

-  [Facebook.com/UNICEFArmenia](https://www.facebook.com/UNICEFArmenia)
-  [X.com/UNICEFArmenia](https://www.x.com/UNICEFArmenia)
-  [Instagram.com/UNICEF_Armenia](https://www.instagram.com/UNICEF_Armenia)
-  [YouTube.com/UNICEFArmenia](https://www.youtube.com/UNICEFArmenia)

-  yerevan@unicef.org
-  unicef.am

